

5985

3

58(075)  
U-25

EB 2002

29153-42

№ 1 Հրատարակութիւն ԿԱՐՄԱԳԵՏ ԱԲԵԱՆՑԻ № 1

58(075)

0-25

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

Բ Ն Ա Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Դասագիրք երկյասեան եւ միջնակարգ դպրոցների համար

Կ ա զ մ ե ց

Ն ի կ. Ս Ա Ր Գ Ս Ե Ա Ն

Երկրորդ հիմնօվին բարեփոխած ռպագրութիւն

3153

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «Մամուկ», տնօրէններ՝ Մ. Էկրիկեան և Յ. Մայիկեան  
Լոբիս-Մելիքեան փողոց № 22

1921

4053



2010

29153-

## Կ Ա Զ Մ Ո Ղ Ի Կ Ո Ղ Մ Ւ Ց

Բնագիտական առարկանները, մանաւանդ կենդանաբանութիւնն ու բուսաբանութիւնն, այսինքն կենսաբանական գիտութիւնն անցնում էին մինչև վերջին ժամանակներս թէ տարրական և թէ սիջնակարգ գպրոցներում նկարագրական եղանակով: Դասի նիւթ ծառայող կենդանու կամ բոյսի մասին տրում և պահանջւում էր արտաքինը, հազւագիւտ գէպքում նաև ներքինը շօշափող մի քանի նկարագրական տեղեկութիւններ, շատ անգամ անկապ, չոր ու ցամաք և զուրկ միանգամայն պատճառական էիմքերից: Այդ ոգով էին կազմւած նաև այդ առարկաներին վերաբերող գասագրքերը: Խօսք չկայ, որ այդօրինակ դասաւանդութիւնն անկարող էր զարգացնել աշակերտի միտքն ու հոգին. Նա ծանրաբեռնում էր միայն յիշողութիւնը, և դրա հետևանքն ինում էր այն, որ աշակերտը կորցնում էր իր սէրն ու հետաքրքրութիւնը գէպի առարկան և այնքան աշխայժ ու զբաղեցուցիչ գիտութիւնները դառնում էին ձանձրալի ու քննցնող:

Այժմ, սակայն, շնորհիւ մի շարք գիտնական մանկավարժների՝ բնսպիտական առարկաների դասաւանդումը զբւած է նոր ուղիի վրայ. նկարագրութիւնն այժմ երկրորդական տեղ է բըռնում և պատճառականութիւնը, որ առաջ այնքան հեշտութեամբ անտես էր առնուում, կազմում է արդէն դասաւանդութեան առանցքը: Դա կենսաբանական տեսակէտն է, կենդանին կամ բոյսն այդ տեսակէտով աւելի շուտ բացատրում է, քան նկարագրուում: Մեր ներկայ գասագիրքը կազմւած է հէնց այդ ուղղութեամբ: Այստեղ նկարագրութեանն այնքան տեղ է յատկացրած, որչափ անհրաժեշտ է եղել բոյսի առանձնայատկութիւնները բացատրելու համար:

Դասագիրքը պարունակում է իր մէջ բոյսերի մորֆոլոգիան, բնականութիւնը և սիստեմատիկը, անշուշտ չափազանց տարրական ձևով: Սկզբում զետեղւած է մորֆոլոգիան և բնախօսու-



12081-58

թիւնը և ապա սիստիմատիկը: Սիստեմատիկը բնաւ լրիւ չէ. յիշատակւած են միայն նշանաւոր ընտանիքներից ամենայայտնի բոյսերը, այն ևս նրանք, որոնք բանում են նաև մեղ մօտ և կարող են աշակերտութեան անմիջական դիտողութեան նիւթ դառնալ: Բնախօսական երևոյթները բացատրւող փորձերից էլ ընտրւած են այնպիսիները, որոնք հեշտութեամբ կատարելի են մեր պայմաններում և միանգամմայն մատչելի են: Փորձերի և դիտողութեան ժամանակ աշակերտութիւնը պէտք է երեան հանի գործոն մասնակցութիւն: Այդ ճանապարհով միայն նա կարող է ընութեան մասին ճշմարիտ գաղափար կազմել, նա ինքը պէտք է ցանի սերմեր և հետեւ նրա ծրման և զարգացման ամբողջ ընթացքին, դա կարգացնի նրա մէջ ոչ միայն դիտողականութիւն, այլ և առաջ կըերի նրա մէջ վառ հետաքրքրութիւն ու սէր դէպի առարկան:

Դասարանական աշխատանքների հետ միասին պէտք է տեղի ունենան նաև զբոսանքներ, որտեղ աշակերտը կարող է բոյսը դիտել իր հարազատ միջավայրի մէջ: Զրուանքների ժամանակ աշակերտը կծանօթանայ բոյսերի բազմազան յարմարացումների հետ, նոյնպէս և կսովորի նրանց ճանաչել: Պէտք է սովորեցնել նաև հերբարիւմներ կազմել, Դա երեխաների համար կլինի միվերին աստիճանի սիրելի զբաղմունք:

Աւելորդ չենք համարում յայտնել, որ ներկայ դասագիրքը հիմնովին տարբերում է մեր մի քանի տարի առաջ հրատարակած «Բոյս» անունով դասագրքից, տարբերում է թէ նիւթի դասաւորութեամբ և թէ մշակման եղանակով: Այդ փոփոխութեան կարեքը զգացել ենք մենք դասագիրքը գործ ածելու ժամանակ: Դասագիրքը կազմելիս խոշոր չափով օգտւել ենք Տրոյեանովսկու, Շմայլի, Վագների և այլոց դասագրքերից:

Նիկ. Սարգսեան

## ՑԱՆԿ

Կազմողի կողմից	.	.	.	.	.	.	3
Յանկ	.	.	.	.	.	.	5
Վրիպակներ	.	.	.	.	.	.	10

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Կենդանի և անկենդան աշխարհներ	.	.	.	.	.	.	11
Բոյսերը կեանք ունեցող էակներ են	.	.	.	.	.	.	12

## ԲՈՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԸ

Սերմի կազմութիւնը եւ ծլումը.

1. Սերմի կազմութիւնը	.	.	.	.	.	.	17
2. Սերմի ծլումը	.	.	.	.	.	.	18
3. Շաքիլների նշանակութիւնը	.	.	.	.	.	.	19
4. Սիսեռի սերմի կազմութիւնը և ծլումը	.	.	.	.	.	.	21
5. Յորենի սերմի կազմութիւնը և ծլումը	.	.	.	.	.	.	22
6. Ամփոփում	.	.	.	.	.	.	23

Ծլուման անհրաժեշտ պայմանները.

1. Ծլման ունակութւանը	.	.	.	.	.	.	24
2. Զուրն իբրև անհրաժեշտ պայման	.	.	.	.	.	.	25
3. Օդն իբրև անհրաժեշտ պայման	.	.	.	.	.	.	27
4. Զերմութիւնն իբրև անհրաժեշտ պայման	.	.	.	.	.	.	30

Բոյսի ներքին կազմութիւնը.

1. Բջիջ	.	.	.	.	.	.	31
2. Բջիջների մեծութիւնը	.	.	.	.	.	.	32
3. Բջիջի թաղանթը և պարունակութիւնը	.	.	.	.	.	.	33

6

4. Բջիջների բաղմացումը . . . . .	35
5. Բջիջների ձևը և հիւսւածքներ . . . . .	36

**Արմատ.**

1. Արմատի աճումը . . . . .	37
2. Արմատի ծայրապատեանը և մաղմզուկները . . . . .	39
3. Արմատների տեսակները . . . . .	40
4. Արմատի դերը . . . . .	41
5. Արմատային ձնշումը . . . . .	42

Ինչ է ստանում բոյսը հողից.

1. Բոյսի կազմութիւնը . . . . .	44
2. Զբային կուլտուրա . . . . .	46

**Տերեւի կազմութիւնը.**

1. Տերեւների արտաքին ձևը . . . . .	48
2. Տերեւի ներքին կազմութիւնը . . . . .	51

**Տերեւն իբրեւ սննդառութեան գործարան.**

1. Ածխածնի իւրացումը տերեւների միջոցով . . . . .	53
2. Օոլայի տռաջացումը . . . . .	56
3. Լոյսի նշանակութիւնը բոյսի կեանքում . . . . .	59

**Տերեւն իբրեւ շնչառութեան եւ ջրի գոլորշիացման գործարան.**

1. Բոյսերի շնչառութիւնը . . . . .	61
2. Ջրի գոլորշիացումը տերեւներից . . . . .	63
3. Գոլորշիացման արագացման և դանդաղացման համար տերեւների ունեցած յարմարութիւնները . . . . .	64

**Յօղունի աճումը եւ ծեւերը.**

1. Յօղունի աճումը . . . . .	66
2. Յօղունի ճիւղաւորումը . . . . .	67
3. Յօղունի տեսակները . . . . .	69

**Յօղունի կազմովթիւնը եւ ջրի ու սննդարար նիւթերի շարժումը նրա միջով.**

1. Յօղունի կազմութիւնը . . . . .	70
2. Ջրի և սննդարար նիւթերի շարժումը յօղունի միջով . . . . .	74
3. Ի՞նչու է ջուրը բարձրանում յօղունի միջով . . . . .	76

**Յօղունն իբրեւ բազմացման գործարան.**

1. Ստորեկրեայ յօղուններ . . . . .	76
2. Բազմացումն շիւղերով և մատներով . . . . .	80
3. Պատւաստ . . . . .	80

**Ժաղիկների կազմովթիւնը.**

1. Բալենու ծաղկի կազմութիւնը . . . . .	83
--	----

**Ժաղիկների փոշոտումը.**

1. Ծաղկների փոշոտումը և պաղի ու սերմերի առաջացումը . . . . .	87
2. Խաչածե փոշոտումն . . . . .	88
3. Ծաղիկների փոշոտումը միջատների միջոցով . . . . .	90
4. Ծաղիկների փոշոտումը քամու միջոցով . . . . .	91

**Պտուղ եւ սերմ.**

1. Պտուղների զանազան տեսակները . . . . .	93
2. Պտուղների և սերմի տարածումը . . . . .	94

**ԾԱՂԿԱԲԵՐ ԲՈՅԱՐԵՐ**

Տանձենի . . . . .	98
Վայրի վարդենի կամ մասրենի . . . . .	101
Դազար . . . . .	104
Բողկ . . . . .	107
Խաղողի որթ . . . . .	109
Լոբի . . . . .	112
Տիլի . . . . .	116
Խտուտիկ . . . . .	120
Կարտօֆիլ . . . . .	23

Սոխ	127
Ցորեն	128
Շամի	132

## ԱՆՏԱՂԻԿ ԲՈՅԱԵՐ

Պտեր	136
Մամուռ	140
Ջրիմուռներ	143
Շամպինիոն	146
Բակտերիաներ	149

## ՆԿԱՏ-ԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԹՐԵԱ.	ՏԱՂ.	ՏՎԻԱԾ է.	ԳԻՏԻ ԼԻՆԻ.
63	5 ներքենից	կատարել	կատարել
63	4 >	չափով է	չափով չէ
>	1 >	ջրազուկ	ջրազուրկ
90	14 >	փոշոտի	փոշոտւի
97	15 >	զանազան	զանազան
113	2 >	ողջութիւն	ուղղութիւն
114	պատկերի տակ Լոբու տերև գիշերը. Լոբու տերելը ցերեկը.		
>	» Լոբու տերելը ցերեկը. Լոբու տերելը գիշերը.		
126	3 վերենից	կարտօֆելի	կարտօֆելի
>	9 ներքենից	այդ	այդ

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

կենդանի եհ ԱՆԿԵՆԴԱՆ ԱՇԽԱԾՎՀՆԵՐ:— Ամբողջ քնութիւնը բաժանւում է երկու աշխարհների՝ կենդանի և անկենդան: Անկենդան աշխարհի մարմիններն են՝ օդը, ջուրն ու երկիրը, իսկ կենդանի աշխարհի մարմինները՝ բոյսերն ու կենդանիները: Մենք պէտք է զբաղւենք կենդանի աշխարհի ուսումնասիրութեամբ և պէտք է սկսենք բոյսերից:

Բայց նախ քան այդ պարզենք, թէ ինչով է զանազանւում կենդանի աշխարհն անկենդանից: Ինչ վերաբերում է կենդանիներին, այդ զանազանութիւնը մենք իսկոյն կարող ենք ասել: Ամենից առաջ կենդանիները կերակրում, սնւում են և երբ մնում են առանց կերակրի, սովից մենանում են. այդպէս չեն անկենդանները, նրանք սննդի կարիք չունեն: Աննդի նման կենդանիների համար անհրաժեշտ է նաև օդը. կենդանիները շնչում են օդ և առանց դրան խեղդում են, իսկ անկենդանները չեն շնչում: Բացի դրանից, կենդանիները բազմանում են և աճում. նրանց մի մասը կենդանի ձագեր է հանում, միւսները ձւեր են ածում, որոնցից յետոյ դարձեալ ձագեր են դուրս գալիս և այդ ձագերը սնունդ ստանալով՝ աճում մեծանում են և նմանւում իրենց ծնողներին: Այդպէս չեն անկենդանները, նրանք ոչ բազմանում են և ոչ էլ աճում: Սակայն ամենամեծ տարբերութիւնը, որ տեսնում ենք կենդանիների և անկենդանների մէջ, այդ այն է, որ կենդանիները զգում են և իրենց կամքով կարող

են շարժումներ կատարել: Նրանք, օրինակ, զգում են, որ քաղցած են և շարժում են այս ու այն կողմը կերակուր գտնելու համար, զգում են ցուրտ, տաքութիւն և աշխատում են ապաստան գանել յարմարաւոր տեղերում, զգում են նաև ցաւ և փախչում են, երբ ծեծում են կամ երբ թշնամիները հալածում են նրանց: Անկենդանները, սակայն, ոչ զգում են և ոչ էլ իրենց կամքով կարող են որ և է շարժում կատարել: Վերջապէս, բոլոր կենդանիներն ապրելով որոշ ժամանակ՝ վերջը մեռնում են, մինչդեռ անկենդանները մեռնել չունեն և այդ շատ հասկանալի է. նա որ չի ապրում, չի էլ կարող մեռնել: Ուրեմն, կենդանիները սնուում են, շնչում են, բազմանում են, աճում են, զգում են, շարժում են և վերջապէս մեռնում են, իսկ անկենդանները զուրկ են բոլորովին այդ յատկութիւններց: Ահա այն գանազանութիւնը, որ տեսնում ենք կենդանիների և անկենդանների մէջ:

ԲՈՅՍԵՐՆ ԵԽՍ ԿԵԱՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՆ.—ՏԵս-  
ՆԵՆՔ այժմ բոյսերն էլ կեանք ունեցող մարմիններ են,  
այսինքն նրանք էլ ունեն այն բոլոր յատկութիւնները,  
ինչ որ կենդանիները, թէ ոչ:

Որ բոյսերը կերակրում, սնուում են, այդ յայանի է ամենքին, բոլորս էլ գիտենք, որ պարարտ հողում բոյ-  
սերն աւելի լաւ են աճում, մեծանում, քան կաւային և  
աւազային հոգում: Պատճառը հասկանալի է. մի աեղ  
բոյսերը գանում են առատ սնունդ, միւս տեղում ոչ: Գիտենք  
նաև, որ բոյսերը բազմանում են և անում: Նրանք ծաղ-  
կում են և սերմեր տալիս. այդ սերմերն ընկնելով հողի  
մէջ՝ ծլում են և առաջ բերում նոր բոյսեր: Վերջապէս  
զիտենք, որ բոլոր բոյսերն էլ որոշ ժամանակ ապրելուց  
յետոյ՝ չօրանում են, մեռնում: Մեղ մում է ցայց տալ  
այժմ, որ բոյսերն են կենդանիների նման շնչում են,  
զգում են և կարող են շարժումներ կատարել: Որ բոյ-

սերը շնչում են, ցոյց է տալիս հետևեալ փորձը. վերց-  
նում են մի լախբերան անօթ, մէջը դնում տերեներ-  
ունեցող մի քանի ճիւղ և անօթի բերանը փակելով՝ դը-  
նում են մի մութ տեղ: Մի քանի ժամ անցած՝ անօթի  
բերանը բացում են և մէջը մտցնում մի այրւող փայ-  
տիկ. փայտիկն անմիջապէս հանդչում է: Այդ նշան է,  
որ անօթի մէջ թթւածին չկայ, Պարզ է, որ թթւածինը  
կլանել են այնտեղ գտնուղ ճիւղերը: Այնուհետև երբ ա-  
նօթի մէջ ածում են կրածուր և անօթի բերանը փակե-  
լով՝ սկսում են անօթը թափ տալ այս ու այն կողմը,  
թափանցիկ կրաջուրը պղորուում է և կաթի դոյն ստա-  
նում: Այդ էլ նշան է, որ անօթի մէջ կայ մեծ չափով  
ածխաթթու գագ: Կնշանակէ, ճիւղերն վերցնում են ա-  
նօթի մէջ եղած օդից թթւածինն և արձակում իրենցից  
ածխաթթու գագ: Շնչառութեան ժամանակ կենդանիները  
նոյնն են անում. այսինքն օդից վերցնում են թթւածին և  
արձակում ածխաթթու գագ: Ուրեմն, բոյսերն ևս շըն-  
չում են:

Մնում է զգալը և շարժումներ կատարելը, եթէ բոյ-  
սերն այդ երկու ընդունակութիւններն էլ ունենան, այն  
ժամանակ նրանք օժտւած կը լինեն արդէն կենդանի  
էակի բոլոր յատկութիւններով: Առաջին հայեացքից մեզ  
թւում է, թէ բոյսերը զուրկ են այդ երկու ընդունակու-  
թիւններց: Նրանք արմատներով ամրացած են որ և է  
տեղում և մնում են այնտեղ իրենց ամբողջ կեանքի ըն-  
թացքում: Բայց այդ դեռ ոչինչ չի նշանակում. կան մի  
շարք կենդանիներ ևս, օրինակ, կորալները, սպունգները  
և ալին, որոնք նոյնպէս իրենց ամբողջ կեանքում կպած  
են լինում միենոյն տեղին, բայց չնայած դրան, նրանք ի-  
րենց մարմնի որոշ մասերը հարկ եղած ժամանակ շար-  
ժում են և զուրկ չեն զգալու ընդունակութիւնից: Այդ-  
պէս և բոյսերը: Տաք երկրներում տաքրում է մի բոյս-

որ կոչւում է ամօրխած միմոզա. սա ունի ակացիայի նման փետրածև տերևներ, երբ մէկը թէկուզ հէնց թէթէ կերպով կպչում է նրա տերևներին, իսկոյն իրար դիմաց նստած տերևները մօտենում են և կպչում իրար։ Որոշ ժամանակից յետոյ տերևիկները կրկնն հեռանում են և իրենց առաջայ դիրքն ընդունում։ Խսկ երբ խփում են տերևին ուժեղ կերպով, այն ժամանակ տեղի է ունենում ոչ միայն այն, ինչ որ ասացինք, այլ և ամբողջ տերեր ցածրանում է և կպչում ցողունին։ Նոյն ձեռվ շարժում են տերևները և ամբողջ բոյսի վրայ, երբ հարւածի ազգեցութեան տակ ցընցում է ամբողջ բոյսը։



Միմոզայի նիւղը.

Հանդիսա վիճակում և հարւածից յետոյ, պէս մինչեւ որ կրկին արել ծագում է։ Նման զգայնութիւն ունեն նաև մեր սովորական բոյսերը, միայն, ինարկէ, փոքր չափերով։ Մեր սենեակներում պահող բոյսերի տերևները եթէ ուշադրութեամբ դիտենք, կտեսնենք, որ բոլորն էլ դարձած են դէպի սենեամբ։ Այդպէս են, օրինակ, ակացիան, լոբին և այլն։

բոյսերն այնպէս, որ տերևները դառնան դէպի սենեակի ներսը, որոշ ժամանակից յետոյ կտեսնենք, որ նրանք ծուռում և ուղղում են կրկին դէպի լոյսը։ Յայտնի է ամենքին, որ արեածաղկի ծաղիկը շարունակ նայում է արևին. փոխում է արևն իր տեղը, փոխում է և նրա ծաղիկն իր դիրքն և միշտ այնպէս, որ ուղղած լիսի դէպի արևը։ Եատ բոյսերի տերևներ ցերեկը ուղիղ դիրք են ունենում, խսկ գիշերը՝ կախւած, նրանք գիշերը, այսպէս ասած, «քնում են»։ Այդպէս են, օրինակ, ակացիան, լոբին և այլն։


Այդ կողմից աչքի են ընկնում մանաւանդ ծաղիկները. մի քանի բոյսերի ծաղիկներ գիշերն իրենց գլուխները կախում են, օրինակ, զաղարի ծաղկեփունջը։ Մի քանի բոյսերի ծաղիկներ էլ գիշերը փակւում են, օրինակ, խտուտիկի, երիցուկի, տատասկափշի ծաղկեփնջերը։

Այս բոլորը ցոյց են տալիս, որ կենդանու նման բոյսն ևս սնւռում է, շնչում, բազմանում ու աճում, զգում ու շարժում և մեռնում, Ուրեմն, բոյսն էլ կեանք ունեցող մարմին է, ինչպէս կենդանին։

---

Բոյսի մարմինը բաղկացած է գործարաններից, ինչպէս կենդանիներին և ամեն մի գործարան իր հերթին բաղկացած է աւելի մանրիկ մասերից։ Բոյսի այս մանրիկ մասերը շատ անդամ աչքով անհնարին է դիտել. զրա համար գործ է ածւռում մի գործիք, որ իրերը մեծացնում է մի քանի հարիւր, երբեմն նոյն խսկ մի քանի հաղար անդամ։ Այդ գործիքը կոչւում է մանրադիտակ կամ միկրոսկոպ։ Այս գործիքը գիտութեան շատ մեծ ծառայութիւններ է արել։ Եթէ չլինէր այդ գործիքը

բոյսի հետ կապւած երևյթներից շատերը մեղ համար



Մի կրոսկոպ

միանգամայն անհասկանալի կմնային:

## ԲՈՅՍԻ ԿԵԱՆՔԸ


### ՍԵՐՄԻ ԿԱԶՄՈՒԹԻՒԽՆԸ ԵՒ ԾԼՈՒՄԸ

1. ՍԵՐՄԻ ԿԱԶՄՈՒԹԻՒԽՆԸ:—Սերմի կազմութեան հետ ծանօթանալու համար վերցնում ենք որեէ սերմ և քըն-նութեան ենթարկում: Այդ տեսակէտից ամենից յարմար են մեծ սերմերը, օրինակ, լորու, սիսեռի սերմերը:

Ծանօթանանք լորու սերմի հետ: Սա դրսից պատաճ է պատեանով, որ լինում է զանազան գոյների՝ սև, սպիտակ, կարմիր և այլն: Լորու ներքին կազմութիւնը դիտելու համար պէտք է հեռացնենք այդ պատեանը: Դրա համար լորին գցում ենք ջրի մէջ և մի օր պահում այնտեղ: Ջրի մէջ լորին ուռչում, փափկում է: Այդ դրութեան մէջ պատեանը հեշտութեամբ հեռացնում ենք նըրանից: Հեռացնելով պատեանը՝ նկատում ենք, որ սերմը ներսում բաղկացած է երկու հաւասար մասերից, որոնք մի ծալրում միացած են միմեանց հետ: Սերմի այդ մասերը կոչւում են շաբիներն իրար հետ միացած են մի մարմնիկով, որի մի մասը դրսից երևում է: այդ մասը կոչւում է արմատիկ: Դա յետադայում զարգանալով՝ առաջ է բերում լորու արմատը: Երբ հեռացնում ենք շաբիները միմիանցից՝ նկատում ենք, որ արմատիկի հետ միացած է մի բողբոջիկ, բաղկացած երկու սպիտակաւուն տերեխիկներից և մի փորբիկ պտուկից: Բողբոջիկից յետագայում առաջանում է լորու ցողունը և տերեխները: Արմատիկը, բողբոջիկն ու շաբիները միասին կազմում են ապագայ բոյսի սաղմը: Ռւրեմ, լորու սերմը բաղկացած է պատեանից և սաղմից, իսկ սաղմը իր հերթին՝ արմատիկից, բողբոջիկից և շաբիներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐԱԿ  
ԽՍՀՄՀ ԽՍՀՄՀ ԽՍՀՄՀ ԽՍՀՄՀ  
7/11-1922  
Ա. Խ. Խ. Խ. Խ. Խ.

2. ՍԵՐՄԻ ԾԼՈՒՄԸ:—Սերմի ծլումը դիտելու համար անում ենք հետևեալ փորձը: Վերցնում ենք մի քանի տասնեակ լոբու սերմ և երկու շաբաթւայ ընթացքում օրական մի քանի հատ ցանում փափուկ հողի կամ, աւելի լաւ է, խոնաւ փայտի թեփի մէջ. վերջինիս մէջ լոբին ծլում է ճիշտ այնպէս, ինչպէս կծլէր հողի մէջ, այն տարբերութեամբ միայն, որ նրա միջից բոյսը կարելի է հեշտութեամբ դուրս հանել, մինչդեռ հողից հանելու ժամանակ շատ անգամ արմատիկը ֆասուում է: Երկու շաբաթից յետոյ մենք կունենանք մի շաբք՝ ծլման զանազան աստիճանների վրայ գտնուող սերմեր: Նրանցից



մի քանիսը, նոր ցանածները, դեռ թեփի երեսը դուրս եկած չեն լինի, աւելի առաջ ցանածները՝ նոր նոր դուրս կգան թեփի միջից, իսկ ամենահին ցանածները՝ բացած կինեն արդէն իրենց առաջին կանաչ տերեները: Այնուհետև, մէկը միւսի յետեից զգուշութեամբ դուրս հանելով թեփի միջից՝ կնկատենք, թէ ինչպէս ապագայ

բոյսն աստիճանաբար զարգանում է սաղմից: Առաջին երկու երեք օրը սերմը ուռչում է. նա բաւականաչափ մեծանում է, բայց դեռ ևս նրա վրայ կեանքի նշաններ չեն երեսում, միայն արմատիկը մեծանում է և պարզ կերպով երեսում պատեանի տակ: Չորրորդ կամ հինգերորդ օրն արմատիկը այնքան է մեծանում, որ պատում է պատեանը և դուրս գալիս:

Այնուհետև նա հետզհետէ երկարում է և արձակում իրենից կողմանակի ճիւղեր: Այդ ժամանակ սկսում է զարգանալ և բողբոջիկը: Տերեկիները դեռ ևս չեն երեսում. նրանք թագնւած են շաքիների արանքում: Իթէ շաքիները բաժանենք միսեանցից՝ կնկատենք, որ տերեկիները նրանց արանքում բաւականաչափ մեծացել են: Երբ արմատիկն երկարանում է և ճիւղեր արձակելով՝ ամրանում է հողի կամ թեփի մէջ, շաքիները սկսում են հետզհետէ դուրս գալ լոյս աշխարհ:

Հողից դուրս գալու դործում նրանց օգնում է ցողունիկը, որը աճելով սկսում է ազեղի պէս կորանալ: Առ իր աղեղնաձեւ մասով հողը կամ թեփը պատռելով՝ ճանապարհ է բացում շաքիների համար: Լոյս աշխարհ եկած շաքիները դեռ ևս նստած են լինում իրար վրայ և դէպի ցած թեքւած, բայց նրանց արանքից դուրս են գալիս առաջին տերեկիները, որոնք հետզհետէ կանաչում են: Այնուհետև ցօղունը կամաց-կամաց ուղղուում է. բացւում են և շաքիները: Դրա հետ միասին բացւում են առաջին և արդէն կանաչած տերեկիները: Շաքիները հողից կամ թեփից դուրս գալուց յետոյ սկսում են հետզհետէ կանաչել և բարակել. վերջը նրանք սովորական կանաչ տերեկիների են նմանւում: Սակայն, շաքիներն երկար չեն մնում. որոշ ժամանակից յետոյ նրանք կուչկչատում են, թառամում և ապա թափւում:

3. ՇԱՔԻԼԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:—Շաքիներն, ինչ-

պէս տեսանք, սկզբում լինում են հաստ ու մսոտ։ Նըրանք լցւած են լինում սպիտակ ալիւրային նիւթով։ հէնց այդ նիւթի համար է, որ մենք լորին գործ ենք ածում իբրև կերակուր։ Սակայն, ինչքան սերմի ծլումն առաջ է գնում, այնքան շաքիները բարակում են։ նրանց ալիւրային նիւթը հետզհետէ պակասում է։ Օդի մէջ դուրս գալուց յետոյ նրանք բոլորովին բարակում են, վերջն էլ կուչկչատում, թառամում և թափում։ Բայց հէնց այդ ժամանակ բաւականին զարգանում է սաղմը։ նրա արմատիկը երկարում, խորանում է հողի մէջ և արձակում իրենից կողմանակի ճիւղեր։ բողբոջիկը նոյնպէս մեծանում է։ նա դուրս է գալիս լոյս աշխարհ և տալիս կանաչ տերեիներ։ Ո՞րտեղից է վերցնում սաղմն իր մնունդը։ Մեր սերմերը գտնուում էին թեփի մէջ, որտեղ ոչ մի մնունդ չկար, մինչդեռ նրանց սաղմն աճում, զարգանում է։ Պարզ է, որ մնողի միակ աղբիւրը պէտք է շաքիները լինեն։ Եւ իրօք, եթէ հողից նոր դուրս եկած բոյսի շաքիները պոկենք, բոյսը կթառամի։ Պատճառը հասկանալի է։ Բոյսը դեռ ևս այնքան չէ զարգացած, որ ինքն իր մնունդը գտնի, իսկ շաքիներն էլ, որտեղից պիտի վերցնէր նա անհրաժեշտ մնունդը, չկան։ նրանք պոկւած են եթէ կարենք շաքիների կէսը, առանց սաղմին որևէ է մնաս հասցնելու և այդ դրութեամբ գնենք հողի մէջ, սաղմը կրկին կզարդանայ, բայց շատ թոյլ և քիչ մնացած կթառամի, անշուշտ, մնողի պակասութեան պատճառվ։ Ուրեմն, շաքիները սաղմի համար մնողի շտեմարաններ են, որտեղից օգտուում է նա մինչև որ զարգանալով՝ հնարաւորութիւն է ստանում ինքն իր մնունդը գտնելու։ Հէնց այս է պատճառը, որ սաղմի զարգանալու հետ միասին՝ շաքիները հետզհետէ բարակում են և վերջն էլ, երբ բոլորովին զրկւած են լինում իրենց մնըն-

դարար նիւթերից, թառամում են և իբրև անպէտք բաներ՝ թափում են։

4. ՍԻՍԵՐԻ ՍԵՐՄԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԾԼՈՒՄԸ։ — Սիսերի սերմն ունի նոյն կազմութիւնը, ինչ որ լորունը։ նա նոյնպէս զրսից պատաժ է պատեանով, որ ջրի մէջ որոշ ժամանակ մնալուց յետոյ՝ հեշտութեամբ հեռացնում է։ Պատեանի տակ գտնուում է սաղմը՝ բաղկացած երկու մսոտ շաքիներից, զրսից նկատելի արմատիկից։ Սիսերի սերմի ծլումն ևսկատարուում է այնպէս, ինչպէս լորունը։ Հողի կամ խոնաւ փայտի թեփի մէջ դրած սերմերը սկզբում ուռչում են։ և ուռչում են չափազանց ուժեղ չափերով։ Եթէ վերցնենք մի կաթսայ, լցնենք սիսեռով և մինչև պոռունգները ջրով լցնենք ու կաթսան տախտակով ծածկելուց յետոյ՝ գնենք նրա վրայ մի հինգ փութանոց ծանրութիւն, սերմերն ուռչելով՝ կրարձրացնեն տախտակը ծանրութեան հետ միասին։ Իսկ եթէ կաթսայի փոխարէն վերցնենք ապակեայ շիշ, որոշ ժամանակից յետոյ, երբ սերմերը ուռչեն, շիշը կպայմի։ Սերմն ուռչելուց յետոյ, սկսում է զարգանալ արմատիկը, որը պատռում է պատեանը և ցած ուղղուում։ Այնուհետև զարգանում է բողբոջիկը։ սա դուրս է գալիս շաքիների արանքից, կորանում աղեղի ձևով և գնալով դէպի վեր՝ հանում է իր տերեկիները լոյս աշխարհ։ Շաքիները, սակայն, մնում են հողի տակ, մինչդեռ լորունը, ինչպէս տեսանք, բողբոջիկի հետ միասին դուրս են զալիս օդի մէջ։ Հէնց սըրանով է տարբերուում սիսերի սերմի ծլումը լորու սերմի ծլումից։

Բոյսերի մի մասի սերմերը ճիշտ նոյն կազմութիւնըն ունին, ինչ որ լորու և սիսեռի սերմերը։ Նրանց սաղմն ևս բաղկացած է բողբոջիկից, արմատիկից և եր-

կու շաքիլներից, որոնց մէջ ամբարւած են լինում նորածիլ բոյսի համար սննդարար նիւթեր:

5. ՑՈՐԵՆԻ ՍԵՐՄԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԾԼՈՒՄԸ: — Ցորենի սերմն ունի բոլորովին այլ կազմութիւն, քան լուբումը և սիսեռինը: Նա ունի երկարաւուն ձե, մի ծայրը սուր, միւսը՝ բութ: Նրա մի երեսն ուռուցիկ է, միւսը՝ տափակ: Այս տափակ երեսի վրայ, սերմի ամբողջ երկարութեամբ անցնում է մի ակօսիկ: Սուր ծայրի մօտ, ուռուցիկ երեսի վրայ՝ կայ մի փոքրիկ մաս, որ նկատելի կերպով բաժանւում է շրջապատից. այդտեղ գտրնուում է սերմի ուաղմը: Զրի մէջ երկու օր պահած սերմը, որ բաւականաչափ ուռած ու փափկած է լինում, եթէ կտրենք ակօսիկի ուղղութեամբ, կնկատենք, որ սազմը բաղկացած է արմատիկից և ծայրում սրացող բողբոջիկից: Վերջինս յենւած է մի բարակ եռանկիւնի թիթեղիկի վրայ, որը բաժանում է սազմը սերմի մնացած մասից: Այդ թիթեղիկը կոչւում է վահանիկ: դա ցորենի սերմի միակ շաքիլն է: Աւրեմն, ցորենի սերմի սազմը բաղկացած է բողբոջիկից, արմատիկից, և միայն մի հատիկ շաքիլից: Ցորենի շաքիլն իր մէջ ծիլի համար սննդարար նիւթեր չի պարունակում: Այդ նիւթերի պաշարը գտնուում է շաքիլից, ուրեմն և սազմից դուրս. նա լըցնում է սերմի միւս մասը: Սադմն իր շաքիլով յենւած է միայն այդ պաշարի վրայ: Լաւ ուռած սերմերից սազմը հեշտութեամբ կարելի է բաժանել սերմի միւս մասից:

Ցորենի սերմի ծլումը դիաելու համար անում են հետևեալ փորձը: Վերցնում են ցորենի հատիկներ և թողնում են, որ ծլեն՝ ոչ թէ հողի կամ թեփի մէջ, այլ ուղղակի օղի մէջ, հաստ ծծան թղթի վրայ: Դրա համար թէյի բաժանը մինչեւ երեք քառորդը լցնում են ջրով և ծածկում բաժանի երեսը ծծան թղթով: Վերջինս կտրում են այնպէս որ փոքր ինչ աւելի մեծ լինի, քան բաժանի

բերանը և ունենայ երկուսից մինչեւ չորս ծայր: Բաժակի երեսը թղթով ծածկելու ժամանակ այդ ծայրերը մըտցնում են ջրի մէջ: Այնուհետև ծծան թղթի վրայ շինում են փոքրիկ անցքեր և նրանց մէջ դնում ցորենի հատիկները: Զրի մէջ մտցրած ծայրերով ջուրը ծծւում և տարածւում է ամբողջ թղթի վրայ: Ցորենի հատիկները ծծելով այդ ջուրը՝ սկսում են ծլել: Եթէ հատիկները դնենք թղթի վրայ ոչ թէ միաժամանակ, այլ մի շաբաթւայ ընթացքում, ամեն օր մի քանիսը, այն ժամանակ կարող ենք դիտել հատիկների ծլման զանազան աստիճանները: Փորձը ցոյց է տւել, որ սկզբում հատիկներն ուռչում են, ապա երկրորդ կամ երրորդ օրը սըկսում է զարգանալ արմատիկը, որը պատերով պատեանը դուրս է գալիս: Այդ արմատիկը չի ճիւղաւորւում: Շուտով, սակայն, սաղմն արձակում է իրենից ուրիշ նոր արմատիկներ, այնպէս որ քիչ անցած ծիլն ունենում է թելանման արմատիկների մի ամբողջ փունջ: Արմատիկի հետ միաժամանակ զարգանում է և բողբոջիկը. սա նոյնպէս պատռում է պատեանը և դուրս գալիս: Բողբոջիկը նմանուում է մի խողովակի: Կտրելով այդ խողովակն իր երկայնութեամբ՝ կնկատենք, որ նա բաղկացած է ոլորւած և մէկը միւսի մէջ գանւող տերեներից, որոնք հետզհետէ, իրար յետեկից բացւում են: Հատիկը ծիլի զարգացման հետ միասին կուչկչատում է, որովհետև ծիլը շաքիլի միջով ծծում է նրա մէջ ամբարւած սննդարար նիւթերը: Եթէ բոլոր նիւթերը նրանից դուրս են գալիս. նա իբրև անպէտք մի մարմին ընկնում է: Ցորենի շաքիլը մնում է հողի մէջ և երբէք դուրս չի գալիս:

Հաճարի, գարու, վարսակի և եղիպտացորենի սերմերն ունեն նոյն կազմութիւնը և ծլում են ճիշտ այնպէս, ինչպէս ցորենի սերմը կամ հատիկը:

6. ԱՄՓՈՓՈՒՄՆ:—Ծանօթանալով զանազան սերմերի

կազմութեան և ծլման ձևերի հետ՝ տեսնուժ ենք, որ բոլոր սերմերն էլ ունեն իրենց մէջ սաղմ՝ բաղկացած արմատիկից, բողբոջիկից և շաքիլներից։ Միայն մի քանի սերմեր ունեն մի հատիկ շաքիլ միւսները՝ երկու շաքիլ։ Կան բոյսեր էլ, որ ունեն երկուսից աւելի շաքիլներ։ Շաքիլների թւի համաձայն բոյսեր բաժանւում են միաշեմ երկշաքիլ և բազմաշաքիլ բոյսերի։ Մեր պաղատու ծառերը, նոյնպէս ընդեղէնները երկշաքիլ են, իսկ փշատերև բոյսերը՝ օրինակ, շամին, եղենին և այլն, բազմաշաքիլ են։ Այնուհետև տեսնուժ ենք, որ բոլոր սերմերի մէջ կայ մննդարար նիւթերի պաշար։ Այդ պաշարն երկշաքիլների սերմերի մէջ ամբարւած է շաքիլներում, ասել է, սաղմի մէջ, իսկ միաշաքիլների մէջ՝ սաղմից գուրս։ Բազմաշաքիլների սերմերի մէջ ևս պաշարը գրանուած է սաղմից գուրս։ Այդ պաշարն ահազին նշանակութիւն ունի, առանց դրան ծիլը չէր կարող աճել, որովհետև անկարող է զեռ ևս ինքնուրոյն կերպով իրեն համար անունդ գտնել։ Բացի դըանից, տեսնուժ ենք նաև, որ բոլոր սերմերը պատած են ամուր պատեանով, որ պաշտպանուած է սաղմը զանազան վտանգներից։

## ԾԼՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԾԼՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ. — Մենք ծանօթացանք սերմերի կազմութեան և ծլման հետ. այժմ տեսնենք, թէ ծլման համար ինչպիսի պայմաններ են անհրաժեշտ։

Առաջին անհրաժեշտ պայմանն այն է, որ սերմերը ողջ լինեն։ Ինչպէս ամեն մի էակ, այնպէս էլ սերմերն ժամանակի տեսակէտից սահմանափակ կեանք ունեն։ Ժամանակը լրանալուց յետոյ՝ էակների նման սերմերը ևս մեռնուած են։ Մեռած սերմերը ծլել չեն կարող, նըրանք զրկուում են, այսպէս առած, ծլելու ունակութիւնից, եթէ ցանենք հինգ տարւայ հաճարի սերմը, չի ծլի,

որովհետև նա ընդամենը 2 կամ 3 տարի է ապրում։ Կաղնու սերմն ապրում է մի տարի, բարաւունը՝ մի քանի ամիս, իսկ ուսենու սերմը՝ միայն մի քանի շաբաթ։ Մի քանի բոյսերի սերմեր ապրում են բաւական երկար ժամանակ։ Այսպէս, օրինակ, վարսակի սերմն իր ծլելու ունակութիւնը պահպանում է ամբողջ 10—12 տարի, ցորենի հատիկը՝ 20, երբեմն էլ աւելի, իսկ լոբու, սիսեռի, իւաշխաշի և ծխախոտի սերմերը՝ մի քանի տասնեակ, նոյնիսկ հարիւրաւոր տարիներ։

Ինչպէս էակներին, այնպէս էլ սերմերը կարելի է մեռնել զանազան միջոցներով, օրինակ, թունաւորելով կամ ենթարկելով ջերմութեան բարձր աստիճանների։ Բոված արևածագի սերմը կամ ցորենի, սուրճի հատիկը երբէք չեն կարող ծլել, որովհետև նրանք արդէն մեռած են։

2. ԶՈՒՐՆ ԻԲՐԵՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ. — Ծլելու համար անհրաժեշտ է և ջուր։ Սաղմը մնուած է միայն հեղուկ դրութեան մէջ գտնուող նիւթերով։ Բայց ինչպէս Այս հարցին պատասխանելու համար նախ և առաջ պիտի իմանանք, թէ սերմերում գտնուող սննդարար նիւթերն ինչ կազմութիւն ունեն։ Ուսումնասիրութիւնը ցոյց է տւել, որ տարբեր սերմերի մէջ գտնուում են տարբեր սննդարար նիւթեր։ Այսպէս, օրինակ, ցորենի, հաճարի, վարսակի, գարու մէջ այդ նիւթերի մեծ մասը օվլայ է։ Եւ այդ կարելի է ապացուցել փորձով։ Կվերցնենք ափաէյի մէջ մի թէյի գդալ ցորենի ալիւր, որ ստացւում է, ինչպէս գիտենք, ցորենի հատիկների մէջ եղած սննդարար նիւթից, կածենք նրա վրայ քիչ սառը ջուր և մի բարտկ ձողիկով կխառնենք այնքան, մինչև որ ստացւի թանձր խմոր։ Ապա կվերցնենք ջրով գրեթէ լցւած մի բաժակ, երեսը կծածկենք մի բարակ քողով, այնպէս որ վերջինս փոքր ինչ կախւած լինի դէպի ներս և շօշափի

Ջրի մակերեսոյթը, Այնուհետև կդնենք այդ քօղի վրայ մեր պատրաստած խմորից մի փոքրիկ կտոր և կսկսենք մատով կամ ձողիկով խմորի գունդը շուռ ու մուռ տալ քօղի վրայ: Փոքր ինչ անցած՝ գնդից ջրի մէջ կանցնեն ալիւրային նիւթի փոքրիկ սպիտակ մասնիկներ, որոնք և ջուրը կպղտորացնեն: Խմորի գունդը գնալով հետզհետէ կփոքրանայ և 15—20 լոպէից յետոյ, տակը կմնայ դեղնաւուն գոյն ունեցող մածուցիկ մի նիւթ, իսկ բաժակի ջուրը կընդունի սպիտակ կաթնային գոյն:

Խմորի գնդից հեռացող մասնիկներն ոչ այլ ինչ են, բայց եթէ օսլայ: Ցոյց տալու համար, որ այդ մասնիկներն իրօք օսլայ են, կարելի է կատարել մի փորձ: Օսլան այն յատկութիւնն ունի, որ երբ նրա վրայ եօդ են ածում, նա իսկոյն կապտում է: Եթէ վերցնենք մի բաժակի մէջ գտնուող կաթնագոյն հեղուկից մի քիչ և նրա վրայ կաթեցնենք մի կաթիլ եօդ, հեղուկն իսկոյն գեղեցիկ կատոյտ գոյն կընդունի. այդ արդէն ալացոյց է, որ սպիտակ մասնիկներն օսլայ են եղել: Եթէ բաժակի հեղուկը որոշ ժամանակ հանգիստ գրութեան մէջ թողնենք, այդ սպիտակ մասնիկները բոլորը կնսուեն տակը: Դրանից յետոյ ջուրը կարող ենք թափել և նստուածքը չորացնելով՝ ստանալ սովորական օսլայ:

Խմորի գնդի տակը մնացած մածուցիկ գանգւածը մննդարար նիւթ է: Այդ նիւթը նման լինելով իր կազմութեամբ ձւի սպիտակուցին՝ կոչւում է սպիտակուցային նիւթ: Օսլայի հետ միասին շատ սպիտակուցային նիւթեր են պարունակում լոբու, սիսեռի և մի քանի այլ բոյսերի սերմեր:

Մի քանի սերմեր էլ, օրինակ, արեածաղկի, կտաւատի, վուշի սերմերը պարունակում են իրենց մէջ սաղմի համար իբրև սնունդ՝ իւղային նիւթեր: Եթէ վերցնենք արեածաղկի սերմը և ճնշելով՝ տրորենք սպիտակ

թղթի վրայ, կստանանք վերջինիս վրայ իւղային բիծ և Այսպէս, ուրեմն, սաղմի համար սերմերի մէջ լինում են երեք տեսակի մննդարար նիւթեր՝ օսլայ, սպիտակուցային նիւթեր եւ իւղեր:

Այս մննդարար նիւթերից և ոչ մէկը չի լուծում ջրի մէջ: Ձւի սպիտակուցը, երբ ածում ենք ջրի մէջ, նստում է տակը և երբէք չի լուծում: Ձի լուծում և իւղը, նա լող է տալիս ջրի երեսին, առանց նոյն իսկ նրա հետ խառնելու: Ինչպէս տեսանք, չի լուծում նաև օսլան, նրա փոքրիկ մասնիկները նախ պղտորութիւն են առաջ բերում և վարջն էլ նստում են անօթի յատակին: Բայց չէ որ սաղմը միայն հեղուկային նիւթերով է սընւում: Ի՞նչպէս է, ուրեմն, օգաւում նա այդ նիւթերից, եթէ դրանք չեն լուծում ջրի մէջ: Պարզ է, որ այդ նիւթերը պէտք է փոխեն իրենց բնոյթը, նրանք պէտք է լուծելի գառնան: Եւ այդպէս էլ լինում է: Զրի մէջ ըստ լուծուղ տյդ նիւթերը փոխարկելում են լուծելի նիւթերի: Եյդ փոխարկումը պարզ կերպով երեսում է մանաւանդ հացարոյսերի սերմերի վրայ: Վերջիներս, ինչպէս գիտենք, լիքն են օսլայով, որը ջրի մէջ չի լուծում: Սերմի ծլման ժամանակ այդ օսլան հետզհետէ փոխարկելում է շաքարի, մի նիւթի, որ հեշտութեամբ լուծում է ջրի մէջ: Որ այդ, իրօք, այդպէս է, կարող ենք հաստատել փորձով գարու չոր հատիկները ծամելիս ոչ մի քաղցրութիւն չենք զգում, մինչդեռ երբ ծամում ենք ծլած հատիկները, իսկոյն զգում ենք քաղցր համ: Պարզ է, որ օսլայի մի մասը ծլած հատիկների մէջ փոխարկել է շաքարի:

Ուրեմն, որպէսզի ծլող սերմերի մէջ եղած շլուծող նիւթերը փոխարկեն լուծելի սիւթերի և լուծելով՝ ունունդ գառնան սաղմի համար, անհրաժեշտ է ջուր:

3. ՕՐՆ ԻԲՐԵՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ:—Բացի ջրից, ծըռող սերմերի համար անհրաժեշտ է և օդ: Առանց օդի սեր:

մերը ծլել չեն կարող: Եթէ լորու սերմերն ածենք ջրով  
լիբը շի մէջ, երբէք չեն ծլի: Օդի անհրաժեշտութիւնը  
կարող ենք ցոյց տալ և մի այլ փորձով: Կվերցնենք եր-  
կու լայնաբերան շիշ, երկուսի յատակին էլ կփռենք բամ-  
բակ կամ մի քանի թերթ ծծան թուղթ, ապա կխոնաւա-  
ցնենք այս բամբակը կամ ծծան թուղթը և շաղ կտանք  
նրանց վրայ ցորենի հատիկներ: Շշերի բերանը եթէ բաց  
թողնենք, երկու կամ երեք օրից յետոյ հատիկները կրս-  
կան ծլել: Երբ նրանք կարձակեն արմատիկներ և ցողուն-  
ներ, շներից մէկի բերանը կփակենք խցանով այնպէս,  
որ այլիս օդ չմտնի ներս: Մի քանի օրից յետոյ կնկա-  
տենք, որ բաց շնի մէջ ծլումն առաջ է գնում, և ծիլերն  
արձակում են կանաչ տերեկիկներ, մինչդեռ փակ  
շնի մէջ սերմերի ծլումը կանգ է առնում. նրանք մնում  
են նոյն վիճակում, ինչ վիճակում, որ կային մինչև շնի  
բերանը փակելը:

Բայց ինչու համար օդն անհրաժեշտ է սերմերի հա-  
մար: Այս հարցին պատասխանելու համար, շարունակենք  
մեր փորձը: Բացենք մեր փակած շիշը, որտեղ սերմերի  
ծլումը դադարել էր և զգուշութեամբ մտցնենք նրա մէջ  
մի վառող փայտիկ: Փայտիկն իսկոյն կհանգչի: Պարզ է,  
որ նրա մէջ այլիս թթւածին չկայ, ծլող սերմերը կլանել  
են այն: Բայց ինչ է առաջացել թթւածինի փոխարէն:  
Այդ իմանալու համար, նոյն շնի բերանին կդնենք երկու  
անցք ունեցող խցան, ապա սրա մի անցքի միջով կմըտ-  
ցնենք շնի մէջ մի ձագար, իսկ միւսով մի կոր խողովակ,  
որի ծայրին հազցրած ըէզինէ խողովակը կմտցնենք կրա-  
ջով լիքը մի բաժակի մէջ: Երբ ձագարի միջով ջուր  
ածենք շնի մէջ, վերջինից օդը դուրս կգայ և խողովա-  
կով կմտնի կրաջը լիքը բաժակի մէջ: Կրաջուրն իսկոյն  
կսկսի պղառը ել. այդ արդէն նշան է, որ շնից դուրս եկող  
օդը պարունակում է իր մէջ մեծ չափերով ածխաթթու:

Կոշանակէ, շնի մէջ թթւածնի փոխարէն առաջացել է  
ածխաթթու գազ: Այսպիսով տեսնում ենք, որ սերմերը  
ծլելու ժամանակ կլանում են օդից թթւածին և արձակում  
իրենցից ածխաթթու գազ: Ուրեմն, նրանք շնչում են.  
ասելէ, օդն անհրաժեշտ է շնչառութեան համար:

Բայց ինչու պէտք է շնչեն ծլող սերմերը: Շնչառու-  
թիւնն ոչ այլ ինչ է, բայց եթէ այրումն: Խնչպէս որ  
այրման ժամանակ այրուղ մարմնի ածխածինը միանում է  
օդի թթւածնի հետ և առաջ բերում ածխաթթու գազ,  
դրա հետ միասին և շերմութիւն, այնպէս էլ շնչառու-  
թեան ժամանակ շնչող մարմնի մէջ գտնող ածխածինը  
միանում է օդի թթւածնի հետ և առաջ բերում դարձեալ  
ածխաթթու գազ և շերմութիւն: Տարբերութիւնը միայն  
նրա մէջ է, որ այրման ժամանակ ածխածնի միացումը  
թթւածնի հետ աւելի աբագ է կատարւում, դրա համար  
էլ առաջանում է մեծ չափով շերմութիւն, մինչդեռ շնչա-  
ռութեան ժամանակ այդ միացման գործողութիւնը շատ  
դանդաղ է կատարւում, ուստի առաջացող շերմութիւնն  
էլ քիչ է լինում:

Շնչառութիւնից առաջացող շերմութիւնը շատ ան-  
հրաժեշտ է ծլող սերմերի համար: Այդ շերմութեամբ  
նախ տաքանում են նրանք և ապա, որ գլխաւորն է, շեր-  
մութիւնը նրանց ոյժ է տալիս: Որ ծլող սերմերի շնչա-  
ռութեան ժամանակ շերմութիւն է առաջանում, կարելի  
տեսնել հէնց հետեւել փորձից: Եթէ վերցնենք մի բանկա,  
մինչև կէսը լցնենք ցորենի ծլող հատիկներով և սրանց  
մէջը մտցնենք մի շերմաչափ, կտեսնենք, որ այսուեղ  
բարեխառնութիւնը մէկ կամ երկու աստիճանով աւելի  
բարձր է, քան ըջապատինը:

Զերմաւթիւնը ծլող սերմերին տալիս է և ոյժ: Այդ  
ոյժն անհրաժեշտ է որոշ աշխատանք կատարելու համար,  
իսկ ծլող սերմերը բաւականի մեծ աշխատանք ունեն կա-  
տարելու: Նրանք պէտք է իրենց մէջ գտնուած շլուծող

նիւթերը փոխարկեն լուծելի նիւթերի, ապա այդ նիւթերը լուծւած վիճակում մղեն դէպի սաղմը և այնուհետև, երբ սաղմը զարգանում է, նրա ցողունը պէտք է պատրուի հողը՝ լոյս աշխարհ դուրս գալու համար, միւս կողմից էլ արժատիկը ծակելով հողը՝ պէտք է խորանայ և ամրանայ նրա մէջ:

Այսպիսով տեսնում ենք, որ շնչառութեան ժամանակ ջերմութիւն և ոյժ ստանալու համար ծլող սերմերը ծախսում են իրենց ածխածնի մի մասը. այս պատճառով էլ նրանց քաշը անպատճառ պիտի պակսի, թէպէտ նրանց ծիլը հետզհետէ մեծանում է: Եւ իսկապէս, եթէ վերցնենք որոշ թւով ցորենի կամ սիսեռի սերմեր, չոր վիճակում կշռենք և ապա ծլելուց յետոյ, երբ սկսում են նրանք կանաչել, չորացնենք իրենց արժատիկներով ու ցողուններով և կրկին կշռենք, կնկատենք, որ նրանց քաշը պակսել է: Քաշի մէջ եղած տարբերութիւնը ցոյց կտայ, թէ սերմերն ինչքան ածխածին են ծախսել շընչառութեան վրայ՝ ջերմութիւն և ոյժ ստանալու համար:

4. ԶԵՐՄՈՒԹԻՒՆՆ ԻԲՐԵՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ:— Բացի ջրից և օդից, ծլող սերմերի համար անհրաժեշտ է նաև որոշ քանակութեամբ ջերմութիւն: 5 կամ 6 աստիճանի վրայ սիսեռի կամ լորու սերմերը չեն ծլում: Նըրանց ծլումը սկսում է 8—10 աստիճանի վրայ, այն ևս շատ դանդաղ: Այնուհետև ինչքան բարեխառնութիւնը բարձրանում է, այնքան ծլումն աւելի արագանում է: Լորու և սիսեռի սերմերն ամենայաջող կերպով ծլում են 30 աստիճանի վրայ. սակայն, դրանից աւելի բարձր բարեխառնութեան մէջ նրանց ծլումը կրկին սկսում է դանդաղել, իսկ 45 աստիճանի վրայ բոլորովին դադարում է: Ճիշտ այդպէս, միւս բոյսերի սերմերի ծլման համար ևս անհրաժեշտ է որոշ աստիճանի տաքութիւն: Գարու, համարի և վարսակի սերմերը, օրինակ, սկսում են ծլել 3—4 աստիճանի վրայ, վարունգի, սեխի և ձմե-

րուկի սերմերը՝ 14—16 աստիճանի վրայ: 30 աստիճանը բոլոր տեսակի սերմերի ծլման համար ամենալաւ բարեխառնութիւնն է: 50-ից բարձր աստիճանի բարեխառնութեան մէջ ոչ մի սերմ չի ծլում:

Թէ բարեխառնութիւնն ինչքան մեծ ազգեցութիւն ունի սերմերի ծլման վրայ, երկում է հետևեալ փորձից: Եթէ վերցնենք հաճարի հատիկներ և նրանց մի մասը թողնենք ծլի 5—6 աստիճանի, միւս մասը՝ 20—25 աստիճանի բարեխառնութեան մէջ, կտեսնենք, որ առաջինները ծլում են 10—12 օրից յետոյ, իսկ վերջինները, միայն մի օրից յետոյ:

Սերմերի ծլման համար բացի ծլման ունակութիւնից, ջրից, օդից և որոշ քանակութեամբ ջերմութիւնից, ուրիշ ոչինչ պէտք չէ: Լոյսը, օրինակ, ոչ մի նշանակութիւն չունի: Սերմերը նոյն ձեռվ ծլում են թէ մթութեան և թէ լոյսի մէջ: Նշանակութիւն չունի սերմերի ծլման համար նաև հողը, որովհետեւ սերմի մէջ սաղմի համար կան պատրաստի սննդարարնիւթեր: Եւ իսկապէս ինչպէս տեսանք, սերմերը ծլում են փայտի թեփի մէջ, խոնաւ ծծան թղթի կամ բամբակի վրայ. բայց պէտք է ասենք, որ նրանք կարող են ծլել նաև աղիւսի և ապակու աւագի և կտմ ուղղակի օդի մէջ:

### ԲՈՅՄԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

1. ԲԶԻՉ:— Բոյսի ներքին կազմութեան հետ ծանօթանալու համար սենք անպայման պէտք է դիմենք մանրաղիտակ կամ միկրոսկոպ կոչւած դործիքի օգնութեան: Այս գործիքը դիտելի առարկաները մեր աչքի համար մեծացնում է ոչ միայն տասնեակ, այլ հարիւրաւոր ու հազարաւոր անգամ. ահա այդ պատճառով էլ հնարաւորութիւնն է տալիս մեզ զննութեան ենթարկելու բոյսի ամենափոքրիկ մասերն անգամ: Դիտելով այս գործիքի միջոցով բոյսի որևէ է մասից՝ ածելիի միջոցով կտրւած

շափազանց բարակ շերտիկը՝ նկատում ենք, որ նա բաղկացած է վանդակիկներից։ Այդ վանդակիկները շատ նըման լինելով մեղքահացի խորիսխի բջիջներին, կոչում են բջիջներ։ Իւրաքանչիւր բջիջ մի քսակ է՝ լցւած կիսահեղուկ նիւթով, որ կոչում է պրոտոպլազմա կամ ուղղակի պլազմա։ Քսակի պատերը կազմում են բջիջի բաղանքը, բոյսի որ մասն էլ դիտելու լինենք մանրադիտակով՝ արմատը, ցողունը, ծաղիկը թէ պտուղը մինոյն է, կնէատենք, որ բոլորն էլ բաղկացած են բջիջներից։ առարերութիւնը միայն նրանց ձեի և մեծութեան մէջ կլինի, ուրիշ ոչինչ։ Ուրեմն, բոյսը կազմւած է բջիջներից, ճիշտ այնպէս, ինչպէս տունը քարի մեծ ու փոքր կտորներից կամ աղիւսներից։ Եւ ինչպէս որ տան աղիւսները կամ բարի կտորները միմիանց հետ միացնող շաղախը հեռացրած ժամանակ, տունը փուլ է գալիս, այնպէս էլ, եթէ հեռացւի բջիջները միմիանց հետ միացնող նիւթը, բոյսը փուլ կգայ, տալով մանրիկ բջիջների կոյտեր։

2. Բջիջների Մեծութիւնը։ — Բջիջներն առնասարակ այնքան փոքր են, որ նրանց նասրաւոր է տեսնել միայն մանրադիտակով, սակայն, լինում են և այնպիսիները, որոնց կարելի է տեսնել և հասարակ աչքով։ Այսպէս, օրինակ, լու հասած ձմերուկի միջուկը բաղկացած է աչքի համար պարզ տեսանելի փոքրիկ մասնիկներից։ Այդ մասնիկներից իւրաքանչիւրը մի բջիջ է, կաւ հասած խնձորի մի քանի տեսակների մասյին մասը ևս երբեմն փշուում է փոքրիկ մասնիկների, նման մասնիկների բաժանուում է նաև լաւ եփած կարտօֆիլը։ Այդ մասնիկները նոյնպէս բջիջներ են։ Երբեմն բջիջները էլ աւելի մեծ չափեր են ունենում, օրինակ, նարինջի միջուկի մէջ։ Կեղենք նարինջը և վերցնենք նրա բլթակներից մէկը։ դրսից նա ծածկւած է բարակ պատեանով։ Եթէ հեռացնենք այդ-

պատեանը, կնկատենք, որ նարինջի միջուկը բաղկացած է բաւականին մեծ և երկարուկ քսակներից, որոնց կարելի է ասեղի ծայրով բաժանել մէկը միւսից։ Այդ քսակներից իւրաքանչիւրը մի առանձին բջիջ է։

3. Բջիջի ԹԱՂԱՆԹԸ ԵՒ ՊԱՐՈՒԱԿՈՒԹԻՒՆԸ։ — Բջիջը, ինչպէս տեսանք, բաղկացած է թաղանթից և պրոտոպլազմայից։ Թարմ բջիջների թաղանթը լինում է բարակ և քնքոյշ, հներինը՝ հաստ և պինդ։ Երբեմն թաղանթը չափազանց հաստանում, ամրանում է։ Այդպիսի հաստ ու ամուր թաղանթ ունեցող բջիջներից են կազմւած ծառերի բնափայտը, ընկոյզի կեղեր, բալի, դեղձի, սալորի կորիզները։

Բջիջի ամենակարևոր մասը պրոտոպլազման է. դա է իսկապէս բջիջի կենդանի նիւթը, որովհետև զրա մէջ են կատարւում կեանքի գործողութիւնները։ դա է աճողը, սնողը, շնչողը և այլն։ Արտաքուստ նա մի կիսահեղուկ լորձային նիւթ է, բաղկացած սպիտակուցայիննիւթերից, այսինքն այնպիսի նիւթերից, ինչպիսի նիւթերից բաղկացած է ձւի սպիտակուցը։ Պրոտոպլազմայի մէջ կայ մի թանձր զանգւած։ դա բջիջի միջուկն է։ Գրեթէ բուլոր բջիջներն ունեն իրենց մէջ այդպիսի միջուկ։ Ուրեմն, բջիջը բաղկացած է բաղանքից, պրոտոպլազմայից եւ միջուկից։ Բացի միջուկից, բջիջների պրոտոպլազմայի մէջ լինում են նաև այլ թանձր հատիկներ էլ։ Բոյսի կանաչ մասերում այդ հատիկները իրոքիլ կամ տերեւականակոչուղ նիւթով ներկւած են լինում կանաչ գոյնով։ Այդ հատիկները կոչում են քլորօֆիլի հատիկներ։ Սրանց շնորհիւ է բոյսը կանաչ գոյն ստանում։ Քլորօֆիլը կարելի է տերեւականերից դուրս հանել։ Դրա համար հարկաւոյ է տերեւակաները ցցել սպիրտի մէջ։ այդտեղ քլորօֆիլը ենց առութեամբ լուծուում և հեռանում է բջիջներից։ Դրա հետեանքը լինում է այն, որ տերեւակաները սպիտակում են,

իսկ սպիրտը՝ ընդհակառակը, կանաչում է։ Նոր բջիջներն ամբողջովին լցւած են լինում պրոտոպլազմայով, իսկ հներն իրենց մէջ ունենում են բաց տարածութիւններ կամ, ինչպէս ասում են, վակուոլներ, որոնք լցւած են



Բջիջներ. 1) Թողանթ, 2) Պրոտոպլազմա, 3 և 4) Սիլուլի, 5) Բջիջների:

գաղ է կատարւում, որ դժւար է նկատել կան, սակայն, միքանի բոյսեր, որոնց բջիջների մէջ պրոտոպլազմայի շարժումը կարելի է դիտել միկրոսկոպով։ Պրոտոպլազման այդ բջիջների մէջ կարծես հոսում է թաղանթի կողքով։ Նրա հետ միասին շարժւում են նաև միջուկն ու քլորֆիլի հատիկները։

մի հեղուկով, որ  
բջջահիւթ է կոչում։  
Այդ վակուոլները  
հետզինետէ շատա-  
նում են բջիջի մէջ։  
Աւելի հին բջիջների  
մէջ նրանք միանա-  
լով միմեանց հետ՝  
բջիջիներսում կազ-  
մում են մի մեծ  
խոռոչ։ Այդ դէպ-  
քում պրոտոպլազ-  
ման ամբողջովին  
հաւաքւում է թա-  
ղանթի մօտ և ամուր  
կերպով կպչում նր-  
րան։


Կենդանի բջիջ-  
ների մէջ պրոտո-  
պլազման շարունակ  
շարժման մէջ է  
գտնում։ Այդ շար-

ժումն այնքան գան-

դումն այնքան գան-

վակուոլներում գտնուող բջջահիւթը ջրային հեղուկ է, որի մէջ լուծւած են լինում զանազան նիւթեր՝ շաքար, զանազան թթուներ կամ աղեր։ Բջջահիւթն այն հիւթն է, որ դուրս գալիս զանազան պտուղներից, օրինակ, լիմոնից, ձմբրուկից, երբ կտրում ենք և կամ բալից, խաղողից, երբ հուպ ենք տալիս։ Պտուղների համը կախւած է հէնց բջջահիւթի մէջ լուծւած նիւթերից։ Ձմբրուկը քաղցր է, որովհետեւ նրա բջջահիւթի մէջ կայ բաւական մեծ չափով շաքար և լիմոնը թթու է, որովհետեւ նրա հիւթի մէջ լուծւած է լիմոնաթթու։


4. Բջիջների հաջորդութեան բջիջները, ինչպէս և բոլոր կեանք ունեցող մարմինները, բազմանում են։ Բը-  
ջիջները բազմանում են բաժանման միջոցով։ Երբ բը-  
ջիջն որոշ հասունութեան է հասնում, սկսում է բաժան-  
ել։ Սկզբում բաժանում է միջուկը. ստացւում է եր-  
կու միջուկ, ապա բաժանում է պրոտոպլազման և այդ-  
պիսով առաջանում է երկու  
բջիջ։ Սրանք էլ հասնելով որոշ  
հասունութեան՝ իրենց հերթին  
կրկին սկսում են բաժանել։  
Բաժանում են զլիսաւրապէս  
մատաղ բջիջները, որոնք  
գտնուում են բոյսի աճող մասե-  
րում։ Հեները դադարում են բա-  
ժանւելուց։ Սրանց մէջ պրոտո-  
պլազմայի քանակութիւնը քա-  
նի գնում է, քչանում է, վերջն էլ բջիջը մեռնում է։  
Մեռած բջիջի մէջ այլ ևս պրոտոպլազմա չի լինում։  
Նա բաղկացած է լինում միայն թաղանթից։ Այսպիսի մե-  
ռած բջիջներից են բաղկացած ծառերի բնափայտը, կե-  
զեկ վերեկ շերտը և այլն։



Բջիջները.

5. Բջջաների շեկերը եհ Հիմնածքներ:—Թարմ բը-  
չիչները, գրեթէ բոլորը համարեա միենոյն ձեն ունեն,  
բայց յետագայում հետպատէ փոխում է նրանց ձեր: Երբ  
դիտում ենք մանրադիտակով այս կամ այն բոյսից վերց-  
րած ճիւղի կտրւածքը՝ լայնութեամբ կամ երկարութեամբ,  
նկատում ենք, որ նա բազկացած է բազմազան ձերի  
բջիջներից: Նրանց մի մասն ունեն բարակ երկարուկ ձեր,  
միւսները՝ կարճ ու հաստ, երրորդները՝ տափակ, չոր-  
րորդները՝ կլոր և այլն: Սակայն, նման ձեր ունեցողները  
միշտ հաւաքւած են լինում միասին:

Ի՞նչու համար պէտք է բոյսն ունենայ այդչափ բազ-  
մազան ձերի բջիջներ: Յայտնի է, որ բոյսը կեանք ու-  
նեցող մարմրն է. իբրև կեանք ունեցող մար-  
մին ունի նա բազմազան աշխատանքներ. նա պէտք է



Ծառի ճիւղի կտրւածք.

Թաղանթ, 2) կեղև, 3) թելեր, 4) Մաղոնօթ, 5) Կամբիւմ, 7) Առօթ, 8)  
Միջնակը:

Հնչի, հողից մնունք ընդունի, այդ մնանքը փոփոք-  
չեան ենթարկի, պաշտպանի լրեն գանազան վնասաւ:


աղդեցութիւններից և այն: Այդ աշխատանքների համար  
ունի նա բազմազան բջիջներ: Նրանց մի տեսակը հողից  
մնունդ է վերցնում, միւսներն՝ օդից թթւածին, երբորդ-  
ներն՝ արմատի միջոցով հողից ստացած մնունդը տանում  
են դէպի բոյսի միւս՝ մասերը, չորրորդները, ընդհակա-  
ռակը, տերեւների մէջ պատրաստած մնունդը տանում  
են դէպի արմատները և այն: Աշխատանքները տարբեր  
են, այդ պատճառով էլ ամեն մի բջիջ ստանում է իր  
աշխատանքի համար ամենայարժմար ձեր, նոյն ընդհանուր  
աշխատանք կատարող նման բջիջները համախմբւած են  
լինում միասին: Նման աշխատանք կատարող և նման ձե-  
ռնեցող բջիջների այդ համախմբումները կոչւում են  
ճիւսւածքներ: Կան զանազան տեսակի հիւսւածքներ, օ-  
քինակ, ծածկոյրի հիւսւածք, որ ծածկում է բոյսը դը-  
սից և պաշտպանում նրան զանազան վտանգներից, մե-  
խանիկական, որ բոյսին ամրութիւն և կայունութիւն է  
տալիս, հիւրաւար, որի միջոցով սննդարար նիւթերը  
շարժւում են բոյսի մէջ՝ մի կողմից միւսը և այն:

## ԱՐՄԱՏ

1. ԱՐՄԱՏԻ ԱՃՈՒՄԸ:— Սերմերի ծլման ժամանակ,  
ինչպէս տեսանք, ամենից առաջ զարդանում է արմատը  
և ապա ցողունը: Արմատը զարգանալով՝ շարունակ  
ուղղւում է դէպի ցած, իսկ ցողունը՝ դէպի վեր:  
Եթէ սերմն ընկած է լինում հողի մէջ այնպէս, որ ար-  
մատը դարձած է լինում վեր, ցողունը՝ ներքեւ, այդ դէպ-  
քում արմատը ծռւում է դէպի ցած, ցողունը՝ դէպի վեր:  
Ի՞նչու համար է արմատը միշտ դէպի ցած ուղղւում: Ա-  
ռաջները մարդիկ կարծում էին, թէ արմատը հողի պէտք  
ունենալու համար է ցած զնում: Բայց դա սխալ է: Եթէ  
վերցնենք մի մաղ կամ մի արկղ, որի յատակին կան  
քազմաթիւ անցքեր, ածենք նրա մէջ սերմեր, լորու կամ

սիսեռի, և նրանց վրայ էլ խոնաւ հողի մի հաստ շերտ  
և կախենք առաստաղից կամ որևէ է այլ տեղից. քիչ ան-  
ցած՝ սերմերը կծիւն և մենք կնկատենք, որ արմատներն  
ուղղւում են ոչ թէ դէպի վեր, հողի մէջ, այլ, ընդհա-  
կառակը, անցքերի միջով դուրս են գալիս դէպի լոյս աշ-  
խարհ, իսկ ցօղուններն ուղղւում են վերև՝ հողի մէջ:  
Կնշանակէ, արմատը հողի համար չէ ուղղւում ցած և ոչ  
էլ ցօղունը լոյսի համար՝ դէպի վեր: Այդաեղ դեր է կա-  
տարում մի այլ ոյժ. այդ ոյժը երկրի ձգողականութիւնն  
է, որի շնորհիւ բոլոր մարմիններն ընկնում են ցած: Այդ  
ոյժն ազդում է նաև արմատի վրայ:

Արմատն աճում է միայն ծայրից: Եւ ուրիշ կերպ  
չէր էլ կարող: Նա ամրացած է հողի մէջ բազմաթիւ ճիւ-  
ղերով, եթէ աճէր ամբողջ երկարութեամբ, այն ժամա-  
նակ հնարաւորութիւն չէր ունենայ հողի միջով առաջ  
շարժւելու: Մինչդեռ ծայրից աճելով նա հետզհետէ խո-  
րանում է հողի մէջ: Որ արմատը ծայրից է աճում,  
ցոյց է տալիս հետեւեալ փորձը:



Նոր ծլած սիսեռի՝ մօտ կէս վերշոկ եր-  
կայնութիւն ունեցող արմատի վրայ, ե-  
թէ վրձենի թեթև շարժումով փոքրիկ գը-  
ծեր բաշենք, միմեանցից մի միլիմետր հե-  
ռուաւորութեան վրայ, երկու օրից յետոյ,  
երբ արմատն աւելի երկարացած լինի,  
կնկատենք, որ արմատի բոլորովին ծայ-  
րին գտնուող գիծը մնացել է իր նախկին

Արմատի անումը տեղում, իսկ նրանից յետոյ եկողները  
ծայրից: միմեանցից բաւականին հեռացել են, Դի-  
տողութիւնը ցոյց կտայ նաև, որ արմատի սկզբում եղած  
բոլոր գծերը պահպանել են իրենց նախկին հեռաւորու-  
թիւնը միմեանցից: Կնշանակէ, արմատն աճում է իր  
ծայրին անմիջապէս յաջորդող մասերում:

2. ԱՐՄԱՏԻ ԾԱՅՐԱՊԱՏԵԱՆԸ ԵՒ ՄԱՀՄՉՈՒԿՆԵՐԸ: —  
Ի՞նչու արմատն իր բուն ծայրից չի աճում, այլ նրան  
յաջորդող մասից: Դիտելով արմատի ծայրը խոշորացոյց  
ապակով, կնկատենք, որ նա ծածկւած է մի տեսակ գըլ-



խարկով: Այդ գլխարկը կոչւում է ծայրա-  
պատեան: Սա բաղկացած է իրար վրայ  
նստած մի քանի շերտ հաստ բջիջներից:  
Այս բջջաշերտերից գրսիները շարունակ  
մեռնում, թափւում են. թափւածների փո-  
խարէն ներսում առաջանում են նորերը:  
Ահա այս պատճառով աճման ժամանակ,  
արմատի ծայրը չի երկարում: Ծայրապատ-  
եանն արմատի համար ունի շատ մեծ նը-  
շանակութիւն: Արմատի ծայրը բաղկացած  
է չափազանց քնքոյշ բջիջներից, ծայրա-  
պատեանը ծածկելով այդ քնքոյշ բջիջները  
պաշտպանում է նրանց զանազան վտանգ-  
ներից: Բացի դրանից, ինքը բաղկացած լի-  
նելով հաստ և ամուր բջիջներից ծակում


Արմատի մազմբ-է հողը և այդպիսով ճանապարհ բացում  
գուկները:

Ծայրապատեանից փոքր ինչ վեր արմատը ծածկ-  
ւած է լինում բազմաթիւ բարակ թելիկներով: Այս թե-  
լիկները կոչւում են մազմզուկներ: Արմա-  
տի վերին մասերում այդպիսի մազմզուկ-  
ներ մենք չենք նկատում: Երբ արմատն ա-  
ճում երկարում է, հին մազմզուկները  
թափւում են, նրանց փոխարէն նոր աճած  
մասերում առաջանում են նորերը: Ահա  
այս է պատճառը, որ արմատի հին մասերի  
վրայ երբէք մազմզուկներ չեն լինում:  
Դիտելով մազմզուկները մանրադիտակի  
տակ, նկատում ենք, որ նրանք բարակ մատի ծայրապա-  
քնքոյշ խողովակներ են՝ լցւած բջջանիւթով:



1) Արմատը. 2) Ար-  
մատի ծայրապա-  
տեանը.

3. ԱՐՄԱՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ:—Բոյսի արմատը, ինչպէս տեսանք, զարգանում է սաղմի արմատիկից: Լոբու, սիսեռի և մի շարք ուրիշ բոյսերի սաղմային արմատիկները զարգանալով՝ հետզհետէ երկարում են և վերջը դառնում, այսպէս ասած, զլխաւոր արմատ: Գլխաւոր արմատ կոչւում է առհասարակ այն արմատը, որ զարգանում է անմիջապէս սաղմի արմատիկից: Գլխաւոր արմատից բոլոր կողմերի վրա՝ դուրս են գալիս կողմնակի ճիւղեր. սրանք էլ իրենց հերթին նոր ճիւղեր են տալիս և այդպիսով սաղմի արմատից հետզհետէ զարգանում է մի մեծ և բարդ արմատ: Մի քանի բոյսերի, օրինակ, մեզ մօտ տարածւած ծառերի մօտ, կողմակի արմատներն այսպէս ուժեղ կերպով են հաստանում, մեծանում և ճիւղաւորւում, որ դժւար է լինում տարերեկ նրանց գլխաւոր արմատից: Այդպիսի արմատը կոչւում է նիսլաւորեալ: Ուրիշ բոյսերի, օրինակ, զարդի, բողկի, արեածաղկի, սիսեռի մօտ, գլխաւոր արմատն արձակում է իրենից միայն փոքրիկ կողմնակի ճիւղեր, իսկ ինքը, ընդհակառակը, հաստանում, զարգանում է և խորանում հողի մէջ: Այսպիսի արմատն էլ



Գլխաւոր արմատ:

թիւ, օրինակ, մեզ մօտ տարածւած ծառերի մօտ, կողմակի արմատներն այսպէս ուժեղ կերպով են հաստանում, մեծանում և ճիւղաւորւում, որ դժւար է լինում տարերեկ նրանց գլխաւոր արմատից: Այդպիսի արմատը կոչւում է նիսլաւորեալ: Ուրիշ բոյսերի, օրինակ, զարդի, բողկի, արեածաղկի, սիսեռի մօտ, գլխաւոր արմատն արձակում է իրենից միայն փոքրիկ կողմնակի ճիւղեր, իսկ ինքը, ընդհակառակը, հաստանում, զարգանում է և խորանում հողի մէջ: Այսպիսի արմատն էլ

կոչւում է իլիկաձեւ: Սակայն, կան բոյսեր էլ, որոնց գլխաւոր արմատը բոլորովին չի զարգանում: զարգանում



Փիջաձեւ արմատ:

են ցողունի հիմքից դուրս եկող մի շարք թելանման արմատիկներ, որոնք միասին մի փունջ են կազմում: Այսպիսի արմատը կոչւում է փիջաձեւ արմատ: Փիջաձեւ արմատ ունեն ցորենը, զարին, խոտերը և այլն:

4. ԱՐՄԱՏԻ ԴԵՐԸ:—Արմատի գլխաւոր դերն այն է, որ բոյսը հաստանում է հողի մէջ և նրանից վերցնում այն բոլոր մնադարար նիւթերը, որոնք անհրաժեշտ են բոյսի համար: Բայց ինչպէս է վերցնում արմատն այդ նիւթերը հողից: Մենք տեսանք, որ ամբողջ բոյսը, ուրեմն և արմատը, բաղկացած են բջիջներից և բջիջներն էլ զըրսից պատաժ են թաղանթներով: Այս թաղանթների վրայ ոչ մի անցք չկայ, ուրեմն, ամուր վիճակի մէջ գտնւող նիւթերն արմատի մէջ մտնել չեն կարող: Արմատի մէջ կարող է մտնել միայն հեղուկային նիւթ, առել է, ջուր և նրա մէջ լուծւած զանազան նիւթեր: Արմատի վրայ, ինչպէս զիտենք, կան մազմզուկներ: Ահա այս մազմզուկներն են, որ ծծում են դէպի իրենց հողի մէջ գտնւող ջուրը՝ մէջը լուծւած նիւթերով: Ջուրը սկզբաւմ ամբարում է մազմզուկների մէջ, երբ սրանք բոլորովին լցւում

են, այն ժամանակ ճնշման աղդեցութեան տակ, նրա մէջ գտուող ջրի աւելորդ մասը ծծուում է հարեան բջիջների մէջ, սրանցից էլ միւս բջիջների մէջ։ Այսպիսով բջիջից բջիջ անցնելով՝ ջուրը վերջապէս հասնուում է արմատի մէջ գտնուող առանձին խողովակներին կամ անօթներին։ Սրանց մէջ հաւաքւելով՝ ջուրը հետզհետէ բարձրանուում է վերև՝ ցողունի միջով։

5. ԱՐՄԱՏԱՅԻՆ ՃՆՇՈՒՄՆ. — Այն ոյժը, որով հողից ստացած ջուրը բարձրանուում է վեր, չափազանց մեծ է։ Այդ ոյժը կոչուում է արմատային ճնշումն, որովհետեւ, իրօք, արմատը շարունակաբար հողից ջուր ծծելով՝ մղում է նրան դէպի ցողունը և այդպիսով վեր բարձրացնուում։ Եթէ գարնանը որևէ է բոյս կտրենք արմատի մօտից, կնըկատենք, որ բաւական երկար ժամանակ կտրւած տեղից ջրի կաթիլներ են դուրս գալիս և ցած թափւում։

Արմատային ճնշման ոյժը մենք կարող ենք չափել։ Դրա համար պէտք է կտրենք գարնանը մի բոյս արմատի մօտից և ըեզինէ խողովակի միջոցով միացնենք նրա հետ մի կոր առակեայ խողովակ, որի մէջ ածւած է սընդիկ։ Արմատային ճնշումը մղելով ջուրը ցողունից խողովակի մէջ՝ հետզհետէ կսկսի բարձրացնել սնդիկը։ Փորձը ցոյց է տւել, որ այդ ճնշումն այնքան մեծ է, որ կարողանում է բարձրացնել սնդիկն աւելի քան 30 դիւրմ։ Բայց սնդիկը ջրից ծանր է  $13\frac{1}{2}$  անգամ։ Կնշանակէ, արմատային ճնշումը ջուրը կարող է բարձրացնել 5 սաժենից աւելի։

Այդպիսի արմատային ճնշումը կարող է առաջանալ միայն այն ժամանակ, երբ արմատի մէջ մասի սեծ չափով ջուր։ Եւ արմատի մէջ, իսկապէս, ահապին քանակութեամբ ջուր է մտնում, կաւ գարգացած մեծ կեցի ծառը օրւայ մէջ հողից ծծում է 7-8, իսկ ամառը, շոգերին՝ մինչև 30 դոյլ ջուր։ Եւ այդքան ջուրը ծծում է

նա իր արմատների վրայ գտնւած մազմզուկներով։ Ի՞նչպիսի երկարութիւն պիտի ունենան արմատներն ու մազմզուկները, որ բոյսը կարողանայ օրւայ ընթացքում այդշափ ջուրը ծծել։ Մարդիկ հաշւել են, որ ցորենի արմատի երկարութիւնը, եթէ, իհարկէ, գումարենք նրա բոլոր արմատիկները միասին, հասնում է մօտաւորապէս կէս վերստի, իսկ եթէ հաշւենք արմատիկների վրայ եղած մազմզուկներինը, որոնց թիւը մոտ 10 միլիոն է, կհասնի գրեթէ 20 վերստի։ Ծնորհիւ այդպիսի երկարութեան բոյսի արմատներն իրենց վրայ եղած մազմզուկներով այնպէս խիտ կերպով պատում են հողը, որ ջրի ոչ մի կաթիլն իգուր չի կորչում։

Արմատային մազմզուկներն արմատի վրայ շարունակ իրենց տեղը փոխում են, արմատի հին մասերից թափւում են նրանք և դուրս գալիս նոր առաջացածների վրայ։ Եւ այդ ահապին նշանակութիւն ունի, որովհետեւ ծնորհիւ այդ հանգամանքի՝ արմատը հնարաւորութիւն է ստանում սնունդ վերցնիլ հողի նորանոր մասերից։

Պէտք է ուշադրութիւն դարձնել արմատի և մի այլ յատկութեան վրայ։ Նա հողի մէջ աճում և զարգանում է այն ուղղութեամբ և հողի այն մասերում, որտեղ աւելի սնունդ և խոնաւութիւն կայ։ Արմատի այդ յատկութիւնը հաստատում է հետեւեալ փորձով։ Վերցնենք մի ծաղկաման, խաւաքարտով կամ փայտէ բարակ տախտակով բաժանենք նրան միջից երկու մասի, մի մասի մէջ ածենք պարարտ սևահող, միւսի մէջ՝ մաքուր աւագ։ Ապա հանելով խաւաքարտը կամ տախտակը՝ սևահողը աւագից բաժանող գծի ուղղութեամբ ցանենք մի քանի հատ լոբու սերմ։ Որոշ ժամանակից յետոյ այդ սերմերից կառաջանան լոբու փոքրիկ տունկեր։ Եթէ այնունետեւ զգուշութեամբ հանենք նրանց հողից և դիտենք, կտեսնենք, որ նրանց արմատները զարգացել են գլխա-

սորապէս սեահողի մէջ։ Այս նոյն փորձը կարող ենք կատարել և այլ ձեռվ։ Ծաղկամանի մէջ կածենք շերտ-շերտ իրար վրայ սեահող և աւազ և կաճեցնենք նրա մէջ որևէ է բոյս։ Զգուշութեամբ հանելով նրան հողից, դարձեալ նոյն երեսյթը կտեսնենք, նրա արմատները ճիւղաւորւած և զարգացած կլինեն գլխաւորապէս սեահողի շերտերում։

## ԻՆՉ Է ՍՏԱՆՈՒՄ ԲՈՅԱԾ ՀՈՂԵՑ

1. ԲՈՅԱԾԻ ԿԻԶՄՈՒԹԻՒՆԸ։—Մենք տեսանք, թէ բոյսը ինչպէս է սնունդ վերցնում հողից. բայց կայ մի հարց ևս, ի՞նչ նիւթեր է վերցնում նա հողից։ Այս հարցին պատասխանելու համար ամենից առաջ պէտք է իմանանք; թէ ինքը բոյսն ինչ կազմութիւն ունի, այսինքն ինչ նիւթերից է նա կազմւած։ Եթէ այդ իմացանք, մեղ համար պարզ կլինի այնուհետեւ, թէ ինչ նիւթեր են անհրաժեշտ բոյսի սննդառութեան համար։

Բոյսի կազմութիւնն իմանալու համար ամենից առաջ չորացնում են բոյսը, այսինքն հեռացնում են նրա մէջ գտնւած ջուրը։ Զորացած բոյսն այնուհետև այրում են։ Պարզ է, որ նա ամբողջովին չի այրւում. տակը մնում է մոխիր։ Ասել է, բոյսը կազմւած է այրւող և չայրւող նիւթերից։ Այրւող նիւթերը կոչւում են գործարանական, չայրւողները՝ անգործարանական կամ հանքային նիւթեր։ Ուսումնասիրելով գործարանական նիւթերը՝ գիտնական-ները գտել են, որ նրանք բաղկացած են չորս պարզ մարմիններից՝ ածխածնից, ջրածնից, բրւածնից և բորակածնից։ Այս մարմինների մէջ ամենակարևոր տեղը բռնում է ածխածնը. նա կազմում է չորացրած բոյսի համարեա կէսը։ Եւ իրօք, երբ բոյսն ածխացնում են, այսինքն այրում են առանց օդի հոսանքի, ստանում են բաւականին մեծ քանակութեամբ ածուխ։ իսկ ածուխը համարեա մաքուր ածխածնի է։ Այնուհետեւ ուսումնասի-

րելով մոխիրը՝ գիտնականները գտել են նրա մէջ ահագին թւով նիւթեր, սակայն, փորձերը ցոյց են տւել, որ նրանցից միայն վեցը կարևորութիւն ունեն, և գտնւում են միշտ բոլոր բոյսերի մէջ<sup>\*)</sup>։ Ուրեմն, բոյսի չոր նիւթի մէջ գտնւում են ածխածն, թթւածն, ջրածն, բորակածնին և մոխրի մէջ գտնւող վեց պարզ մարմինները։ Ահա այս 10 պարզ մարմինները կազմում են իւրաքանչիւր բոյսի անհրաժեշտ սննդարար նիւթերը, առանց ուրոնց բոյսն աճել չի կարող։

Բայց մարեղից է վերցնում բոյսն այդ մարմինները։ Սկզբում մարդիկ կարծում էին, թէ այդ մարմինները բոյսը վերցնում է հողից։ Սակայն պարզել է, որ այդ սխալ է։ Մեզնից դեռ ևս երեք հարիւր տարի առաջ մէ՛ դիտնական կատարել է մի հետաքրքրական փորձ։ Նա վերցրել է մի մեծ ծաղկաման, մէջը ածել է 200 ֆունտ վառարանի մէջ լաւ չորացրած հող և տնկել է մէջը մէ՛ ուռենու ձիւղ, որ կշուռ էր 5 ֆունտ։ Հինգ տարուց յետոյ ճիւղից զորդանում է մի կատարեալ ծառ։ Այնուհետեւ հանում է նա ուռենին ծաղկամանից, մաքրում է արմատները հողի մասնիկներից և չորացնելուց յետոյ կշուռ։ Դուրս է գալիս, որ ուռենին կշուռ է և փութ։ Նա կշուռ է նաև այն հողը որի մէջ ածել է ուռենին և նկատում է, որ հողը պակասել է ընդամենը <sup>1/7</sup> գրւանքայ։ Կնշանակէ, և փութ փայտ պատրաստելու համար ուռենին հողից վերցրել է միայն այդքան նիւթ, մնացածը նա ուրիշ տեղից է վերցրել։ Փորձերը ցոյց են աւել որ բոյսը հողից վերցնում է միայն հանքային նիւթեր և բորակածնի։ Եւ որովհետև բոլոր հանքային մարմիններից բոյսի համար անհրաժեշտ են միայն 6-ը, ուրեմն, նրա կանոնկաւոր աճման համար հողի մէջ անպահառ ողիսի լինեն միայն արդ 6 մարմիններն ու բորակածնին։

<sup>\*)</sup> Կալիոն, կրածին, մագնեղիոն, երկաթ, ծծումբ և լուսածիւն

2. ԶՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ:—Որ բոյսը կարիք ունի հողից վերցնելու միայն այդ վեց մարմինները և բորակածին, հաստատում է հետեւեալ փորձով: Վերցնում են մա-



բուր վերաթորած ջուր և մէջը լուծում բոյսի համար անհրաժեշտ վեց մարմինները և բորակածին: Այդ մարմիններից շատերը որովհետև ջրի մէջ չեն լուծում, դրա համար վերցնում են այնպիսի բարդ նիւթեր, որոնց մէջ կան այդ մարմինները և միաժամանակ լուծելի են ջրի մէջ, օրինակ, զանազան տեսակի աղեր: Դրանցից կազմում են մի խառնուրդ և լուծում վերաթորած ջրի մէջ: Այդպիսի լուծոյթի մէջ դնում են այնուհետև նորածիլ բոյսեր: Փորձը ցոյց է տւել որ այնտեղ բոյսերն աճում են ճիշտ այնպէս, ինչպէս կաճէին պարաբու հողի մէջ: Խնամքի դէպքում բոյսերն այնտեղ ոչ միայն աճում, մեծանում են, այլ և ծաղկում, պտուղ ու սերմեր են տալիս: Եթէ ջրի մէջ լուծած նիւթերի մէջ պակասում



առաջ անհրաժեշտ ազեր պարունակող ջրի մէջ է բոյսի համար անհրաժեշտ մարմիններից որևէ է մէկը, բոյսը կամ բոլորու-

վին չի զարգանում կամ լինում է փոքրիկ, թոյլ և շուտով թառամում է: Այդպիսի ջրային լուծոյթի մէջ բոյսերի աճեցումը կոչում է ջրային կուլտուրա:

Այդպիսի ջրային կուլտուրա կարող ենք պատրաստել և մենք: Դրա համար պիտի վերցնենք մի քանի տեսակ աղեր և կազմենք նրանցից մի խառնուրդ: Այդ աղերն են՝ կրածնի բորակատ, կալիոնի բորակատ, կալիոնի լուսածնատ, մազնեզիոնի ծծմբատ և երկաթի լուսածնատ: Խառնուրդ կազմելու ժամանակ առաջին աղից, կրածնի բորակատից, պէտք է վերցնենք երկու մաս, միւսներից սի մի մաս, իսկ երկաթի լուսածնատից մի աննշան քանակութիւն: Այնուհետև խառնուրդի երկու մասը պիտի լուծենք հազար մաս ջրի մէջ, այսինքն եթէ վերցնում ենք խառնուրդից երկու գրամ, ապա դա պիտի լուծենք հազար գրամ կամ մի լիտր ջրի մէջ: Պատրաստելով այդ ճեի լուծոյթ՝ պէտք է ածենք այն մի բանկի մէջ և մէջը դնենք նորածիլ լոբի, սիսեռ կամ որևէ է այլ բոյս: Եթէ խառնուրդ կազմելու ժամանակ մոռանանք կամ դիտմամբ չվերցնենք վերոյիշեալ ազերից որիէ մէկը, բոյսը շատ թուլ կաճի, կամ բոլորովին չի աճի:

Զրային կուլտուրան ցոյց է տալիս, որ բոյսի աճման համար հողը չէ, որ անհրաժեշտ է, այլ նրա մէջ գտնուած հանքային նիւթերը: Եւ իրօք, եթէ հողի մէջ պակասում է բոյսի համար անհրաժեշտ հանքային նիւթերից որևէ է մէկը, բոյսի աճումը դանդաղում կամ դադարում է: Իսկ եթէ այդ հանքային նիւթերը հողից դուրս լուծում ենք ջրի մէջ, բոյսը նրա մէջ աճում է ճիշտ այնպէս, ինչպէս կաճէր պարաբու հողի մէջ:

### ՏԵՐԵՒ

Մենք ծանօթացանք արմատի կազմութեան և նշանակութեան հետ, այժմ էլ ծանօթանանք բոյսի մի այլ գործարանի՝ տերեի հետ: Նախ տեսնենք, թէ նա ինչպիսի կազմութիւն ունի:


1) Բոլոր անհրաժեշտ ազեր պարունակող ջրի մէջ է բոյսի համար անհրաժեշտ մարմիններից որևէ է մէկը, բոյսը կամ բոլորու-

աճած բոյս: 2) Ազերից զուրկ ջրում աճած բոյս:

## ՏԵՐԵՒԻ ԿԱՇՄՈՒԹԻՒՆԸ

1. Տերեւիների ԱՐՏԱՔԻՆ ԶԵԽԸ, — Տերեւներն ունեն շատ բազմազան ձևեր, այդ պարզ կերպով նկատելի է մեր շրջապատի բոյսերի տերեւների վրայ: Նրանք առհասարակ բաղկացած են երկու մասից, մի լայն տափակ թերթի նման մասից և մի բարակ, երկարուկ մասից. առաջինը կոչւում է սկուտեղ, երկրորդը՝ կոթուն, Կոթունով տերեւնը միանում է ցօղունի հետ: Կան տերեւներ, որոնք զուրկ են կոթունից. Դրանց սկուտեղը անմիջապէս է միանում ցօղունի հետ: Այդպիսիները կոչւում են նուած տերեւներ: Նուած տերեւներ ունեն, օրինակ, խոտերը, հացաքոյսերը և այլն:

Տերեւների սկուտեղները լինում են շատ տարբեր ձևերի: Նրանք երբեմն կլոր են լինում, երբեմն էլ ունենում են ձւի, սրտի, նշտարի, երեկամունքի, ասեղ:



Կլոր տերեւն. Ձւածի տերեւն. Սրտածի տերեւն. Նշտարածի տերեւն.  
և այլն ձևի: Սկուտեղների ունեցած ձևի պատճառով առնեները կոչւում են, կլոր, ձւածի, սրտածի, նշտարածի,

երիկամնածի, ասեղնածի եւ այլն: Տարբերում են սկուտեղները և իրենց եղբերով: Նրանց մի մասի եղբերը կտրաւածքներ

շեն ունե-

նում, միւս-

ներն, ընդ-

հակառակը,

կտրտածնեն

լինում թե-

թի կամ ու-

ժերեկում

առեղնածն տերեւն, ներքեռում գծածն տերեւ-

ժեղ կեր-

պով: Կտրտածքները չունեցողները կոչւում են բոլորեց

տերեւներ, փոքր կտրտածքները ունեցողները՝ առամնա

ւոր, իսկ մեծ կտրտածքները ու-

նեցողները՝ բլթակաւոր տերեւներ:

Երբեմն կտրտածները շատ խորն

են գնում և սկուտեղը բաժանում

մի քանի առանձին տերեւիկների:

այդ գեպքում տերեւը կոչւում է

բարդի:

Երբ այդպէս առաջացած

տերեւիկները միանում են միւրիանց

հետ մի կէտում, տերեւը կոչւում

է մատնածի, իսկ երբ տերեւիկները

շարտած են լինում տերեւեկոթի

վրայ՝ աջև ձախ կողմերում, կոչ-

ւում է փետրածի:

Երբեմն փետ-

րածի տերեւի փոքրիկ տերեւիկներն

իրենց հերթին բաժանուում են

կրկին աւելի մանրիկ տերեւիկնե-

րի:


այդ գեպքում տերեւը կոչւում է բարդ փետրածի:

Դիտելով որևէ տերեւի սկուտեղը, կնկատենք, որ նրա վրայ տարածւած են բազմաթիւ ջղեր, սրանք աւելի



Բլթակաւոր տերեւն.

Նկատելի են մանաւանդ ստորին երեսի վրայ։ Տերևների մի մասի մէջ այդ ջղերը դուրս գալով կոթունից կամ



Չանազան ձեփի բարդ տերեներ։

1, 2 և 4) Փետրաձև տերևներ. 3) Բարդ փետրաձև տերեն. 5) Մատնաձև տերեն։  
տերենի հիմքից՝ զուգահեռաբար գնում են տերենի ամբողջ



Յանցածիդ տերեն։

երկարութեամբ մինչև նրա ծայրը, առանց ճիւղեր արձակելու։ Այդպիսի ջղեր ունեցող տերեր կոչւում է զուգահեռացիդ տերեն։ Միւսների մէջ, ընդհակառակը, կոթունից կամ տերենի հիմքից դուրս են գալիս մէկ կամ մի քանչի ջղեր, որոնք աջ և ձոխ ճիւղեր են արձակում և կազմում սկուտեղի մէջ ջղերի մի ամբողջ ցանց։ Այդպիսի ջղեր ունեցողներն էլ կոչւում են ցանցացիդ տերեներ։ Ջղերն սկուտեղի մէջ տա-

րածւելով զանազան ուղղութեամբ կամ գնալով իրար զուգահեռաբար՝ քնքոյց սկուտեղին բաւական մեծ ամրութին են հաղորդում, որի շնորհիւ նա դիմանում է քամուն, անձրեկի կաթիլների հարւածներին և այլ վտանգների։

Տարրեր է և տերևների նստւածքի ձեր։ Երբեմն տերևները նստում են ցօղունի տարբեր կողմերում։ Տերևների այդպիսի նստւածքը կամ դասաւորութիւնը ցօղունի



Տերեների զանազան ձեփի նստածքներ։  
Հերթական կամ փոփոխազիր. Հակադիր.

Օղակաձև։

վրայ կոչւում է ներբական կամ փոփոխադիր։ Երբեմն էլ տեսնում ենք, որ տերևները նստած են լինում զոյգ-զոյգ ցօղունի միկնոյն բարձրութեան վրայ և իրար դէմ առ դէմ։ Այսպիսի նստւածքն արդէն կոչւում է հակադիր։ Պատահում է նաև, որ մի քանի տերևներ դուրս են գալիս ցօղունի նոյն բարձրութիւնից և կազմում են նրա շուրջը մի օղակ։ Այս ձեր նստւածքն էլ կոչւում է օղակաձև։

2. Տերեի ներթին ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ. — Տերեկի ներթին

կազմութիւնը կարող ենք դիտել միայն միկրոսկոպով։ Դիտելով այդ գործիքով տերևի բարակ կտրւածքը՝ կնկատնք, որ նրա վերին և ստորին երեսների վրայ գտնւում են մի շարք տափակ, թափանցիկ և հաստ պատերով բջիջներ։ Սրանք միասին կազմում են տերևի մաշկը, որ բարակ թաղանթի ձևով պատում է տերևի երկու երեսները։ Տերևի վերին երեսը ծածկւած է լինում մոռային նիւթի մի բարակ շերտով։ Արա չնորհիւ տերևի վրայ թոփւած ջուրը նրան չի խոնաւացնում և սահելով՝ նրա վրայով թափւում է ցած։ Մի քանի տերևներից այդ մաշկը հեշտութեամբ պոկւում է, բարակ թափանցիկ թաղանթի ձևով։ Մաշկը տերևին տալիս է ամրութիւն և պաշտպանում է նրա ներսում եղած քնքոյց միջուկը զանազան վտանգներից։



Քորագիծ հատիկներ պարունակող բջիջներ։

Տերեւած կան ազատ տարածութիւններ՝ լցւած օղով։ Այդ տարածութիւնները կոչում են միջբջային տարածութիւններ։

Տերևի միջուկը բաղկացած է քնքոյց բջիջներից, որոնք լցւած են պրոտոպլազմայով և պարունակում են իրենց մէջ մեծ քանակութեամբ քլորօֆիլի հատիկներ։ Ծնորնիւ այդ հատիկների է, որ տերևը կանաչ գոյն է ստանում։ Տերևի միջուկի վերին մասում բջիջներն երկարուկ ձև ունեն և դասաւորւած են խիտ կերպով իրար կողք-կողքի։ Այդպէս չեն ստորին մասի բջիջները, սրանք որոշ ձև չունեն և շատ նոսր են դասաւորւած։ Նրանց արանքում կան ազատ տարածութիւններ՝ լցւած օղով։ Այդ տարածութիւնները կոչում են միջբջային տարածութիւններ։

Սաւորւած։ Նրանց արանքում կան ազատ տարածութիւններ՝ լցւած օղով։ Այդ տարածութիւնները կոչում են միջբջային տարածութիւններ։

Օդը մտնում է տերևի ներսը թաղանթի մէջ գտնւող տուանձին անցքերով։ Այդ անցքերը դիտելու համար վերցնում են տերևի ստորին երեսի թաղանթը և նայում մտնուագիտակով։ Վերջինիս միջոցով պարզ կերպով երեսում է, որ թաղանթի անգոյն բջիջների արանքում գտնվում են զոյգ-զոյգ զասաւորւած քլորօֆիլ պարունակող կիսալուսնածերջիներ։ Այս բջիջներն իրենց գոգաւոր կողմերով դարձած են իրար և կազմում են իրանց արանքում մի անցք, "ը տանում է գէպի բջիջի ներսը։ Տերևի այդ անցքերը կարող են մեծանալ, փոքրանալ և կամ բոլորովին փակւել։ Եթե անցք առաջացնող բջիջներն աւելի ուռուցիկ են դառնում, անցքը մեծանում է,

իսկ եթե, ընդհակառակը, ուղղում են, անցքը փոքրանում է կամ բոլորովին փակւում։ Անցքերի թիւը տերևի վրայ չափազանց մեծ է. կազմու տերևն, օրինակ, ունի մօտ մի միլիոն, իսկ արևածաղկի տերևը՝ մինչև 13 միլիոն անցք։ Անցքերը մեծ մասամբ դասաւորւած են տերևի ստորին երեսի վրայ, որովհետև այդտեղ նրանք աւելի լաւ կարող են պաշտպանուել թէ փոշուց և թէ անձրեի ջրից։

### ՏԵՐԵՒՆ ԻԲՐԵՒ ՍՆՆԴՍՈՌԻԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

1. ԱԾԽԱԾՆԻ ԻԻՐԱՑՈՒՄԸ ՏԵՐԵՒՆԵՐԻ ՄԻԶՈՑՈՎ. – Տերեւնք այժմ, թէ տերևն ինչ նպատակների է ծառայում։ Ջրային կուլտուրայի մէջ աճեցնելով բոյսը՝ տեսանք, որ



Երկու անցք տերեւի թաղանթի վրայ։  
(Խիս մեծացրած)

հողից վերցնում է նա միայն հանքային նիւթեր և բորակածին։ Բայց բոյսի մէջ կայ նաև ածխածին, ջրածին և թթւածին։ Ջրածինն ու թթւածինը նա կարող է ստանալ Հրից, որովհետև ջուրը հէնց այդ մարմիններից է բաղկացած։ Հարց է տուաջանում, որտեղից է հապա վերցնում նա երրորդ նիւթը՝ ածխածինը։


Այս հարցին գիտութիւնն երկար ժամանակ չէր կարողանում պատասխանել։ Մեզնից աւելի քան երկու հարեւը տարի առաջ մի գիտնական փորձերով ցոյց տւեց, որ բոյսը կարող է օդը մաքրել։ Նա այսպիսի փորձեր կատարեց։ Վերցրեց երկու ապակեայ անօթ, նրանցից իւրաքանչիւրի մէջ գցեց մի-մի մուկ և անօթներն ամուռ կերպով փակեց այնպէս, որ դրսից այլ ևս օդ չմտնի ներս։ Թիշ ժամանակից յետոյ մկներն այնտեղ խեղդւեցին։ Այսուհետեւ նա անօթներից մէկի մէջ գրեց մի բոյս և կրկին երկուսի մէջ գցելով մի-մի մուկ՝ նոյն ձեռվ փակեց։ Բանից գուրս եկաւ, որ բոյսից զուրկ անօթի մէջ մուկը կրկին կարճ ժամանակից յետոյ խեղդւեց, իսկ միւսի մէջ եղողը՝ մնաց ողջ բաւական երկար ժամանակ։ Պարզ է, պէտք է ենթադրել, որ բոյսն այնտեղ մաքրում էր շնչառութիւնից փչացող օդը։ Յայտնի է, որ շնչառութեան ժամանակ կենդանին վերցնում է օդից թթւածին և արձակում ածխաթթու։ ուրեմն, որպէսզի օդը մաքրւէր, հարկաւոր է, որ կատարւէր հակառակ գործողութիւնը։ Եւ իրօք, այդպէս էլ լինում է։ Բոյսն օդից վերցնում է ածխաթթու գազ և արձակում իրենից թթւածին։

Սակայն, այդ մըր գիտնականի փորձերը շարունակ յաջող չէր անցնում։ Պատահում էր երբեմն, որ բոյս պարունակող անօթի մէջ կենդանին աւելի շուտ էր խեղդում, քան միւսի մէջ։ Յետագայում միայն մի այլ գիտնական անհերքելի փորձերով հաստատեց, որ բոյսն օդը մաքրում է միայն ցերեկը, արեգակի լոյսի տակ եղած ժա-

մանակ, իսկ գիշերը կամ մթութեան մէջ առհասարակ, նա նոյնպէս կենդանու նման օդից վերցնում է թթւածին և արձակում իրենից ածխաթթու գազ։

Բայց բոյսն ինչու համար է վերցնում ածխաթթու գազ և արձակում թթւածին։ Երկար փորձերից յետոյ գիտնականները պարզել են նաև այդ հարցը։ Ածխաթթուն մի բարդ մարմին է՝ բաղկացած ածխածնից և թթւածնից և ահա պարզել է, որ բոյսը վերցնելով ածխաթթուն օդից՝ արեգակի լոյսի ազդեցութեան տակ բաժանում է նրա բաղադրիչ մարմինները՝ թթւածինն ու ածխածինը միմեանցից։ Ածխածինն այնուհետև պահում է իր մէջ, իսկ թթւածինն արձակում։ Որ իրօք բոյսի մէջ կատարւում է այդ գործողութիւնը, պարզ երեւում է հետևեալ փորձից։ Վեցրնենք մի մեծ բանկայ, դնենք մէջը մի քանի տերն,՝ աւելի լաւ՝ մի ջրային բոյս և ծածկենք վերջինս մի ձագարով։ Յետոյ լցնենք բանկան ջրով և ածխաթթու ձագարի ծայրին ջրով մի փորձանակ։ Այնուհետեւ բանկայի ջուրը յագեցնենք ածխաթթու դագով, որի համար հարկաւոր է միայն փշել խողովակով մի առ ժամանակական ջրի մէջ։ Այդ կատարելուց յետոյ, բանկան դնենք արելի լոյսի տակ։

Փոքր ինչ անցած՝ կակատենք, որ բոյսի կանաչ մասերից սկսում են պոկւել գազի փոքրիկ պղպջակներ, որոնք վեր բարձրանալով հաւաքւում են փորձանակի մէջ։ Եթէ բանկան ծածկենք արեկի լոյսից՝ պղպջակների տուաջացումը կակսի դանդաղել և վերջն էլ բոլորովին կդադարի։ Բայց



Տերեւի սննդառութիւնը  
ցոյց տաղ փորձը։

հենց որ նորից լոյսի տակ դնենք, կրկին կակսւի պշպջակների առաջացումը: Փորձանակն ամբողջովին գաղով ցւելուց յետոյ, եթէ զգուշութեամբ հանենք ջրից՝ մատով բերանը փակած և մացնենք մէջը մի այրւող փայտիկ, վերջինս իսկոյն կրցավառւի: Պարզ է, ուրեմն, որ փորձանակի մէջ հաւաքւած գաղը թթւածին է: Եթէ բանկան լցնենք եռաջրած ջրով և ապա դնենք արեի լոյսի տակ, պշպջակներ չեն առաջանայ, որովհետեւ այդպիսի ջրի մէջ ածխաթթու չի լինում. բայց բաւական է, որ մենք փոքր ինչ խողովակով փշենք ջրի մէջ, իսկոյն կակսի պշպջակների առաջացումը: Եւ այդ հասկանալի է: Փշելու ժամանակ ջուրն ստանում է ածխաթթու գազ:

Մեր փորձի ժամանակ բոյսն ածխաթթուն վերցրեց ջրից, բնութեան մէջ, սակայն, բոյսերն այդ գաղը վերցնում են օդից իրենց տերեներով: Կնշանակէ, բոյսերը սնում են օդով: Նրանք օդից վերցնում են իրենց սննդի ամենակարեւը մասը՝ ածխածինը, որ կազմում է ինչպէս խմացնք, բոյսի ամբողջ չոր նիւթի գրեթէ կէսը:

Բոյսի օդից ածխաթթու վերցնելը և թթւածին արձակեն ահագին նշանակութիւն ունի բնութեան մէջ: Եթէ այդ չլինէր, այն ժամանակ շնչառութիւնից օդի մէջ եղած թթւածինն այնքան կքչանար և ածխաթթուն, ընդհակառակը, այնքան կշատանար, որ կենդանի էակները նրա մէջ կիսեղդւէին, ճիշտ այնպէս, ինչպէս մկները խեղդւում են փակ անօթների մէջ: Ուրեմն, եթէ կեանքը պահպանում է երկրագնդիս վրայ, այդ շնորհիւ բոյսերի է. սրանք շարունակ մաքրում են օդը և շնչառութեան համար պէտքական գարձնում այն:

2. ԱՍԼԱՅԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: — Ածխաթթուն մտնում է տերեկի մէջ անցքերի միջով՝ օդի հետ միասին: Այնտեղ վեր է լուծւում նա թթւածնի և ածխածնի. թթւածինը գուրս է գալիս, իսկ ածխածինը մնում է տերեկի մէջ:


Ի՞նչ է լինում այնուհետեւ տծխածինը: Ուսումնասիրութիւնը ցոյց է տեկ, որ նա բաժանւելով թթւածնից, անմիջապէս միանում է ջրի հետ և կազմում մի նոր բարդ մարմին, այն է՝ օլայ:

Որ իրօք այդ գէպքում տերեների մէջ օլայ է առաջանում, պարզ երեսում է հետեւալ փորձից: Վերցնենք երկու բոյս: մէկը դնենք մթութեան մէջ, միւսը՝ արեի լոյսի տակ: Վերջինս, ինչպէս գիտենք, ածխաթթու գաղից կվերցնի ածխածին, մինչդեռ առաջինը մթութեան մէջ այդ անել չի կարող: Երեք օրից յետոյ, եթէ կտրենք տրյու բոյսերից մի մի հատ տերեկ և եփ տանը նրանց սպիրտի մէջ, երկուսն էլ կկորցնեն իրենց կանաչ գոյնը, որովհետեւ նրանց քլորօֆիլը կլուծւի սպիրտի մէջ: Այնուհետեւ այդ անգոյն տերեները մտցնելով եղողի մէջ՝ կնկատենք, որ այն տերեկը, որ եղել է լոյսի ազգեցութեան տակ, անմիջապէս մուգ կապոյտ գոյն է ընդունում, մինչդեռ միւսը մնում է նոյն անգոյն տերերը: Պարզ է, որ օլայ կայ միայն այն տերեկի մէջ, որ եղել է լոյսի տակ:

Դիտելով օլայ պարունակող տերեր մանրադիտակով՝ կտեսնենք, որ օլան գտնուում է քլորօֆիլի հատիկների մէջ փոքրիկ մասնիկներով: Քլորօֆիլի հատիկները, կնըշանակէ, այն գործարաններն են, ուր օդի ածխաթթուն վեր է լուծւում և նրա ածխածինն սիացւելով ջրի հետ՝ պատրաստում է օլայ: Ուրեմն, բոյսի միայն կանաչ մասերը կարող են օլայ պատրաստել, որովհետեւ միայն նրանք են, որ պարունակում են իրենց մէջ քլորօֆիլի հատիկներ:

Բայց ինչ է լինում այնուհետեւ օլան: Օլան, ինչպէս գիտենք, կարող է փոխարկել շաքարի, ինչպէս այդ լինում է ծլող սերմերի մէջ: Ահա ճիշտ արդպէս, տերեների մէջ նա ևս շաքարի է փոխարկւում և տերեկի մէջ

եղած ջղերով դուրս է տարւում դէպի բոյսի զանազան մասերն իրեւ սնունդ։ Օսլան առաջին գործարանական



Զանազան ձեւի օսլայի հատիկներ։

նիւթն է, որ պատրաստում է բոյսի մէջ նրանից են այնունեաւ պատրաստում միւս բոլոր նիւթերը, օրինակ, զանազան տեսակի բուսական իւղերը, բջիջների թաղանթները և այլն։ Վերջապէս, նա է, որ միանալով բուրակածնի, լուսածնի և ծծումքի հետ՝ առաջ է բերում սլրուողլազման։ Աճքողջ օսլան միանգամից իբր սնունդ երբէք գործ չի ածուում։ Նրա մի ժամն ամբարւում է այս ու այնտեղ և պահուում է իրեւ պաշար։ Կարտօֆիլի գունդը լիքն է օսլայով, նոյնը և ցորենի, բրինձի հատիկը։ Երբեմն բոյսն օսլան փոխում է շաքարի և այնպէս պաշար ամբարում, օրինակ ճակնդեղի արմատի կամ զանազան պտուղների մէջ, երբեմն էլ իւղեր է շինում, օրինակ, արևածաղկի և այլ զանազան սերմերում։


Այս բոլորից երեսում է, որ տերեւները բոյսի սննդառութեան ամենակարեւը գործարաններն են։ Դրանք են,

որ իրենց քլորօֆիլի հատիկների մէջ պատրաստում են անգործարանական մարմիններից՝ ածխածնից և ջրից՝ գործարանական մարմիններ։ Ոչ մարդ և ոչ էլ կենդանիներն այդ ձեռվ գործարանական նիւթեր չեն պատրաստում։ Նրանք սնուում են միայն այն նիւթերով, որ պատրաստում են բոյսի կանաչ տերեւների մէջ։ Կնշանակէ, եթէ երկրիս վրայ կանաչ բոյսեր չլինէին, ոչ մարդ և ոչ էլ կենդանիները չէին կարող սնւել, հետևապէս և չէին կարող ապրել։

3. ԼՈՅՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ. — Ածխաթթւի վերլուծումն իր բաղադրիչ մարմիններին, նոյնպէս և օսլայի առաջացումը տեղի է ունենում, ինչպէս տեսանք, արևի լոյսի ազդեցութեան տակ։ Ասել է, լոյսը բոյսի թէ սննդառութեան և թէ կեանքի համար անհրաժեշտ պայման է։ Եւ իրօք, եթէ մի լաւ զարգացած բոյս երկար ժամանակով դնենք մթութեան մէջ՝ կթառամի։ Սկզբում նրա գոյնը կդեղնի, ապա հետզհետէ կթուլանայ և վերջն էլ կմեռնի։ Նա կմեռնի սովից, որովհետև առանց լոյսի չի կարող նա օդից ածխածնի վերցնել և պատրաստել նրանից օսլայ։ Բայց այդ դեռ բոլորը չէ։ լոյսի ազդեցութեան տակ են առաջանում և քլորօֆիլի հատիկները, այն գործարանները, որոնց մէջ պատրաստում է օսլան։ Մթութեան մէջ ծլած բոյսը լինում է թոյլ, բարակ ու երկար և դեղնաւուն։ Նրա մէջ չեն լինում քլորօֆիլի հատիկներ և երբ սերմի մէջ գտնւած սննդարար նիւթերի պաշարը սպառուում է, բոյսը մեռնում է։ Բայց եթէ մինչեւ մեռնելը հանենք նրան լոյսի մէջ, նրա մէջ քլորօֆիլ կառաջանայ։ Նա կկանաչի, կսկսի օդից վերցնել ածխածին և պատրաստել նրանից օսլայ, բոյսն այնունեաւ կկաղդարւի և կսկսի կանոնաւոր կերպով աճել ու զարգանալ։

Այս բոլորը ցոյց է տալիս, որ բոյսն առանց լոյսի

ապլել չի կարող: Խիտ անտառներում, ուր արևի ճառագայթները ներս չեն թափանցում, գետնի վրայ խոտ չի



Լոյսի մեջ աճած լոբի:

Մբուրեան մեջ աճած լոբի:

քանում: Ծառերի ստորին ճիւղերն աս, որոնք լոյս չեն ստանում, չորանում, թափւում են: Լոյսի այդպիսի մեծ կարիք զգալով՝ բոյսերն աշխատում են իրենց տերեներով,



Յողութը ծաւամ է դեպի լոյսը:



Բնշքան կարելի է, շատ լոյս ստանալ: Տերեները միշտ ուղղում են դեպի լոյսը, ճիշտ այնպէս, ինչպէս արմատ-


ները միշտ ուղղում են դեպի այն կողմը, ուր կարող են աւելի սնունդ և խոնաւութիւն գտնել: Սենեակում պահող բոյսերի տերեները միշտ դարձած են լինում դէպի լոյսը: Ծառի ստւերում կանգնած ժամանակ նկատում ենք, որ արևի ճառագայթները տերեների արանքով շատ քիչ են ներս թափանցում, որովհետեւ տերեներն աշխատում են դասաւորւել այնպէս, որ ոչ մի ճառագայթի բզուր տեղը չի անցնում: Վերջապէս տերերի բարակ ու թերթի ձև ունենալը բացատրում է նրանով, որ այդ ձևով նրանք հնարաւորութիւն ունեն աւելի լոյս ստանալու:

### ՏԵՐԵԻՆ ԻՒՐԵՒ ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՐԻ ԳՈԼՈՐԾԱՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

1. ԲՈՅՍԵՐԻ ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆԸ:—Բոյսերն ևս միւս կեանք ունեցող էակների նման շնչում են. և ինչպէս տեսանք, շնչում են թէ զարգացած բոյսերը և թէ ծլող սերմերը, այսինքն նորածիլ բոյսերը: Շնչառութեան ժամանակ նրանք վերցնում են օդից թթւածին և արձակում իրենցից ածխաթթու: Հարց է առաջանում, մըդեօք բոյսերը շնչում են օրւայ բոլոր ժամանակները, թէ ոչ: Ձէ որ ցերեկը, արեգակի լոյսի ազդեցութեան տակ նրանք օդից ներս են ընդունում ածխաթթուն, և վերցնելով վերջինիցս իրենց սննդի համար կարեոր ածխածինը՝ թթւածինն արձակում են, այսինքն կատարում են շնչառութեան հակառակ մի գործողութիւն: Բազմաթիւ փորձերով հաստատած է արդէն, որ բոյսերը շնչում են և ցերեկը, լոյսի մէջ, սակայն, նրանց շնչառութիւնն այդ ժամանակ չի նկատում, ոչովհետեւ ածխաթթու վերցնելու գործողութիւնը քսան անգամ աւելի ուժեղ է կատարում, քան շնչառութիւնը: Գիշերը կամ մթութեան մէջ շնչառութիւնը պարզ կերպով նկատելի է դառնում,

որովհետև այդ ժամանակ ածխաթթու վերցնելու գործողութիւնը դադարում է:

Որ ցերեկը, լոյսի մէջ բոլոսի շնչառութիւնը շարունակւում է, ցոյց է տալիս հետեւեալ փորձը: Վերցնենք մի քանի ծաղիկներ, այսինքն քլորօֆիլից զուրկ մասեր և դնենք բանկայի մէջ: Որպէսզի ծաղիկներն այնտեղ չխառամեն, բանկայի մէջ կածենք և մի քիչ ջուր: Այնուհետև բանկան լաւ կծածկենք խցանով և դնենք արևի տակ: Երկու կամ երեք ժամից յետոյ,




Մոմք հանգում է անօրի մեջ:

միւսով՝ մի կոր խողովակ: Ապա վերջինիս ծայրը բեզինէ խողովակի միջոցով կմտցնենք կրածըով լիբը բաժակի մէջ: Այնուհետև երբ բանկայի մէջ ջուր ածենք, նրա միջի օղը դուրս կղայ կոր խողովակով և կմտնի կրածը մէջ: Այդ գործողութեան ժամանակ կնկատենք, որ կրածը պղպարուում է: Այդ էլ նշան է, որ բանկայի մէջ եղել է մեծ չափով ածխաթթու: Ուրեմն, բոյսը շնչում է նաև ցերեկը՝ արևի ճառագայթների տակ: Մենք փորձի համար վերցրինք դիտմամբ ծաղիկներ, որովհետև նրանք զուրկ լինելով քլորօֆիլի հատիկներից օդից ածխաթթու

շեն վերցնում, հետեւապէս և շնչառութեան չեն խանգարում: Բոյսի շնչառութիւնը կատարում է գլխաւորապէս տերեւների միջոցով: օդը տերեւի անցքերի միջով մտնում է միջըջային տարածութիւնները, այնտեղ բջիջները վերցնում են նրանից թթւածին և տալիս են նրան իրենց մէջ հաւաքւած ածխաթթուն, որ այնուհետև օդի հետ միասին դուրս է գալիս կրկին նոյն անցքերով:

2. ԶՐԻ ԳՈԼՈՐԾԻԱՑՈՒՄԸ ՑԵՐԵԿՆԵՐԻՑ:—Բացի սննդառութիւնից, տերեւները կատարում են և մի այլ աշխատանք: Նրանց միջոցով բոյսն ազատում է իր մէջ եղած ջրի աւելորդ մասից: Ինչպէս գիտենք, բոյսն իր արմատներով հողից վերցնում է ահազին քանակութեամբ ջուր: Այդ ջրի միայն մի աննշան մասն է զործագրում նա իր սննդառութեան վրայ, իսկ մեծ մասը տերեւների միջոցով գոլորշիացնում է: Որ իսկապէս տերեւների միջոցով գոլորշիացումն է կատարում, կարող ենք հաստատել հետեւեալ փորձով: Կվերցնենք երկու փորձանակ հաւասար մեծութեամբ, երկուսն էլ կլցնենք ջրով, ապա մէկի մէջ կդնենք նոր կորուած մի քանի հատ տերեւներ: Ուրոշ ժամանակից յետոյ, կնկատենք, որ տերեւները ունեցող փորձանակի ջուրն աւելի է պակասել, քան միւսինը: Պարզ է, որ այդտեղ գոլորշիացումը շնորհիւ տերեւների աւելի արագ է կատարված կատարութիւնը կատարուած գոլորշի: Գոլորշիացող ջրի քանակացումը ցոյց տող փորձ: Կութիւնն որոշելու համար վերցնում են մի ծաղկաման, որի մէջ գտնուում է որևէ բոյս, լաւ ջրում են, ապա հողի երեսը ծածկում են ինամբով անապի բարակ շերտով,



որպէսզի այնտեղից գոլորշիացումն տեղի չունենայ և կշռում են, ամբողջ ծաղկամանը: Մի օրից յետոյ ծաղկամանը նորից կշռում են: Բաշերի մէջ եղած տարրերութիւնը ցոյց կտայ գոլորշիացած ջրի քանակութիւնը: Այդպիսի փորձեր կատարելով՝ գտել են, որ արեածաղիկը մի օրւայ մէջ գոլորշիացնում է իրենից 3—4 բաժակ ջուր, կաղամբը՝<sup>15</sup> 15 բաժակ, իսկ միջակ մեծութեան կազնին ամաբային տաք օրերին՝ աւելի քան 5 վեզրո ջուր: Մարդիկ հաշւել են, որ մի դեսեատին գարու արտն ամառայ ընթացքում գոլորշիացնում է 240 հազար, իսկ եղիպատացրենինը՝ 500 հազար վեզրո ջուր:

Բայց ի՞նչու է բոյսն այդչափ շատ ջուր գոլորշիացնում: Պատճառը հասկանալի է: Բոյսը նողից ջուր է ծըծում, եթէ այդ ջուրը մասր բոյսի մէջ, պարզ է, որ նա այլևս նոր ջուր չէր ծծի, ինչպէս որ ջրով լցւած սպունդն այլ ևս ջուր չի ծծում: Զրի մէջ լուծւած դրութեամբ գտնուում են զանազան մննդարար նիւթեր: Ուրեմն, եթէ բոյսն այլ ևս ջուր չծծէր, կզրկէր և այդ նիւթերից: Իսկ զրա հետեանքը կլինէր այն, որ նա սովամահ կլինէր, ինչպէս սովամահ է լինում, երբ օղից հարկաւոր չափով ածխածին չի ստանում: Կնշանակէ, բոյսը գոլորշիացման միջոցով հնարաւորութիւն է ստանում շարունակ նողից նոր ջուր, հետեապէս և նոր մննդարար նիւթեր ծծելու: Զրի գոլորշիանալուց յետոյ, նրա մէջ եղած մննդարար նիւթերը մուս են բոյսի մէջ և գործ ածւում իրեւ սնունդ:

3. ԳՈԼՈՐՇԻԱՑՄԱՆ ԱՐԱԳԱՑՄԱՆ ԵՒ ԴԱՆԴԱՂԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՐԵՒՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ: — Բոյսերից ջրի գոլորշիացումը շարունակ նոյն չափով է կատարում: Երբ բոյսը խոնաւ տեղում է գտնուում և տուառ ջուր է ստանում, գոլորշիացումն արագ և ուժեղ է կատարում, իսկ երբ, ընդհակառակը, չոր և ջրաղուկ վայ-

րում է գտնում, գոլորշիացումը թուլանում, դանդաղում է: Բացի դրանից, չոր և տաք եղանակներին բոյսերից աւելի շատ ջուր է գոլորշիացնում, քան խոնաւ և ցուրտ եղանակներին: Կնշանակէ, համաձայն ստացած ջրի քանակութեան և շըջապատի օդի պայմաններին՝ գոլորշիացումը կամ ուժեղանում է և կամ թուլանում: Ի՞նչպէս է կատարուում այդ: Ամենից առաջ տերեւի վրայ եղած անցքերը, որոնց միջոցով տեղի է ունենում գլխաւորապէս գոլորշիացումը, ինչպէս տեսանք, կարող են մեծանալ և կամ փոքրանալ, նոյն իսկ փակւել: Խոնաւ եղանակներին բոյսն այդ անցքերը մեծացնում է, ինչքան հնարաւոր է, իսկ չոր եղանակներին, ընդհակառակը, փոքրացնում է, երբեմն նոյն իսկ բոլորովին փակում: Անցքերը մեծացրած ժամանակ գոլորշիացումը ուժեղանում է, փոքրացրած ժամանակ՝ թուլանում, դանդաղում: Ապա չոր և խոնաւ տեղերում աճող բոյսերի տերեւները նոյն ձեն ու յատ-



2



3



4



5

կութիւնը չունեն: Խոնաւ տեղերի բոյսերի տերեւները մեծ են լինում, լայն սկուտեղներով և ունենում են շատ ու չափազանց մեծ անցքեր: Բացի դրանից, լինում են քնքոյշ և պատած բարակ թաղանթներով: Այս բոլոր հանգամանքները նպաստում են գոլորշիացման արագացման և ուժեղացման: Իսկ չոր տեղերում աճող բոյսերի տերեւները, ընդհակառակը, փոքր են լինում, նեղիկ կամ բաժանած բազմաթիւ բլթակների, ունենում են քիչ և փոքր կտակուս, որի տերեւները բացւածքներով անցքեր: Նրանց տերեւների կամարկւած են փշերի: Ները պատած են լինում սովորաբար, կոշտ մաշկով, այն ևս ծածկւած մոմանման նիւթի մի հասաւ շերտով: Այս բոլոր հանգամանքները թուլացնում,

դանդաղացնում են գոլորշիացումը։ Բացի դրանից, չոր տեղերի բոյսերի տերեները յաճախ պատած են լինում մազմզուկներով։ Այս մազմզուկները նոյնպէս խանգարում են գոլորշիացման։ Որովհետև գոլորշիացումը մեծ մասմբ տերենի ստորին երեսից է տեղի ունենում, զրա համար էլ մազմզուկները գլխաւորապէս այդ երեսի վրայ են լինում։ Չոր երկրների մի քանի բոյսեր, որպէսզի գոլորշիացումը նւազագոյն չափերի հասցնեն, զրկւել են բոլորովին տերեներից։ Այդպէս են, օրինակ, կակտուսները։ Մըանց տերեները փոխարկւել են փշերի։ Այդ բոյսերի տերեների դերը իրենց վրայ են վերցրել մասու և կանաչ ցողունները։

## Յ Օ Ղ ՈՒ Ն

Յօղուն կաչւում է բոյսի այն մասը, որ զարգանում է սաղմի բողբոջիկից և կրում է իր վրայ տերեներ։ Յօղունն երկու պաշտօն ունի։ Մի կողմից տերեները հանում է օդի ու լոյսի մէջ և դրանով յարմարութիւն տալիս իւրաքանչիւր տերենի օգտւելու լոյսից, միւս կողմից էլ արմատի միջոցով հողից ծծած ջուրը և սրա մէջ լուծւած հանքային նիւթերն իր միջով առանում հասցնում է տերեներին և ընդհակառակը, տերեների մէջ ջրից ու ածխածնից պատրաստած գործարանական նիւթերը՝ տերեներից տանում է դէպի բոյսի միւս մասերը։

## Յ Օ Ղ ՈՒ ՆԻ ԱՃՈՒՄԸ ԵՒ ԶԵՒԵՐԸ

1. Յ Օ Ղ ՈՒ ՆԻ ԱՃՈՒՄԸ.— Սերմերի ծլման ժամանակ, ինչպէս տեսանք, սաղմի բողբոջիկից զարգանում է ցողունը։ Վերջինս, որպէսզի իր տերեները դուրս հանի լոյսի և աղատ օդի մէջ, շարունակ ուղղուում է դէպի վեր։ Նա աճում է գլխաւորապէս գագաթից և տալիս է այդ-

տեղից մէկը միւսի յետեկից նորանոր տերեներ։ Յօղունի այն մասերը, որոնց կպչում են տերեները, կոչւում են հանգոյցներ։ Երկու հանգոյցների միջի տարածութիւնը, ուրիշ կերպ ասած, մի տերեկից մինչև միւսը եղած տարածութիւնը, կոչւում է միջնանգույային։ Եթէ կորենք երկայնութեամբ ցողունի աճող գագաթիկը, կնկատենք, որ նա բաղկացած է մէկը միւսի վրայ նստած և դեռևս կատարելապէս չզարգացած տերեներից։ Նրանց մէջ աւելի հսերը ծածկում են իրենց տակ և պաշտպանում այդպիսով աւելի նորերին զանազան վտանգներից։ Յօղունի այդպէս անզարգացած տերեներից բաղկացած գագաթիկը կոչւում է բողբոջ կամ պտուկ։ Բացի գագաթային աճումից, ցողունի մատաղ մասերն աճում են և իրենց ամբողջ երկայնութեամբ։ Եթէ ցողունի այդպիսի մատաղ մասի վրայ նշաններ անենք միմեանցից հաւասար հեռաւորութեան վրայ, ինչպէս արել ենք արմատի ծայրի վըրայ՝ նրա աճումը դիտելու համար, որոշ ժամանակից յետոյ, կնկատենք, որ այդ նշանները հեռանում են միամեանցից, և վերելի մասում շատ աւելի, քան ներքենում։ Այդ ցոյց է տալիս արդէն, որ աճումը վերենում ուժեղ կերպով է տեղի ունենում, ներքենում՝ թուլ։ Նոյն երկոյթը կարող ենք դիտել գարնանը և մատաղ ճիւղերի վրայ։ Քանի նրանք փոքր են, տերեներն իրար շատ մօտ են լինում, ուրիշ կերպ ասած, միջնանգույային տարածութիւնները շատ կարծ են լինում։ իսկ երբ ճիւղը աճում է, այդ տարածութիւնները մեծանում են և տերեներն իրարից հեռանում։

2. Յ Օ Ղ ՈՒ ՆԻ ՃԻՒՂԱՒՈՐՈՒՄԸ.— Յօղունը սովորաբար ճիւղաւորւում է՝ կողմնակի ճիւղեր արձակելով։ Յօղունի ճիւղաւորւումը կատարւում է բողբոջների միջոցով։ Այդ բողբոջները շատ լաւ տեսանելի են ծառերի վրայ, մանաւանդ ճսեռը։ Յօղունի կամ ճիւղի գագաթին նստած բող-

բոջը կոչւում է գագարային, իսկ կողքերում նստածները՝ անուրային։ Վերջիններս գտնւում են տերեների անութներում, այսինքն այնտեղ, որտեղ տերեները կպչում են ցողունին։ Կողմանակի ճիւղերն առաջանում են հէնց այդ բողբոջներից։

Բողբոջներն առաջանում են ամառը։ Զմեռը ցրտից պաշտպանւելու համար նրանք դրսից ծածկւած են լինում հաստ խէժոտ թեփուկներով։ Եթէ կտրենք բողբոջն երկայնութեամբ, կնկատենք, որ նա բաղկացած է իրար վրայ խիտ կերպով նստած սաղմնային վիճակի մէջ գըտնւող տերեներից։ Դրսից այդ տերեները ծածկող թեփուկները նոյնպէս տերեններ են, բայց ձեափոխւած։ Գարնանը, երբ օրերը տաքանում են, բողբոջներն սկսում են բացւել։ Սկզբում նրանք փոքր ինչ մեծանում են, ապա բացւում են նրանց թեփուկները, որից յետոյ երեսում է ոլորուն վիճակի մէջ գտնւող մատաղ տերեների մի ամբողջ փունջ։ Այդ տերեներն այնտեղ նստած են լինում մի կարճ ցօղունիկի վրայ։ Այնուհետև թեփուկները թափւում են, իսկ ցօղունիկը երկարում է՝ փոխուկները բացւում։ 1) Ոստ պտուկներով. 2) Պտուկները բացւում են։ Խարկւելով ճիւղի. սրա վրայ նստած մատաղ տերեների անութներում նըկատում են նոր բողբոջներ։ Զմեռը բողբոջների բացւելը դիտելու համար կտրում են ուռենու կամ բարտու ճիւղը և դնում ջրի մէջ։ Մօտ երկու շաբաթից յետոյ բողբոջներն սկսում են բացւել։



1) Ոստ պտուկներով. 2) Պտուկները բացւում են։ Խարկւելով ճիւղի. սրա վրայ նստած մատաղ տերեների անութներում նըկատում են նոր բողբոջներ։ Զմեռը բողբոջների բացւելը դիտելու համար կտրում են ուռենու կամ բարտու ճիւղը և դնում ջրի մէջ։ Մօտ երկու շաբաթից յետոյ բողբոջներն սկսում են բացւել։

3. Յօղունի Տե՛սակների. — Յօղունները ձևով շատ բազմազան են լինում։ Կան խոտային և փայտային ցօղուններ։ Խոտայինները փափուկ ու ճիւթալի են և ապրում են մեծ մասամբ մի տարի, փայտայիններն, ընդհակառակը, ամուր են, բաղկացած փայտացած բջիջներից և ապրում են երկար տարիներ։ Խոտային ցօղուններն խոտերը, փայտային՝ ծառերն ու թփերը։ Ծառերն ունեն գլխաւոր ցօղուն կամ բուն, որ արձակում է ամեն կողմի վրայ ճիւղեր, ինչպէս տանձենին, կաղնին, մայրին և այլն, իսկ թփերը գուրկ են այդպիսի գլխաւոր բնից։ Նրանց արմատից դուրս են գալիս նման հաստութիւն ունեցող մի քանի ցօղուններ։ Վարդենին, տխլին, հաղարձենին, սորենին թփեր են։

Ծառերի ցօղունները հսկայական բարձրութիւն են ունենում։ Օրինակ, կաղնու, շամու, եղևնու ցօղունները երեմն 10—15 սաժէն բակեմբութեան են հասնում։ Էվկալիպտները Աւստրալիայում և Վիլինգսոնիաները Ամերիկայում՝ հասնում են նոյն իսկ 70 սաժէն բարձրութեան։ Խոտային ցօղուններն, ընդհակառակը, շատ անշան մեծութիւն են ունենում։ Մի քանի խոտերի ցօղունները նոյն իսկ այնքան կարճ են լինում, որ տերենները կարծես դուրս են գալիս ուղղակի արմատից։ Այդպիսի ցօղուն ունեն, օրինակ, խտուտիկը, տակը կամ ճակնդեղը և այլն։

Ցօղունները տարբերում են բնականաբար նաև իրենց հաստութեամբ։ Կան մի քանի սաժէն, բայց կան և միանգամայն աննշան հաստութիւն ունեցողներ։

Մի քանի խոտային բոյսերի ցօղուններ այնքան թոյլ են, որ իրենց դիրքը պահպանում չեն կարողանում։ Սրանք իրենց տերեններն արեն անմիջական ճառագայթների տակ դնելու համար՝ դիմում են զանազան միջոցների։ Նրանցից մի քանին, օրինակ, փաթաթւում են ուրիշ բոյսերի

և այդ ձեռվ բարձրանում վեր, ինչպէս փաթաթուկը։ Այդպիսիները կոչւում են փաթաթող բոյսեր։ Մի քանիսն էլ ունեն առանձին թելիկներ կամ խիղբեր, որոնցով կառչում են ուրիշ բոյսերի կամ իրերի և այդպիսով բարձրանում վեր։ սրանք էլ կոչւում են մազլցողներ։ Մազլցողներ են խաղողի որթը, սիսեռը և այլն։ Կան և գետնատարածներ։ սրանք փուռում են ուղղակի գետնի վրայ, վարունգը, սեխը, ձմերուկը, դդումը գետնատարած բոյսեր են։ Վերջիններս աճում են միայն բաց տեղերում։

### ՅՈՂՈՒՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԶՐԻ ՈՒ ՍՆՆԴԱՐԱՐ ՆԻՒԹԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՆՐԱ ՄԻՋՈՎ։

1. ՅՈՂՈՒՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ։— Յօղունի կազմութեան հետ ծանօթանալու համար, վերցնում են լոբու, սիսեռի կամ որևէ այլ բոյսի թարմ ցօղունից լայնութեամբ կարւած մի շերտ և դիտում մանրադիտակով։ Դիտողութիւնը ցոյց է տալիս, որ ցօղունը տերեւի նման, դրսից պատած է պատեանով՝ բաղկացած տափակ և հաստ թաղանթներ ունեցող բջիջներից։ Այդ պատեանը շատ ցօղուներից հեշտութեամբ կարելի է վերցնել։ Յօղունի ներսը բաղկացած է համեմատաբար աւելի մեծ, կանոնաւոր ձև և քնըոյց թաղանթներ ունեցող բջիջներից։ Սրանք կազմում են ցօղունի հիմնական հիւսւածքը։ Այս հիւսւածքի մէջ, պատեանին մօտիկ մասերում, կան փոքրիկ շրջաններ, բաղկացած աւելի փոքրիկ բջիջներից։ Սրանք ցօղունի մէջ կազմում են խուրձեր կամ ջղեր, որոնք անցնելով ամբողջ երկայնութեամբ՝ մտնում են տերևները և ճիւղաւորում նրանցմէջ։ Դիտելով ցօղունի երկայնութեամբ կարւածքը մանրադիտակով՝ նկատում ենք, որ ջղերը բաղկացած են երկարուկ ձև ունեցող բազմազան բջիջներից։ Նրանց մի մասը միացած են միմեանց հետ, որովհետեւ նրանց միմիանցից բաժանող միջնապատերը վերացած

են։ Դրանք կազմում են ցօղունի մէջ երկար խողովականեր կամ, ինչպէս ասում են, անօթներ։ Անօթներն իրենց մէջ օղակներ պարունակելու պատճառով կոչւում են նաև օղակաւոր անօթներ։ Միւսները նման են բարակ, երկար, ճկուն, բայց և ամուր թելերի։ Այս է պատճառը, որ ջղերը կոչւում են նաև անօթաթելային խուրձներ։ Սրանք ցօղունի հիմնական հիւսւածքը բաժանում են երկու մասի։ Խուրձերից դէպի ներս եղած մասը կոչւում է ծուծ կամ միջուկ, իսկ դէպի պատեանը եղած մասը՝ նախնական կեղեւ։ Վերջինս միանում է միջուկի հետ միջուկային շառաւիղներով, որոնք անցնում են անօթաթելային խուրձերի արանքով։

Անօթաթելային խուրձերի այն մասը, որ դարձած է դէպի միջուկը, կոչւում է բնափայտ։ Բնափայտը կազմ<sup>1) թել. 2) օղակաւոր անօթ.</sup>ւած է խողովակներից կամ անօթներից, որոնք բաղկացած է գլխաւորապէս բարակ ու երկար թելերից։ Թելերի արանքում գտնուում են անօթներ։ Վերջիններս կազմող բջիջներն ունեն մաղի նման ծակոտկէն միջնապատեր, դրա համար էլ անօթները կոչւում են մալանման։ Մաղանման անօթների բջիջները կենդանի են, որովհետեւ ունեն իրենց մէջ պրոտոպլազմա, բայց զուրկ են




բազմանալու ընդունակութիւնից: Բնափայտի և լուբի արանքում գտնւում է խուրձերի երրորդ մասը, կամրիւմը: Սա բաղկացած է կենդանի քնքոյշ բջիջներից, որոնք շարունակ կիսւելով՝ բազմանում են: Այդ մասից առաջանում է մի կողմից բնափայտ, միւս կողմից՝ լուբ: Կամրիւմը ցօղունի ամենակարևոր մասն է: Այսպիսով, ուրեմն, անօթաթելային խուրձերը բաղկացած են երեք մասից՝ բնափայտից, լուբից և կամրիւմից: Խոտային բոյսերի և միամեայ փայտային ճիւղերի կամ ընձիւզների ցօղուններն այդ կազմութիւնն ունեն: Փայտային բոյսերի ցօղունի մէջ՝ սակայն, ժամանա-




Մաղանան անօթներ:

կի ընթացքում տեղի է ունենում ուրոշ փոփոխութիւն: Առաջին տարւայ վերջը կամրիւմի շերտն աճելով անցնում է միջուկային շառափակների միջով և կազմում ամբողջական մի օղակ: Այդ շերտն, ինչպէս տեսանք, դէպիներսն առաջ է բերում բնափայտ, դէպի դուրսը՝ լուբ:



1) Թաղանթ, 2) Անօթաթուրձ, 3) Հուբ, 4) Կամրիւմ, 5) Բնափայտ, 6) Կամրիւմ, 7) Կեղև, 8) Միջուկ:

Ահա այդ պատճառով տարւայ վերջը բնափայտն ևս կազմում է մի ամբողջական օղակ, որի միջով տեղ տեղ անցնում են միայն նեղիկ բնափայտային շառափակներ: Նըման ամբողջական օղակ կազմում է նաև լուբի մէջ: Զմեռը կամրիւմի գործնէութիւնը դադարում է: Գարնանը սակայն բջիջները սկսում են կրկին բազմանալ և մի կողմից առաջ բերել բնափայտ, միւս կողմից՝ լուբ, եւ որովհետև առաջացած բնափայտը միշտ աւելի է լինում, քան լուբը, դրա համար էլ ծառերը հաստանում են զլխաւորապէս բնափայտի շատանալու հետեւանքով: Գարնանը և ամբանը բնափայտն առաջանում է խոշոր և աւելի բաց գոյնի բջիջներից, աշնանը փոքր և սութ գոյնի բջիջներից: Այս է պատճառը, որ ծառերի բնի լայնութեամբ տեղի ունեցած կտրւածքի վրայ բնափայտի մէջ նկատելի են շրջաններ: Իւրաքանչիւր շրջան առաջանում է մի տարւայ ընթացքում, դրա համար էլ այդ շրջանները կոչւում են սարեկան շրջաններ կամ շերտեր: Շերտերի թւով կարելի է որոշել ծառի տարւեքը:



Բնի լայնութեամբ կտրւածքը, ծրեսում են տարեկան շերտերը:


Ե խցանային հիւսւածք, որ պաշտպանում է ցօղունի միւս մասերը զանազան վտանգներից: Այդ հիւսւածքը բաղկացած է մեռած բջիջներից: Դրա համար էլ չի աճում: Երբ բունը հաստանում է, ծառերի կեղեւը ճեղքածքներ է տալիս: Մեծ ճեղքածքներ են ունենում մա-

Նաւանդ բազմամեայ կաղնիները, ընկուզենիները, մայրիները։ Նախնական կեղեր խցանային հիւտածքի և լուբի հետ միասին կազմում է ծառերի բնի այն մասը, որ սովորաբար կոչւում է կեղեւ։ Այդ կեղերը բնից հեռացւում է հեշտութեամբ, մանաւանդ գարնանը, որովհետեւ բնափայտը լուրից բաժանող կամքիւմի քնքոյշ բջիջներն այդ ժամանակ հեշտութեամբ բաժանւում են իրարից։ Կեղեի տակ գտնւում է հաստ բնափայտը, իսկ սրա մէջ էլ միջուկը։ Միջուկը ծառերի մէջ չի աճում։ Նա միշտ ունենում է նոյն մեծութիւնը։

2. ԶՐԻ ԵՒ ՍՆՆԴԱՐԱՐ ՆԻՒԹԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ 80ՂՈԽՆ  
ՄԻՉՈՎ։ —Տերեների մէջ, որպէսզի օսլայ պատրաստվի,  
անհրաժեշտ է ջուր։ Արմատների ծծած ջուրը, ուրեմն,  
պէտք է բարձրանայ ցօղունի միջով վերև և համնի տե-  
րեներին։ Իսկ տերեների մէջ պատրաստւած գործարա-  
նական նիւթերն անհրաժեշտ անունդ են ամբողջ բոյսի  
համար, ուրեմն, նրանք էլ պէտք է տերեներից գնան ցած,  
ցօղունի միջով, դէպի բոյսի բոլոր մասերը։ Ցօղունի որ  
մասերով են շարժւում ջուրն ու ալդ սննդարար նիւ-  
թերը։ Պարզ է նախ և առաջ, որ նրանք պէտք է ունենան  
տարրեր ճանապարհներ, որովհետև այլապէս ջուրը կխառ-  
նէր սննդարար նիւթերի հետ և կխանդարէր նրանց  
շարժումը։

Վերցնենք ծառի մի փոքրիկ ճիւղ, օղակաձև կտրենք  
նրա կեղեց մինչև բնափայտը և դնենք ջրի մէջ այնպէս,  
որ օղակաձև կտրւածքը մնայ ջրից դուրս. Եթէ ջուրը  
գնար կեղեի կամ լուրի միջով, հասկանալի է, որ կթա-  
ռամէր ճիւղը, որովհետև ջուրը տերևներին չէր հասնի:  
Սակայն, փորձը ցոյց է տալիս, որ ճիւղը չի թառամում:  
Այդ նշան է, որ ջուրը գնում է կամ բնափայտի և կամ  
միջուկի միջով։ Հին ծառերի մէջ յաճախ միջուկը փը-  
տում է. նրանց մէջ առաջանում է փչակ. երբեմ այդ

վիշակը չափազանց մեծանում է, որովհետեւ փառմ են  
նաև բնափայտի հին շերտերն ևս: Բայց, չնայած այդ  
բոլորին, ծառը շարունակում է աճել: Կնշանակէ, ջուրը  
գնում է միայն բնափայտի միջով, այն ևս նրա թարմ  
շերտերով:



4 m p 6 w 6 o p b r:

նում և հէնց այդտեղից էլ առաջանում են արմատներ: Հուրի միջով սննդարար նիւթերը գնում են մաղանման անօթներով: Մի քանի բոյսերի տերեներում պատրաստած սննդարար նիւթերը ցած տարւելու համար բացի մաղանօթներից, կան նաև երկար ու խիստ ճիւզաւորւած խողովակներ, որոնք կոչում են կարնանօրեր: Այս անօթները կտրած ժամանակ դուրս է գալիս կաթի գոյն ունեցող մի թանձր հեղուկ:

### 3. Ի՞ՆՉՈՒ Է ԶՈՒՐԾԱՆՈՒՄ ՑՈՂՈՒՆԻ ՄԻՉՈՎ:—

Չուրը բարձրանում է ցողունի միջով երկու պատճառով: Մէկը նրանցից յայտնի է մեղ, այդ արմատային ճնշումն է: Արմատի մազմզուկները ջուր ծծելով հողից, մղում են այն դէպի ցողունը և այդպիսով վեր բարձրացնում: Միւս պատճառը ջրի գոլորշիացումն է տերեներից: Տերեներն իրենց միջի ջուրը գոլորշիացնելով, կրկին նոր ջուրեն ծծում և այդպէս շարունակ: Կտրենք բարտու տերեներ ունեցող մի ճիւղ և մտցնենք կտրւած մասը ջրի մէջ: Ջրից դուրս հանելուց յետոյ կտրւած մասի վրայ կտեսնենք ջրի մի կաթիլիկ: Շուտով այդ կաթիլիկը կծծւի ներս: Եթէ նորից ճիւղի ծայրը մտցնենք ջրի մէջ, դարձեալ նրա կտրւած ծայրի վրայ կմայ մի կաթիլիկ, որ կրկին նոյն ձեռվ կծծւի ճիւղի մէջ: Արմատային ճնշումն ու ջրի գոլորշիացումը տերեներից, ահա այն դըլխաւոր պատճառները, որոնց շնորհիւ ջուրը բարձրանում է ցողունի միջով:

### ՑՈՂՈՒՆԻ ԻԲՐԵՒ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

1. ԱՏՈՐԵՐԿՐԵԱՑ ՑՈՂՈՒՆԻԵՐ:—Մի քանի բոյսեր, բացի գետնից վեր եղած ցողուններից, ունեն նաև ճետփոխւած ստորերկրեայ ցողուններ: Այդ ցողունները ծառայում են բոյսի համար որպէս բազմացման գործարան-

ներ: Ստորերկրեայ ցողուններն երեք տեսակ են և կոչւում են կրնջարմատ, կրնջէգ և պալար:

Կրնջարմատ ունեն շատ խոտաբոյսեր. արտաքուստ նման է նա արմատի, այդ պատճառով էլ արմատ անունով կոչւում: Բայց որ նա արմատ չէ, այլ ցողուն, այդ եւ է կոչւում: Բայց որ նա արմատ չէ, այլ ցողուն, այդ եւ է կոչւում է նրանից, որ նրա վրայ կան թեփուկների ձեւ ունեցող չզարգացած, ճետփոխւած տերեներ, մինչդեռ ինչպէս գիտենք, արմատն երբէք տերեն չի ունենում:

Կոճղարմատը սովորա-

բար ձգւում է հողի

տակ հորիզոնական ուղ

ղութեամբ և իր ներ-

քեի երեսից արձակում

է թելանման արմա-

տամիկներ: Կոճղար-

մատի առջևի ծայրը

շարունակ աճում է,

յետեկնը՝ ընդհակա-

ռակը, մեռնում: Առ-

ջեի աճող ծայրը վեր-

ջանում է գագաթային

բողբոջով, իսկ թե-

փուկների նմանող տե-

րեների տակ գտնուում

են կողմանակի բողբո-

ները: Մի քանի բոյ-

սերի մօտ գետնից

վեր գտնուող ցողուն-

ները գարգանում են կոճղարմատի գագաթային բողբոջուց:

այդ դէպօւմ գագաթային բողբոջը ծուռում է վեր և

դուրս գալիս հողի երեսը, իսկ կոճղարմատը շարունակ-

ում է աճել հողի տակ՝ կողմանակի բողբոջներից: Միւ-



Կ ո ն դ ա ր մ ա ս :

վեր գտնուող ցողուն-

ները գարգանում են կոճղարմատի գագաթային բողբոջուց:

այդ դէպօւմ գագաթային բողբոջը ծուռում է վեր և

դուրս գալիս հողի երեսը, իսկ կոճղարմատը շարունակ-

ների մօտ, սակայն, գետնից վեր գտնւող ցողունները զարգանում են կողմանակի բողբոջներից։ Կողմանակի բողբոջներից զարգանում են նաև կոճղարմատի ձիւղերը, որոնք իրենց հերթին ընձիւղներ տալով՝ դուրս են գալիս գետնի երեսը։ Երբ կոճղարմատի մեռնող մասը հասնում է ճիւղաւորւած շրջանին, ճիւղերը բաժանում են միմիանցից։ Այդ դէպքում ստացւում են առանձիեառանձին բոյսեր։ Այսպիսով, ուրեմն, կոճղարմատի միջոցով բոյսը բազմանում է։ Բացի դրանից, կոճղարմատի շնորհիւ, որ խորը թաղւած է հողի մէջ, խոտաբոյսերն իրենց գոյութիւնը պահպանում են երկար տարիներ։ Աշնանը մեռնում է միայն գետնից վեր գտնւող ցողունը, իսկ կոճղարմատը ձմեռւայ ընթացքում պահպանում է իր կեանքը և գարնան արձակում իրենից նոր ընձիւղներ։ Կոճղարմատի մէջ բոյսերն ամբարում են մննդարար նիւթեր, որոնցով այնուհետև գարնանը մնում են մատաղ ընձիւղները։


Պալարները նոյնպէս ձեափոխւած ստորերկրեայ ցողուններ են։ Պալարի օրինակ կարող են լինել կարտոֆիլի գնդերը։ Սրանք զարգանում են ոչ թէ արմատի, այլ բարակ ստորերկրեայ ցողունների վրայ։ Այս ցողունների ծայրերում հաւաքում է սեծ քանակութեամբ մննդարար նիւթ՝ օսլայ, որից սկսում են նրանք հետզհետէ մեծանալ և պալարների ձև ընդունել։ Եւ իրօք, պալարները լիքն են օսլայով։ Պալարներ կարող են առաջանալ նաև գետնից վեր գտնւող ցողունների վրայ։ Դրա համար հարկաւոր է ցողունի որև է մասը մթութեան մէջ պահել։ Ծաղկամանի մէջ աճած կարտոֆիլի թփի որև է ճիւղ, եթէ զնենք մի խաւաքարտէ արկղիկի մէջ այնպէս, որ ճիւղի ծայրը տերեւներով ազատ մնան, երկու շաբաթից յետոյ կտեսնենք, որ ճիւղի մթութեան մէջ եղած մասից դուրս են եկել փոքրիկ պալարներ։

Պալարների միջոցով բոյսերը բազմանում են։ Կարտոֆիլի գնդերի վրայ, տեղ-տեղ կան փոսեր, որոնց մէջ նկատելի են բողբոջներ՝ ծածկուկներով, այսինքն չղարգացած տերեւներով։ Այդ բողբոջները կոչւում են աչեմեր։ Հողի մէջ եղած ժամանակ պալարի այդ աչեմերց գարնանը զարգանում են ընձիւղներ, որոնք դուրս են գալիս գետնի երեսը։ Պալարի վրայ սովորաբար լինում են մի քանի աչեմեր։ Եթէ պալարը բաժանենք մասերի այնպէս, որ իւրաքանչիւր մասի վրայ լինի մի աչք և զնենք հողի մէջ, ապա իւրաքանչիւր մասից կառաջանայ մի առանձին բոյս։ Նորածիլ բոյսն իր մնունդը վերցնում է պալարի մէջ եղած օսլայից։

Ստորերկրեայ ցողուն է նաև կոնդէզը։ Սա բաղկացած է հաստ մսոտ ձեսփոխւած տերեւներից, որոնք խիտ կերպով նստած են իրար վրայ։ Այդ տերեւները դուրս են գալիս կոճղէզի ներքենում գտնւող մսոտ մասից, որ կոչւում է յատակ և որը ոչ այլ ինչ

է, բայց եթէ խիստ կարճացած ցողուն։ Կոճղէզի արտաքին տերեւները չոր են ու պինդ։ Մրանք պաշտպանում են կոճղէզը չորանալուց, իսկ ներքիններն, ընդհակառակը, մսոտ են ու հիւթալի և պարունակում են իրենց մէջ ծիլի համար մննդարար նիւթեր։ Իւրաքանչիւր թեփուկի անութում գըտնւում է մի բողբոջ։ Գարնանը կոճղէզի յատակից դուրս է գալիս թելանման արմատների մի

<sup>ա)</sup> Պառկները, <sup>բ)</sup> Ցառակը մէկը կամ մի քանիսը զարգանալով տալիս են գետնից վեր գտնւող ցողուններ։ Այս ցողուններն սկզբում իրենց



Կ ո ն դ է զ.

<sup>ա)</sup> Պառկները, <sup>բ)</sup> Ցառակը մէկը կամ մի քանիսը զարգանալով տալիս են գետնից վեր գտնւող ցողուններ։ Այս ցողուններն սկզբում իրենց

մնունդը վերցնում են կոճղէզի մսոտ տերեներից։ Աշնանը բոյսը տալիս է նոր կոճղէզներ, որոնք ձմեռը մտում են հողի տակ և հետեւեալ գարնան առաջ բերում նոր բոյսեր։ Կոճղէզներով բազմանում են սոխը, շուշանը և այլն։

2. ԲԱԶՄԱՑՈՒՄՆ ՇԻՒՂԵՐՈՎ. ԵՒ ՄԱՏՆԵՐՈՎ. — Մի քանի բոյսեր բազմանում են ոչ միայն ստորերկերեայ այլ և գետնից վեր գտնւող ցողուններով, օրինակ, շիւղերով մատերով և բողբոջներով։


Շիւղերով բազմացնելու համար բոյսի ճիւղը ծռում են ցած՝ դէպի գետինը, ծայրը բարձրացնում վեր, իսկ միջն մասը ծածկում հողով։ Հողի մէջ գտնւող մասից շուտով դուրս են գալիս երկրորդական արմատներ։ Եթե վերջիններս բաւականին զարգանում են, ճիւղը կը տրում են մայր բոյսից։ այդպիսով ստացւում է մի նոր ինքնուրոյն բոյս։ Որպէսզի ճիւղը շուտով երկրորդական արմատներ արձակի, հողի մէջ գտնւող մասի կեղկի վրայ անում են օղակածն կտրւածք։ Այս ձեռվ բազմացնում են գլխաւորապէս հաղարձենին։

Մի քանի բոյսեր բազմանում են այդ ձեռվ և իլէնք իրենց, օրինակ, ելազը, մանիշակը և այլն։ Մրանք արձակում են բարակ, երկար և գետնի վրայ փուող թելլկներ, որոնց վրայ լինում են բողբոջներ։ Այս բողբոջներն արձակում են իրենցից տերեներ և դէպի հողը՝ արմատներ և այդպիսով առաջ բերում ինքնուրոյն բոյսեր։

Մատներով բազմացնելու ժամանակ ծառից կտրում են ճիւղը և կտրած ծայրը մտցնում խոնաւ հողի մէջ։ Շուտով ճիւղն երկրորդական արմատներ տալով՝ ամրանում է հողի մէջ և առաջ բերում ինքնուրոյն բոյս։ Մատներով բազմացնում են ուռենին, բարտին, հաղարձենին, խաղողի որթը և այլն։

3. ՊԱՏԻԱՍՏ. — Շիւղերով և մատներով կարող են բազ-

մանալ միայն այն բոյսերը, որոնք հեշտութեամբ արձակում են իրենցից երկրորդական արմատներ։ Մեր պըտ-



ղատու ծառերն, օրինակ, այդ միջոցով բազմանալ չեն կարող, որովհետև շատ դժւարութեամբ են տալիս այդպիսի արմատներ։ Նրանք բազմանում են սերմերի միջո-

ցով։ Սակայն սերմերից առաջացած ծառերը տալիս են փոքրիկ և անհամ պատւղներ։ Լաւ տեսակի պաղատու ծառեր ստանալու համար մարդիկ դիմում են պատւասի օգնութեան։ Սերմից առաջացած ծառի վրայ պատւաստում են ազնիւ ծառի ճիւղը կամ բողոքը։ Պատւաստի համար վերցրած ճիւղն աճելով պահում է իր մայր բոյսի բոլոր ազնիւ յատկութիւնները։

Պատւաստել կարելի է թէ մատներով և թէ աչքերով։ Մատներով պատւաստելու ժամանակ վերցնում են ազնիւ ծառից մի ամբողջ ճիւղ, իսկ աչքով պատւաստելու ժամանակ՝ միայն մի բողբոջ։ Մատներով պատւաստ կատարում են հետևեալ ձևով։ Երբ վայրի ծառը գեռ շատ մատաղ է, կարում են նրան թեք ուղղութեամբ և ապա ընարելով ազնիւ ծառի վրայ ճիշտնոյն հաստութիւնն ունեցող մի ճիւղ՝ նոյն թեքութեամբ կարում են և այդ ճիւղը։ Այնուհետև կարւած ճիւղը դնում են վայրի ծառի վրայ այսպէս, որ կեղեր գնայ կեղեի ուղղութեամբ և վայտային մասը՝ վայտայինի ուղղութեամբ։ Դրանից յետոյ խսիրով կապում են, պատում որև է անմնաս ճիւթով և փաթաթում փալասով։ Այս բոլորը կատարում են նրա համար, որպէսզի նրանք չշարժւեն, ապա ցրտից պաշտպանւած լինեն և, որ գլխաւորն է, կարւած տեղերից ջրային մասերը չգոլորշիանան։

Իսկ երբ վայրի ծառը հաստ է, կարում են հորիզոնական ուղղութեամբ և խնամքով ճեղքում նրա կեղեր։ Այնուհետև կարում են ազնիւ ծառից աչքեր ունեցող մի լաւ ոստիկ, ծայրը սրում և մտցնում ճեղքի մէջ այսպէս, ինչպէս ա, գ ցոյց է տրւած նկարի մէջ և կրկին վերոյիշեալ ձևով կապում։ Երբ վայրի ծառը շատ հաստ է, այն ժամանակ նման պատւաստ անում են մի քանի տեղից։ Մատներով պատւաստը պէտք է կատարել գարնանը, մինչև բողբոջների բացւելը։ Պատւաստի գլխաւոր

պայմանն այն է, որ մատի կամբիւմի շերտն ընկնի վայրի ծառի կամբիւմի շերտի վրայ, միայն այս դէպքումը մատը կարող է միանալ վայրի ծառի հետ։

Աչերով պատւաստելու ժամանակ ազնիւ ծառի ճիւղից կարում են մի լաւ աչք շրջապատի կեղեի հետ միասին՝ վահանի ձևով և վայրի ծառի կեղեի վրայ և ձևով ճեղքուածք պատրաստելով՝ աչքը դնում նրա մէջ և խընամքով կապում։ Երբ պատւաստած աչքից ճիւղ է զարգանում, այն ժամանակ վայրի ծառի միւս մասերը կարում, հեռացնում են։ Աչքերով պատւաստ կատարում են մայիս և յունիս ամիսներին։

### ԾԱՂԻԿ

Բոլոր բոյսերն աշխատում են կենդանի արարածների նման բաղմանալ։ Նրանք բոլորն էլ մի ձգտում ունեն, թողնել իրենցից յետոյ սերունդ։ Մի քանի բոյսեր, ինչպէս տեսանք, բաղմանում են ստորերկրեայ կամ գետնից վեր եղած ցողուններով, սակայն, բոյսերի մեծ մասը բաղմանում է սերմերի մը ջոցով։ Նրանք ծաղկում են և ապա տուած բերում սերմեր։ Տեսնենք այժմ թէ ինչ կապմութիւն ունեն ծաղիկները և ինչպէս են տուածնում նըրանցից սերմերը։


### ԾԱՂԻԿՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

1. ԲԱԼԵՆԹԻ ԾԱՂԻԿԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.—Ծաղկի կազմութեան հետ ժամօթանալու համար վերցնենք բալենու ծաղիկը։ Սա նստած է մի բարակ կոթի վրայ, որ կոչում է ծաղկակոթի վերին մասը, որի վրայ տեղաւորւած է ծաղիկը, կոչում է ծաղկակալ։ Ծաղկի շուրջը ներքենում իրար կողքի շարւած են հինգ հատ կանաչ տերեիկներ։ Սրանք միասին կազմում են ծաղկի


բաժակը: Բաժակի առանձին տերևիկները կոչւում են բաժակատելիկներ: Բաժակատերևիկներից յետոյ գալիս են հինգ հատ սպիտակ թերթիկներ, որ դարձեալ շրջանաձև շարւած են իրար կողքի: Սրանք էլ կազմում են ծաղկի պըսակը, պսակի առանձին թերթիկները կոչւում են պսակաթերթիկներ: Հեռացնելով պսակաթերթիկները՝ ծաղկի ներսում նկատում ենք բարակ թերթիկներ: Այդ թերթիկները կոչւում են առէներ: Իւրաքանչիւր առէների մասերը:

1) Ծաղկակոթ. 2) Ծաղկակալ. 3) Բաժակա-  
տերե. 4) Պսակաթերթ. 5) Առէն. 6) Սերմ-  
նարան. 7) Սոնակ. 8) Վարսանդի սպիտ:

Առէնով: Վերջինս փոշով լիքը լինելու պատճառով կոչւում է փուշանօր: Առէների մէջ տեղում գտնում է ծաղկի վարսանդը: Սրա վերևի լայնացած մասը կոչւում է սպի,



Բալենու ծաղկի մասերը.



Առէն:

միջին թելանման մասը՝ սոնակ, իսկ ներքեւ ուսուցիկ մասը՝ սերմնարան: Սերմնարանում գտնուում են փոքրիկ

սպիտակ հատիկներ, որանք սերմնարողներն են, որոնցից յետագայում զարգանում են սերմերը: Այսպիսով, ուրեմն, բալենու ծաղկիկը բաղկացած է բաժակից, պսակից, առէներից և վարսանդից:

Բոլոր ծաղկիկները բալենու ծաղկի կազմութիւնը չունեն: Կան ծաղկիկներ, որ զուրկ են այս կամ այն ծաղկամասից, օրինակ, կակաչի ծաղկիկը. սա զուրկ է բաժակից: Երբ ծաղկի մէջ բոլոր մասերը կան, ծաղկիկը կոչւում է լրիւ, իսկ երբ այս կամ այն մասը պակասում է, կոչւում է քերի:

Բաժակն ու պսակը մինչև ծաղկի բացւելը ծածկում են ծաղկի ներսում գտնուղ աւելի քնքոյց գործարաները՝ առէներն ու վարսանդը և այդպիսով պաշտպանում նըրանց զանազան վտանգներից: Այդ է պատճառը, որ այդ ծաղկամասերը կոչւում են ծածկոյթներ, բաժակը՝ արտաքին, պսակը՝ ներքին: Բաժակի տերևներն երբեմն միացած են լինում միմիանց հետ. այդ դէպքում բաժակը կոչւում է միացեալ: Նոյն ձևով միանում են երբեմն և պսակաթերթիկները և կազմում միացեալ պսակ: Երբ պսակաթերթիկները ծաղկի մէջ բոլորը նոյն ձևն ու մեծութիւնն ունեն, ծաղկիկը կոչւում է կանոնաւոր, իսկ երբ տարբեր՝ կոչւում է անկանոն: Բալենու ծաղկիկը կանոնաւոր է, իսկ մանիշակները՝ անկանոն, որովհետև նրա պսակաթերթիկները միմեանցից զանազանում են իրենց ձևով ու մեծութեամբ:

Բաժակն ու պսակը պաշտպանում են առէներն ու վարսանդը ոչ միայն մինչև ծաղկի բացւելը, այլ և նըրանից յետոյ: Յայտնի է, որ գիշերը կամ վատ եղանակներին ծաղկիկները կամ վլուխները ցած են զցում և կամ միական մասում էն իրենց ծաղկաթերթիկներն ու բաժակատերերիկները: Երկու դէպքում էլ ծաղկիկը մի նպատակ է ունենալ, այն է՝ պաշտպանուել անձրենի կաթիկներից կամ ցո-

զից, որոնք շատ վատ աղղեցութիւն ունեն ծաղկի ներսի գործարանների վրայ:

Առէջներն ու վարսանիդը ծաղկի ամենակարևոր գործարաններն են, որովհետեւ զրանք են առաջ բերում պտուղ և սերմ: Առէջները բաղկացած են առէջաթերից և նրա վրայ նստած փոշանօթից: Վերջինս լիքն է փոշով, որ հասունանալուց յետոյ ցըւում է գեղին, մանրիկ փուլ ձեռվէ: Դիտելով ժանրադիտակի տակ փոշու հատիկ-



Զանազան ձեւի փոշենատիկներ:


ները, տեսնում ենք, որ նրանք առանձին-առանձին ըլլացիչներ են, լցւած պըռոտօպլազմայով և ծածկւած գեղեցիկ թաղանթով։ Տարբեր ծաղիկներ տարբեր թւով առէշներ ունեն, կան ծաղիկներ, որ միայն մի հատիկ առէշ ունեն, կան ծաղիկներ էլ, որ ունեն մի քանի տասնեակ առէշներ։

Երբեմն ծաղկի մէջ լինում են միայն կամ առէներ և կամ վարսանդ. Միայն առէներ ունեցող ծաղիկը կոչւում է առէչածաղիկ, միայն վարսանդ ունեցողը՝ վարսանդաղիկ. Առէները ծաղկի արական գործարաններն են, վարսանդը՝ իգական. այդ պատճառով էլ առէշածաղիկը կոչւում է նաև արական, վարսանդածաղիկը՝ իգական. Եթ արական և իգական ծաղիկը միևնույն բոյսի վրայ է լինում, բոյսը կոչւում է միատև, իսկ եթե տարբեր բոյսերի վրայ, կոչւում է երկտև. Տիլին, կաղնին, կեչին, միատևն բոյսեր են. Նրանց ա-

բական և իգական ծաղիկները գտնուում են միենոյն ծառի վրայ: Հացենին, ուռենին, բարտին երկտուն են, որպէս հետեւ նրանց իգական ծաղիկները մի ծասի վրայ են գտնուում, արականները՝ մի այլ ծասի վրայ:

ԾԱՐԴԿՆԵՐԻ ՓՈՇՈՏՈՒՄԸ

1. ԾԱՂԻԿՆԵՐԻ ՓՈՇՈՏԱՌԻՄԸ ԵՅ ՊՏԺԻ ՈՒ ՍԵՐՄԵՐԻ ԱՌԱ-  
ԶԱՑՈՒՄԸ: —Պառղն ու սերմերն առաջանում են ծաղիկ-  
ներից: Տեմնենք այժմ, թէ այդ ինչպէս է կատարում:  
Պառղն առաջանում է վարսանդի սերմնարանից, սեր-



## ՍԵՐԻԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐՔՄԱՆ ԴՐԱՄ:

մերը՝ սերմատքողբոջներից. ուրիմն, վարսանդից են առաջանում թէ պտուղը և թէ սերմերը: Եթէ պոկենք որևէ է ծաղկից առէները և ծածկենք ծաղիկը այնպէս, որ

զրսից նրա վրայ ծաղկափոշի չթափւի, կտեսնենք, որ ծաղկից այլ ևս պտուղ չի առաջանում: Այդ նշան է, որ պտղի առաջացման համար բացի վարսանդից, անհրաժեշտ են նաև առէջները: Առէջների փոշանօթերն, ինչպէս գիտենք, լցւած են ծաղկափոշով: Որպէսզի սերմարանից պտուղ առաջանայ, անհրաժեշտ է, որ այդ ծաղկափոշին ընկնի վարսանդի սպիի վրայ, ուրիշ կերպ ասծ, անհրաժեշտ է, որ տեղի ունենայ փուուումն:

Երբ վարսանդը հասունանում է, սպին ծածկում է կպչուն նիւթով: ծաղկափոշին նրա վրայ ընկած ժամանակ, կպչում է այդ նիւթին և փոքր ինչ անցած՝ սկսում է ծլել այնտեղ: Նրանից արձակում է մի բարակ երկար խողովակ, որ սոնակով անցնելով՝ մտնում է սերմարանը և համնում սերմարողը ներին: Իւրաքանչիւր սերմարողով ունի մի փոքրիկ անցք և պարունակում է իր մէջ մի քսակիկ, որ սաղմային բակիկ է կոչւում: Այս քսակիկի մէջ գտնում են մի քանի բջիջներ: Բջիջներից մէկը կոչւում է ձւաբջիջ: Համնելով սերմարողը նի՞ ծաղկափոշու խողովակը նրա անցքով ներս է մտնում և միանում ձւաբջիջի հետ: Այդ միացումը կոչւում է բնդմնաւուումն: Երբ տեղի է ունենում բեղմնաւորումը, ծաղիկը սկսում է թառամել: Չուտով թափւում են նրա պսակաթերթիկները, չորանում են առէջները, չորանում են նաև վարսանդի սպին ու սոնակը: մնում է միայն սերմարանը, որը սկսում է արագ կերպով աճել, զարգանալ: Սերմարանը զարգանալով՝ դառնում է պտուղ, իսկ նրա մէջ գտնուղ սերմնաբողը ները՝ սերմեր:

2. ԽԱԶԱՉԵԼ ՓՈՇՈՏՈՒՄՆ:—Բազմաթիւ փորձերը ցոյց են տւել, որ երբ ծաղիկները փոշուում են իրենց մէջ գտնւած առէջների ծաղկափոշով, այսինքն սեփհական ծաղկափոշով, այն ժամանակ կամ բոլորովին սերմեր չեն տալիս, կամ տալիս են այնպիսի սերմեր, որոնցից առա-

ջանում են միայն թոյլ ու վտիտ բոյսեր: Եւ ընդհակառակը, երբ ծաղիկները փոշուում են նման այլ ծաղկի կամ, աւելի լաւ, ուրիշ անդ գտնւող նման բոյսի ծաղկի ծաղկափոշով, տալիս են արդէն առատ և լաւ սերմեր: Այդպիսի սերմերից առաջացած բոյսերը լինում են առողջ և ուժեղ: Այս վերջին տեսակի փոշուումը, երբ ծաղկափոշին ծաղիկը ստանում է ուրիշ նման ծաղիկներից և ոչ իր սեփական առէջներից, կոչւում է խաչաձեւ փուուումն:

Եւ բոյսերն աշխատում են, որ տեղի ունենայ խաչաձեւ փոշուումն և ոչ թէ ինքնափուուումն: Դրա համար ընութիւնը տւել է նրանց մի շարք յազմարութիւններ: Մի քանի բոյսեր, ինչպէս տեսանք, ունեն, օրինակ, առանձին-առանձին առէջածաղիկներ և վարսանդածաղիկներ: Պարզ է, որ այդ բոյսերի մօտ ինքնափոշուումն երբէք չի կարող լինել:

Առէջներ ու վարսանդ պարունակող ծաղիկներ ունեցող մի շարք բոյսերի մօտ էլ առէջներն ու վարսանդները հասունանում են տարբեր ժամանակներ: Այդպէս է, օրինակ, զանգակիկը: Առաջ հասունանում են նրա առէջները և երբ ծաղկափոշին ցրւում ու առէջները թառամում են, նոր սկսում է բացւել վարսանդի սպին: Զղախոտի մօտ էլ տեղի է ունենում հակառակը, առաջ հասունանում է վարսանդը և ապա առէջները: Վերջապէս մի քանի բոյսերի մօտ առէջներն ու վարսանդը այնպէս են դասաւորւած ծաղկի մէջ, որ ծաղկափոշին երբէք չի ընկնում վարսանդի սպիի վրայ, թէպէտ առէջներն ու վարսանդը միաժամանակ են հասունանում: Այս բոլոր գէպը բում տեղի է ունենում, ուրեմն, խաչաձեւ փոշուումն և ոչ ինքնափոշուումն:

Բայց ինչպէս է կատարւում խաչաձեւ փոշուումը: Ի՞նչպէս է ծաղկափոշին ընկնում մի ծաղկից միւսի վրայ,

որ երբեմն նրանից ահագին ճեռաւորութեան վրայ է գտնւում: Դիտողութիւնները ցոյց են տւել, որ այդտեղ բոյսերին օգնութեան են համասւմ միջատներն ու քամին:

**ԾԱՀԻԿՆԵՐԻ ՓՈՇՈՏՈՒՄԸ ՄԻՋԱՑՆԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ:**—Բոյսերի մեծ մասի ծաղիկները փոշուում են միջատների միջոցով: Շատ միջատներ, օրինակ, մեզուները, իշամեղուները, թիթեռները և այլն կերակրում են ծաղիկների մէջ գտնուող մեղրահիւթով: Իրենց համար կերակուր գըտնելու համար այդ միջատները մի ծաղկից գնում են միւսը և մեղրահիւթը ծծելիս՝ քսում առէջների փոշանօթներին: Քսւելով փոշանօթներին՝ նրանք իրենց վրայ են թափում ծաղկափոշին: Յաճախ մեզուներին կարելի է տեսնել ամբողջովին թաթախւած ծաղկափոշու մէջ: Այդ գըրութեան մէջ, երբ նրանք նստում են մի այլ ծաղկի վըրայ և մեղրահիւթ ծծելու համար քսում նրա զանազան մասերին, ինչպէս նաև վարսանդի սպիին, կատարում են փոշոտումն:

Եթէ միջատներ չլինեին, այն ժամանակ շատ բոյսեր չէին փոշուի, հետեապէս և սերմեր չէին տայ: Որ այդ, իրօք այդպէս է, ցոյց է տալիս հետեւեալ փաստը: Աստըրալիայում մարդիկ ցանում էին առւոյտ, ոտ լաւ աճում էր, տալիս էր առատ ծաղիկներ, բայց երբէք սերմ չէր տալիս ի՞նչու: Պատճառը հասկանալի է: Առւոյտի ծաղիկները փոշուում են միայն իշամեղուների միջոցով, մինչդեռ Աւստրալիայում այդ միջատները չկային: Երբ մարդիկ եւրոպայից Աւստրալիա տարան և իշամեղուներ, վերջիններս բազմանալով այնտեղ՝ սկսեցին փոշուել առւոյտի ծաղիկները և միայն այդ ժամանակ առւոյտը սկսեց սերմ տալ:

**ՄԻՋԱՏՆԵՐԻ ՄԻՋՈԳՈՎ ՓՈՇՈՒՈՈՂ ԲՈՅՍԵՐԸ ՄԻՋԱՏՆԵՐԻՆ ԳՐԱԼՈՒՄ** են մի քանի միջոցներով: Ամենից առաջ նրանց ծաղիկները մեծ են և ունեն աչքի ընկնող գոյներ:

Յաճախ այդպիսի բոյսերի ծաղիկներն աւելի նկատելի դառնալու համար համախմբւում են միասին և կազմում ծաղկափրութիւն կամ ծաղկեփունց: Այդպէս են անում մանաւանդ այն բոյսերը, որոնց ծաղիկները փոքր են: Աչքի ընկնող գոյներ ունենում են գլխաւորապէս պսակաթերթիկները: Կոշանակէ, սրանք ոչ միայն պաշտպանում են ծաղկի ներքին գործարանները՝ առէջներն ու վարսանդը, այլ և ծառայում են միջատներին: Փաքը պսակ և ոչ վառ գոյն գրաւում են միջատներին: Փաքը պսակ և ոչ վառ գոյն ներ ունեցող ծաղիկները միջատներին գրաւելու համար արձակում են իրենցից բուրմունք: Միջատներն այդ բուրմունքի շնորհիւ շատ հեռուներից անգամ գնում են ուղղակի գէպի ծաղիկը: Սակայն, միջատներին գրաւելու համար բոյսերի ամենամեծ միջոցը նրանց մեղրահիւթն է, որ շատ միջատների միակ կերակուրն է կազմում:

**Բայց, իհարկէ, բաւական չէ միայն գրաւել միջատներին, անհրաժեշտ է ունենալ և այնպիսի յարմարութիւն, որ միջատներն իրենց այցելութեան ժամանակ փոշուեն ծաղիկները: Եւ այդ յարմարութիւնը մենք տեսնում ենք ծաղիկների մէջ: Առէջներն ու վարսանդը նըսանց մէջ այնպէս են դասաւորւած, որ միջատները մեղրահիւթը ծծելիս անպայման պէտք է կամ փոշին վերցնեն իրենց վրայ և կամ իրենց վրայ եղած փոշին քսեն վարսանդի սպիին:**

**4. ԾԱՀԻԿՆԵՐԻ ՓՈՇՈՏՈՒՄԸ ՔԱՄՈՒ ՄԻՋՈՅՈՎ:**—Քամու միջոցով ես փոշուուուծ են բաւականին շատ բոյսեր: Այդ բոյսերի ծաղիկներն իրենց կազմութեամբ նման չեն միջատների միջոցով փոշուող բոյսերի ծաղիկներին: Նրանք չունեն ոչ վառ գոյնի պսակ, ոչ բուրմունք և ոչ էլ մեղրահիւթ: Դրանց կարիքն այդ ծաղիկները չեն ըզդում: Բայց դրանց փոխարէն նրանք ունեն այլ յարմարութիւններ, որոնց միջոցով կարողանում են դիւրութեամբ

քամու միջոցով փոշոտւել: Ամենից առաջ այդ ծաղիկ-ները նստած են բոյսի տյնպիսի մասերում, որտեղ քա-մին ազատ կերպով կարող է նրանց ճօճել, շարժել. ապա առէչները դուրս են ցցւած, որպէսզի ծաղկափոշին թափ-ւած ժամանակ քամուց հեշտութեամբ տարւի զանազան կողմեր: Բացի դրանից, այդ ծաղիկներն ունենում են ահագին քանակութեամբ ծաղկափոշի: Երբ ծաղկում է կանեփը, նրա արտի վրայ ծաղկափոշու մի ամպ է կանգ-նում: Նոյնն ենք տեսնում և շամու անտառում, երբ ծաղկում է շամին. անձրեի կաթիլներն այդ ժամանակ խառնւելով ծաղկափոշու հետ՝ յաճախ դեղին գոյն են ստանում: Քամու միջոցով փոշոտւող բոյսերի ծաղկափո-շին լինում է փոքր, չոր և թեթե: Շամու ծաղկափոշին նոյնիսկ օդով լիքը առանձին փամփուշտիկներ ունի, ո-րոնք նրան չափից դուրս թեթեացնում են: Վերջապէս այդպիսի բոյսերի վարսանդի սպիները լինում են դուրս ցցւած և չափազանց մեծ, յաճախ նրանք փետուրի ձև են ունենում, մի հանգամանք, որ նոյնպէս մեծ յարմարու-թիւն է ծաղկափոշին հեշտութեամբ իր վրայ վերցնելու համար:

Քամու միջոցով փոշոտւող բոյսերն ունեն նաև այլ յարմարութիւններ, օրինակ, նրանք բանում են խումբ խումբ և ծաղկում են մեծ մասամբ վաղ գարնան: Խումբ-խումբ բած ժամանակ ծաղկափոշին առատ կերպով ցըր ւում է օդի մէջ և քամու միջոցով հեշտութեամբ ընկ-նում վարսանդների սպիս վրայ, իսկ վաղ գարնան ծաղ-կելն այն նշանակութիւնն ունի, որ տարւայ այդ ժամա-նակ լինում են առհասարակ ուժեղ քամիներ և, որ գըր-խաւորն է, իրենք քամու միջոցով փոշոտւող բոյսերի մեծ մասը տերևած չի լինում, այդ պատճառով էլ ծաղկա-փոշին առանց տերևների կողմից արդելքի հանդիպելու թափւում է ծաղիկների վրայ:

## ՊՏՈՒՂ ԵՒ ՍԵՐՄ

1. ՊՏՈՒՂՆԵՐԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ: — Փոշոտումից յետոյ տեղի է ունենում բեղմանարումն. այնուհետեւ սերմնարանը զարգանալով՝ սկսում է փոխարկել պաղի, իսկ սերմնարողբոյները՝ սերմերի: Սերմնարանի պատերից այդ ժամանակ զարգանում է պտղապատեանը, Մի քանի պտուղների պտղապատեանը լինում է չոր ու պինդ, միւս-սերինը՝ փափուկ ու հիւթալի: Չոր ու պինդ պտղապա-տեան ունեն, օրինակ, ընկոյզը, արևածաղկի պտուղը, իսկ փափուկ ու հիւթալի՝ բարը, սալորը, հաղարձը և այլն: Թէ չոր և թէ հիւթալի պտուղները լինում են միա-ւերմ և բազմասերմ:

Միասերմ չոր պտուղների տեսակներ են համարւում ունիլը, կտիկը և ընկոյզը: Ունդի պտղապատեանը կաշե-կերպ է, կերպ է և միացած սերմի հետ, կտիկինը՝ կաշեկերպ է, կերպ միացած չէ սերմի հետ, իսկ ընկուղինը՝ միացած բայց միացած չէ սերմի հետ, իսկ ընկուղինը՝ միացած չլինելով հանդերձ՝ փայտային է: Ունդի օրինակ կարող լինել հաճարի, ցորենի և առհասարակ՝ հացաբոյսերի սերմերը, կտիկի օրինակ՝ արևածաղկի սերմը, իսկ ըն-կոյզի՝ ընկոյզը, տփիլը և այլն: Այս միասերմ չոր պտուղ-կոյզի՝ ընկոյզը, տփիլը և այլն: Բազմասերմ հասունացած ժամանակ չեն ճեղքւում: Բազմասերմ չոր պտուղների տեսակներ են՝ պատինը, փոնոկը և արկը: Որանք բոլորը հասունացած ժամանակ ճեղքւում են դիկը: Սրանք բոլորը հասունացած ժամանակ ճեղքւում են սերմերը ցրւում: Պատինը միախինձ պտուղ է: Լորին, ակացեան, սիսեռը և այլն տալիս են այդպիսի պտուղ: Փոճոկը երկխինձ է: սա տարբերւում է պատինից նրա-նով, որ նրա միջով՝ երկայնութեամբ, անցնում է մի միջ-նով, որ նրա միջով՝ երկայնութեամբ, անցնում է մի միջ-նով, որի վրայ կպած են սերմերը: կաղամբի, շահ-պրակի պտուղը փոճոկ է: Սրկղիկը լինում է միախինձ կամ բազմախինձ: այդպիսի պտուղ ունեն խաշխաշը, մանիշակը և այլն: Արկղիկը բացւում է անցքերով կամ կափարիչով:

Հիւթալի պտուղների տեսակներ են համարւում հատապտուղը և կորիզաւոր պտուղները։ Հատապտուղն իր հիւթալի միջուկի մէջ պարունակում է բազմաթիւ սերմեր։ հատապտուղներ են խաղողի, հաղարձի պտուղները։ Կորիզաւոր պտուղներն ունեն մի սերմ՝ ծածկւած պինդ, շատ կարծը թաղանթով։ Վերջին տեսակի պտուղներ են՝ բալը, սալորը, ծիրանը, ղեղձը և այլն։

Հիւթալի պտուղների կարգին են պատկանում նուև խնձորը, տանձը, սեխը, վարունգը և այլն։

2. ՊՏՈՒՂՆԵՐԻ ԵԽ ՍԵՐՄԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ. — Շատ բոյսեր իրենց տեսակի պահպանութեան համար տախու են ահագին քանակութեամբ սերմեր։ բայց եթէ այդ սերմերը բոլորն ընկնեն բոյսի անմիջապէս տակը և ծլեն այստեղ, միևնաց կիսեղեն, որովհետեւ այնտեղ նբանք բաւարար չափով հող, խոնաւութիւն և լոյս չեն կարող զբանել։ Այդ է պատճառը, որ բոյսերն իրենց սերմերն աւելի լաւ պայմանների մէջ գնելու համար աշխատում են, ինչքան կարելի է, ցրել աւելի հեռաւոր տեղեր։ Այդ նպատակի համար պտուղներն ու սերմերը ունեն բազմազնն յարմարութիւններ։ Բոյսերի մի մասն ինքն է ցրւում սերմերը, իսկ միւսները զրա համար դիմում են քամու, ջրի և կենդանիների օգնութեան։

Չոր, բազմասերմ պտուղներ տւող բոյսերը սովորաբար լիքնք են տարածում իրենց սերմերը։ Սրանց պտուղ ները հասունաւալուց յետոյ ճեղքւում են։ Այդ ճեղքումը կատարւում է միանգամից և այնպիսի ուժով ու ձևով, որ սերմերը թռչում են զանազան տեղեր։ Մի քանի բոյսերի սերմերը ճեղքման ժամանակ թռչում են մի քանի սաժէն տարածութիւն։ Այդ կողմից յայանի է մի դիմուր կոչ ող բոյսը։ Երբ սրա պատիճը հասունանում է, հարկաւոր է ծայրին միայն փոքր ինչ դիպչել, իսկոյն բացւում է նաև սերմերը նետում զանազան տեղեր։

Այդ բոյսը շատ տարածւած է մեր հայրենիքում, բանում է սովորաբար խոնաւ, ստւերոտ վայրերում և ծաղկում է յուլիսին կամ օգոստոսին։

Նման ձեռվ ցրւում են իրենց սերմերը նաև հիւթալից պտուղ ունեցող մի քանի բոյսեր։ Կովկասում, նաև Ղրիմում բանում է մի բոյս, որ ծւծուկ է կոչւում։ Սա տալիս է փոքրիկ վարունգի նման պտուղ՝ լցւած լորձային հեղուկով, որի մէջ լողում են մանր սերմեր։ Երբ պտուղը համնում է, պոկւում է ցօղունից և լորձային հեղուկը մէջը գտնուող սերմերի հետ միասին մեծ ուժով դուրս է գալիս այն անցքից, որ առաջանում է պոկւած տեղում։ Ծւծուկն իր սերմերը նետում է այդ ձեռվ բաւականին հեռու տեղեր։

Շատ բոյսեր էլ իրենց պտուղներն ու սերմերը տարածում են քամու միջոցով։ Այդպիսի բոյսերից մի քա-




Բամբակի պտուղը։ Բամբակի սերմը։

նիսն, օրինակ, խտուտիկը, ուռենին, բարտին, բամբակին ունեն բարակ և երկար մազերով ծածկւած սերմեր ու պտուղներ։ Շնորհիւ այդ մազերի սերմերը ճշշտութեամբ տարւում են նոյն իսկ շատ հեռաւ որ տեղեր։ Միւսների սերմերը փոխանակ մազեկների՝ ունեն իրենց վրայ տարեր ձւերի և մեծութեան թիեր։ Այդպիսի սերմերը կոչ-

ւում են թեւալոր սերմեր: Թեւալոր սերմեր ունեն, օրինակ, թղկին, կեճին, շամին, հացին, բանջարներից՝ աւելուկը և այլն:

Սերմերի տարածման գործում մեծ դեր է կատա-




Թեւալոր սերմեր եւ պտուղներ:

1) Շամու սերմը. 2) Կհճու պտուղը. 3) Թղկու պտուղները. 4) Հացենու պլը-ստուղները. 5) Հացենու սերմն առանձին. 6) Թեղըքենու պտուղները:

բում նաև ջուրը: Եւ այդ զարմանալի չէ. ջուրն ինչպէս որ հողի և քարի կտորներ է տեղափոխում, այնպէս էլ կարող է պատահած սերմերը տեղափոխել: Լեռների բարձր տեղերում աճած բոյսերի սերմերի մեծ մասը ջրի միջոցով է տարւում դէպի դաշտերն ու հովիտները: Զրի միջոցով է տարածում իր սերմերը և կոկոսեան արմաւենին: Սրա պտուղը բաւականին մեծ է, մօտաւորապէս երեխայի գլխի չափ: Դրսից պատած է նա հաստ ու ամուր կեղեռով, որի տակ գտնւում է թելային մի հաստ շերտ: Այս շերտը պտուղը բաւական թեթևացնում է: Թելային շերտի տակ գտնւում

է երկրորդ չափաղանց ամուր կեղեռ, և սրա մէջ էլ՝ սերմը: Կոկոսեան արմաւենին բանում է ծովերի ափերին: Նրա պտուղները պաշտպանւած լինելով երեք տեսակի կեղեներով՝ ջրի մէջ ընկնելուց յետոյ բաւական երկար ժամանակ լողում են նրա երեսին, մինչև որ ալիքները կամ ծովային հոսանքները նրանց ջրի ափն են գցում: Կոկոսեան արմաւենին այդ ձևով է տարածւել տաք երկրների բոլոր կղզիների վրայ:

Սերմերի և պտուղների տարածման գործին օգնում են նաև կենդանիները: Չոր պտուղներից մի քանիսն ունեն իրենց վրայ կարթիկներ կամ կղզաններ. սրանցով նրանք կըպչում են մօտով անցնող կենդանիների բըդին ու մազերին: Այնուհետեւ, երբ կենդանիները նրանցից ազատւելու համար քսում են գետնին կամ զանազան իրերի, պոկլում են նրանք և այդպիսով տարածւում զանազան կողմեր:



Կոատուկի պտուղը:

Ամառը զաշտերում կամ մարգագետիններում զրօննելու ժամանակ մեզ վրայ ևս կպչում են բազմատեսակ սերմեր: Հիւթալից պտուղների սերմերը տարածւում են մեծ մասամբ թռչունների միջոցով: Այդ պտուղների սերմերը սովորաբար ծածկւած են ամուր ու պինդ պատեաններով. Երբ թռչուններն ուտում են պտղի հիւթալից մասը՝ սերմերը նետում են այս ու այն կողմը: Փոքր սերմերը թռչունները հիւթալից մասի հետ կուլ են տալիս, բայց որովհետեւ սրանք պատած են ամուր պատեաններով, մնում են անվասս նրանց մարսողական գործարանների մէջ և արտաթորութիւնների հետ գուրս են գալիս:

Այսպիսով, ուրեմն, բոյսերն իրենց սերմերը տարածում են գլխաւորապէս քամու, ջրի և կենդանիների միջոցով։

Մենք ծանօթացանք բոյսի կեանքի հետ. զիտենք այժմ, թէ ինչպէս է սերմը ծլում, ինչպէս է աճում, զարգանում մատաղ բոյսը, ինչպէս է մնում, շնչում, ինչպէս է բազմանում և ինչպէս է տարածում նա իր սերմերը։ Ծանօթանանք այժմ մի քանի առանձին բոյսերի հետ։ Առաջին հերթին ծանօթանանք ծաղկաբերների հետ։

## ԾԱՂԿԱԲԵՐ ԲՈՅՍԵՐ

### Տ Ա Ն Զ Ե Ն Ի

Վայրի եւ ազնիւ տանձենի։—Տանձենին վայրի զըրութեամբ բռնում է անտառներում։ Նրա պտուղնեղը մանր են ու կոշտ։ Շատ հին ժամանակներից սկսած մարդ զործ է ածում նրա պտուղները։ Այդ է պատճառը, որ նա դարերի ընթացքում առանձին խնամքի է արժանացել, որի շնորհիւ էլ առաջացել են նրանից մեր այգիների այժմեան ազնիւ տեսակները։


Ազնւացումը։—Բոլոր ազնիւ տեսակ տանձենիների սերմերից առաջանում է միշտ այնպիսի ծառեր, որոնց պտուղներն իրենց ձևով ու համով նման են լինում վայրի տանձենու պտղին։ Ազնիւ տեսակի պտուղ ստանալու համար անհրաժեշտ է անպատճառ ծառն ազնւացնել պատւաստի միջոցով։

Փեերը։—Վայրի տանձենու ճիւղերը վերջանում են փշերով։ Այդ փշերով պաշտպանում է նա խոտակեր կենդանիներից։ Փշերով հարուստ են ներքենի ճիւղերը։ Վերենի ճիւղերը, որոնց կենդանիները հասնել չեն կարող՝ զուրկ

են փշերից։ Ազնիւ տանձենիները փշեր չունեն։ Նրանք բանում են այգիներում։ Այդտեղ մարդիկ պաշտպանում են նրանց զանազան կենդանիներից։

ՊՏՈՒԿԱՆԵՐԸ։—Գարնանը տանձենու վրայ լինում են երկու տեսակի պտուկներ. մի տեսակը կարծ ու սրածայր, միւսը՝ մեծ ու հաստ։ Առաջին տեսակի պտուկներից առաջանում են տերեններ ունեցող ճիւղեր, միւս տեսակի պտուկներից՝ տերեններ և միաժամանակ ծաղիկներ ունեցող ճիւղեր։

ՏԵՐԵՆԸ։—Տանձենու տերենը կոթաւոր է, ձևաձեւ ունի սղոցաձև կը-արտւածքներ։ Կոթներկար է ու առաձգական։ Քամու ժամանակնական գիւրութեամբ թեքում է ամեն կողմի վը-րայ։ Շնորհիւ կոթի այդ ձկունութեան տերենը քամուց չի վնասում։ Նման ձևով կոթը պաշտպանում է տերենների մեծ կաթիլների հարւածից։ Տերենի սկուտեղի մէջ տարածւած ջղերը նրան մեծ ամրութիւն են տալիս։ Այդտեղ նոյն ճղերը նոյն են կատարում 1) ձիւղը տերեններով և ծաղկեկներով, 2) ծաղկեկներով, 3) զաղի կտրածքը, 4) զաղի միջադիրը։ Ինչ որ երկաթի ձողերը հովանոցի մէջ։ Տանձենու տերենը



Տ Ա Ն Զ Ե Ն Ի

Այդտեղ ջղերը նոյն կտրածքը, 3) զաղի կտրածքը, 4) զաղի միջադիրը.

ինչ որ երկաթի ձողերը հովանոցի մէջ։ Տանձենու տերենը

ծայրերում թեքւած է դէպի ցած, այդ պատճառով անձօրեկի ջուրը ծայրերից թափւում է ներքեռում գտնւող տերեների վրայ, այդտեղից էլ աւելի ցածր գտնւողների վրայ և վերջը ծայրերում գտնւող տերեներից ընկնում է գետին: Կաթիլների ընկնելու տեղում գտնւում են մեծքանակութեամբ արմատային թելիկներ, որոնք ջուրն իւկոյն ներս են ծծում:

Ծաղիկը:—Տանձենին վերցնում է շատ մեծ թւով ծաղիկներ, այնպէս որ ծաղկած ժամանակ ամբողջ ծառը սպակում է: Ծաղիկները հոտաւէտ են և պարունակում են առատ մեղրահիւթ: Այդ է պատճառը, որ նրանց վրայ կարելի է տեսնել բազմաթիւ միջատներ: Եւ այդ հասկանալի է, տանձենու ծաղիկները փոշուաւում են միջատների շնորհիւ: Աւստրալիայում տանձենին պառող չէր տալիս, մինչև որ այնտեղ մեղուներ չտարան: Տանձենու ծաղկի ծաղկական ունի գաւաթի ձև: Նրա ծայրերին նստած են հինգ հատ կանաչ բաժակատերենիկներ, հինգ պսակաթերթիկներ և մօտ 20 առէչներ: Գաւաթի փոքրիկ բերանից դուրս են գալիս վարսանդի 5 հատ սոնակները Վարսանդի սերմարանը միացած է այդ գաւաթի պատերի հետ:

Պտուղը:—Պտուղն առաջանում է ծաղկակալից և սերմարանից: Ծաղկակալից առաջանում է պտղի մասը, սերմարանից՝ միջուկը: Վերջինս բաղկացած է 5 խորշերից, որոնցից իւրաքանչիւրում գտնւում է 2 շագանակագոյն սերմ:

Սերմի Տարածումը:—Որպէսզի սերմից նոր բոյս առաջանայ, անհրաժեշտ է, որ նրա մսային մասը փթիկամ կենդանիներն ու թռչունները ուտեն այն և սերմերը դուրս հանելով՝ ցրւեն զանազան կողմեր: Այդ սերմերը պատած են շատ ամուր պատեանով. վրա համար էլ երբ կենդանիներն ուտելու ժամանակ չեն ջարդուած

առամներով, ապա անվաս կերպով աղիքներից կրկին դուրս են գալիս: Կնշանակէ, պտղի մսային մասը սերմի տարածման համար է առաջացել պտղի մէջ: Հասած պտուղը կենդանիներին զրաւելու համար ունի նաև աչքի ընկնող գոյներ: Զհասած պտուղներն, ընդհակառակը, ունեն կանաչ գոյն և թթու ու դառն անհաճոյ համ, որպէսզի կենդանիները նրանց ձեռք չտան:

Տանձենին պատկանում է վարդծաղիկների ընտանիքին: Այս ընտանիքին են պատկանում նաև խնձորենին, կեռասենին, բալենին, դեղձենին, մորենին, ելազը, մասրենին և վարդենին:

### ՎԱՅՐԻ ՎԱՐԴԵՆԻ ԿԱՄ ՄԱՍՐԵՆԻ

Թուփիր:—Մասրենին բնում է անտառների ծայրերին և ճանապարհների ու ցանկապատների մօտերքը. այդտեղ կազմում է նա խիտ թփեր: Նրա թռւփը կազմում է այսպէս. սկզբում գետնից դուրս են գալիս մի շարք ուղղաձիգ, փափուկ ընձիւղներ, որոնք, սակայն, շուտով փայտանում են և աղեղնաձև կորանում դէպի ցած: Հետևեալ տարին աղեղների վերին մասից դուրս են գալիս թէ ծաղիկներ ունեցող կարճ ճիւղեր և թէ երկար ու ուղղաձիգ ընձիւղներ: Վերջիններս որոշ ժամանակից յետոյ կրկին կորանում են աղեղնաձև և նստում հին ճիւղերի վրայ: Այս երեսոյթը կրկնում է այնուհետև ամեն տարի և այդպիսով մասրենու թռւփը հետզհետէ մեծանում է ու խճաւում:

Փենը:—Մասրենու մատաղ ճիւղերը, ծաղկակոթերը և սերմեների գլխաւոր ջղերը պատած են փշերով: Մրանք ամուր են և ունեն ցած ուղղաձ սուր ծայրեր: Փշերը դուրս են գալիս կեղեկից կամ մաշկից, դրա համար էլ կեղեկի հետ միասին պոկւում են հեշտութեամբ: Փշերով

մասրենին պաշտպանւում է խոտակեր կենդանիներից, չին  
փայտացած մասերից փշերը թափւում են: Եւ այդ շատ



Վարդի վարդենի կամ մասրենի.

1) Մասրենու ճիւղը տերեներով, փշիներով և ծաղկով. 2) Ծաղկաբողբոջը կամ կոկոնը. 3) Ճիւղը տերեներով և պտուկներով:

հասկանալի է. հին փայտացած մասերը կենդանիների կեր չեն կարող լինել, ուրեմն, պաշտպանւելու կարիք չունեն:

Տերենը: — Մասրենու տերեկը բարդ է: Գլխաւոր տերեկոթի վրայ նստած են 5—7 հատ տերեկիներ: Սրանք նստած են զոյգ-զոյգ՝ միայն ծայրին գտնւում է մի հատ տերեկի, դրա համար էլ մասրենու տերեկը կոչւում է անզոյգ փետրաձև: Տերեկիները ձւածե են և ունեն սղոցաձև եղբեր:

Ծաղիկը: — Մասրենու ծաղիկը նման է տանձենու ծաղին այն տարբերութեամբ, որ նրա ծաղկակալը կը-ժամկ է և վերջանում է դեղին մսոտ օղակով: Ծաղկա-կալի վրայ նստած են 5 հատ բաժակատերեկիներ, 5 պը-սակաթերթիկներ և մեծ թւով առէչներ: Ծաղկակալի խո-

ռոշում գտնւում են բազմաթիւ սերմնարաններ, որոնց սոնակները դուքս են գալիս խոռոչի բերանից և վերջա-նում դեղին սպիներով: Մասրենու ծաղիկը փոշուում է միջատների շնորհիւ. դրանց գրաւելու համար նա ունի աշքի ընկնող գոյներ, սպիտակ կամ բաց վարդագոյն և ապա շատ ուժեղ բուրմունք: Նա բաւականին մեծ է. դրա համար էլ հեռւից նկատելի է: Մասրենու ծաղիկը մեղրահիւթ չունի. միջատներին հիւրասիրում է նա իր առատ ծաղկափոշով: Վերջինս, որովհետև խոնաւութիւ-նից փշանում է հեշտութեամբ. այդ պատճառով էլ գիշերներն ու խոնաւ եղանակներին ծաղիկը փակւում է: Այդ ժամանակ ծածկոյթը ծածկելով առէչները՝ պաշտպա-նում է նրանց խոնաւութիւնից:

Պտուղը եւ սերմերի տարածելը: — Մասրենու սերմը տարածւում է թռչունների ու կենդանիների միջոցով: Մրանց գրաւելու համար նրա պտուղը հասունացած ժա-մանակ վառ կարմիր գոյն է ստանում և պտղապատեանն էլ դառնում է համով ու ախորժելի: Պտուղն իր մէջ պա-էլ դառնում է բազմաթիւ սերմեր. սրանք պատած են մազմզոտ ամուր կեղեներով, և այդ պատճառով թը-չունների մարսողութեան գործարաններում փոփոխու-թեան չեն ենթարկում և անվնաս դուրս են գալիս ար-տաթորութեան հետ միասին: Մասրենու պտուղը կոչւում է մասուր: Մարդիկ ևս գործ են ածում նրա մսոտ պտղապատեանը:

Վարդենի: — Մասրենու ազնիւ տեսակն է վարդենին. սա իր ցողունով ու տերեներով բոլորովին նման է մաս-րենուն. զանազանուում է նրանից միայն իր ծաղկով: Վերջինս, որ Վարդ է կոչւում, ունենում է երբեմն հա-վերջին, որ Վարդ է կոչւում, ունենում է երբեմն հա-ծաղիկը, ինչպէս գիտենք, ունի միայն հինգ հատ պսա-ծաղիկը, ինչպէս գիտենք, ունի միայն հինգ հատ պսա-կաթերթիկ: Վարդն իր գեղեցկութեան և անուշահոտու-

թեան պատճառով շատ հին ժամանակներից սկսած համարւում է ծաղիկների թագուհի։ Վարդենու հարենիքն է Պարսկաստանը և Տաճկաստանը, այստեղից նա տարածւել է աշխարհիս բոլոր մասերը։ Վարդի տեսակները շատ բազմազան են. կան կարմիր, դեղին, սպիտակ, շատ թերթիկներով և քիչ թերթիկներով վարդեր։ Այդ բոլոր տեսակներն առաջ է բերել մարդ՝ ընտրութեան միջոցով։ Ինչքան վարդի մէջ պսակաթերթիկները շատ են, այնքան առէչներն քիչ են։ Եւ այդ հասկանալի է. պսակաթերթիկները առաջանում են առէչներից։ Վարդի ծաղիկը պարունակում է իր մէջ մի տեսակ իւղ, որից մարդիկ պատրաստում են զանազան տեսակի հոտաւէտ ջրեր և սապոն։

Մասրենին ազնւացնում են վարդենու պատւաստով։

### Գ Ա Զ Ա Ր

Բանելու տեղն ու արմաս։—Գազարը կամ ստեպղինը բանջարանոցին բոյս է, բայց վայրի գրութեամբ բնում է նաև դաշտերում՝ ճանապարհների մօսերքը։ Այդպիսի տեղերում հողի վերին շերտը հեշտութեամբ չորանում է, սակայն գազարը դրանից վնաս չի կրում, որովհետեւ ունի շատ երկար արմատ, որով մտնում է հողի խոնաւ շերտերը և այնտեղից վերցնում անհրաժեշտ ջուրը։ Վայրի գազարի արմատը դեղին է ու փայտային, բայց եթէ ցանենք նրա սերմերը բանջարանոցում և լաւ խնամենք, կստանանք աւելի փափուկ արմատ ունեցող գազար։ Շարունակելով այս ձևով մի քանի տարիներ՝ վերջը կստանանք մսոտ և համեղ արմատ ունեցող մեր բանջարանոցային գազարը։ Հէնց այս ձևով են ազնւացրել մարդիկ գազարը, նոյնպէս և բանջարանոցային այլ բոյսերը։

Եթէ գարնանը գազարի արմատը տնկենք հողի մէջ

և մի քանի շաբաթից յետոյ, երբ նա արդէն ցողուն կը լինի արձակած, հանենք ուղիաենք, կտեսնենք, որ նա բաւական բարակել է։ Դրա պատճառն այն է, որ նրա մէջ գտնւող նիւթերը գործադրում են ցողունի, տերևների և ծաղիկների կազմութեան վրայ։ Եւ այդ հասկանալի է։ Գազարն երկամեայ բոյս է. առաջին տարին տալիս է շատ կարճ ցողուն և աշխատում է, ինչքան

կարելի է, նիւթեր

ամբարել արմատի

մէջ, իսկ երկրորդ

տարին օդուելով

այդ նիւթերից՝ ար-

ձակում է երկար

ցողուն և ծաղիկ-

ներ։ Յօդունն այդ

ժամանակ երբեմն

համարում է մի ար-

շին բարձրութեան։

Յօդունն ու տե-

րեւը։—Գազարի ցո-

ղունը սնամէջ է և

պատած ամուր մազ

մզուկներով,

իսկ տերեւը բարդ փետ-

րածն է. փետրածն

կտրտւած են նաև


նրա առանձին տերեւիկները։ Տերեւների դասաւորութիւնը

հերթական է։

Ծաղիկը։—Գազարի ծաղիկները շատ փոքր են, բայց

նրանք խմբւելով միասին՝ ծաղկեփունջ են կազմում և

այդպիսով նկատելի դառնում միջատներին, նոյնիսկ հեռ-



Գ ա զ ա ր.

ւից: Ծաղկեփունջը կազմւում է այսպէս. գլխաւոր ծաղկակոթը մի կէտից արձակում է բազմաթիւ երկրորդական ծաղկակոթեր. զրանցից իւրաքանչիւրը իր հերթին դարձեալ մի կէտից արձակում է փոքրիկ ծաղկակոթեր, որոնք վերջանում են արդէն ծաղիկներով: Եթէ առաջին ծաղկակոթերը ծաղիկներով վերջանային, ծաղկեփունջը նման կլինէր պարզ հովանոցի, բայց որովհետեւ նրանցից իւրաքանչիւրն առանձին վերցրած մի այդպիսի հովանոց է կազմում, այդ պատճառով էլ ամբողջ ծաղկեփունջը նմանում է բարդ հովանոցի: Այդ ձևով ծաղկեփունջը, խօսք չկայ, աւելի է նկատելի դառնում միջատներին: Գազարի հովանոցաւոր ծաղկեփունջը ներքեւում պատած է մի քանի խիստ կերպով կտրտւած տերեփիկներով. նման տերեփիկները ունեն նաև երկրորդական հովանոցները: Այդ տերեփիկները կազմում են ծաղկեփնջի ծածկոյթը և կատարում նոյն դերը, ինչ որ բաժակը, այսինքն պաշտպանում են ծաղիկները դրաի զանազան վտանգներից:

Ծաղկեփնջի մէջ իւրաքանչիւր ծաղիկ բաղկացած է հինգ հատ կանաչ և ատամիկների նմանող բաժակատերևիկներից, հինգ սպիտակ պսակաթերթիկներից, հինգ առէչներից և մի վարսանդից: Ծաղիկի այս մասերը նստած են սերմնարանի վրայ: Վերջինիս վրայ դտնւում է և ծաղիկի մեղրոցը: Սրա միջից դուրս են գալիս զարսանդի երկու սոնակներն իրենց սպիկներով: Գազարի ծաղիկի մեղրը բոլորովին բաց է. զրա համար էլ մատչելի է նոյն իսկ կարճ կնճիթ ունեցող միջատներին: Եւ իսկապէս, զազարի ծաղիկներն այցելում են կարճակնճիթ միջատներ, օրինակ, ճանձեր, փոքրիկ բզէզներ և այլն:

Պտուղը եւ սերմի տարածումը:—Երբ ծաղիկներից սկսում են պտուղներ առաջանալ, երկրորդական ծաղկակոթերը մօտենում են իրար, որպէսզի չնասունացած սերմերը հեշտութեամբ չպոկւեն: Իսկ երբ սերմերը հասու-

նանում են, ծաղկակոթերը, ընդհակառակը, հեռանում են իրարից:

Գազարի իւրաքանչիւր պտուղը բաղկացած է երկու սերմից: Վերջիներս պատած են մի քանի շարք փշերով, որոնք վերջանում են կարթիկներով: Այս կարթիկներով նրանք կպչում են կենդանիներին և տարւում զանազան կողմեր, իսկ գետին ընկած ժամանակ էլ կպչում են հողին:


Գազարը հովանոցածկ ծաղկեփունջ ունենալու պատճառով կոչում է հովանոցաւոր բոյս: Հովանոցաւոր բոյսերի ընտանիքին են պատկանում նաև մաղդանոսը, սամիթը, կարոսը, կամ քերէվիզը, գինձը, ապա վայրի բոյսերից՝ բոխը, թունաւոր մոլախինդը կամ գիժւուկը և այլն:

## Բ Ո Ղ Կ

Արմատը:—Բողկը բանջարանոցային բոյս է. ունի բաւականին հասա արմատ, որ ցած գնալով՝ հետզհետէ բարակում է: Առաջին տարին բողկը տալիս է շատ կարծ ցօղուն և աշխատում է նիւթեր ամբարել արմատի մէջ, իսկ երկրորդ տարին այդ նիւթերը գործադրւում է ցօղունի և ծաղիկների վրայ:

Յօղունն եւ Տերեւները:—Յօղունը պատած է փոքրիկ ամուր մազիկներով, որոնք պաշտպանում են նրան ծաղիկների փոշոտման գործին ոչ մի օդո տ չտւող միջատներից: Տերեւները դասաւորւած են հերթական կարգով: Յօղունի հիմքի մօտ եղած տերեւները մեծ են և ունեն մեծ բլթակներ, վերեկները՝ փոքր աննշան բլթակներ, իսկ ծայրին գտնւողները՝ զուրկ են համարեա բլթակներից: Այդպիսի դասաւորութիւնն ու ձեր հնարաւորութիւնն է տալիս բոլոր տերեւներին հաւասար չափով լոյս ստանալու: Տերեւները նստած են ցօղունի վրայ փոքր ինչ

թեք դիրքով, այս պատճառով էլ տերևների վրայ թափւած անձրեկի կաթիլները սահելով գնում են դէպի ցօղունը և ապա այստեղից էլ դէպի արժատը։ Շնորհիւ իր տերևների այդ դիրքի՝ անձրեկի ժամանակ ինքն իրեն ջըռւմ է։



ամսով։ Բաժակը կազմւած է 4

Ծաղիկները։ — Բողկի ծաղիկները փոքր են, բայց նկատի դառնալու համար ծաղկեփունջ են կազմում։ Ծաղիկները ծաղկեփնջի մէջ նստած են առանձին ծաղկակոթերի վրայ, որոնք գուրս են գալիս գլխաւոր ծաղկակոթի զանազան կողմերից։ Այդ ձեկի ծաղկեփունջը կոչշում է ողկոյզ։ Ծաղկեփնջի ծաղիկները բոլորը միանդամից չեն բացւում, այլ աստիճանաբար։ Ներքեկից դէպի վեր, այնպէս որ գեռ չբացւած ծաղիկների կողքին տեսնում ենք ծաղկեփնջի մէջ նաև պտուղներ։

Բողկի ծաղիկը լրիւէ. նա բաղկացած է բաժակից, պսակից, առէչներից և վարտերկիներից, պսակը՝

4 պսակաթերթիկներից։ Պսակի թերթիկները դասաւորւած են խաչի ձևով. դրա համար էլ բողկի ծաղիկը կոչւում է խաչծաղիկ։ Առէչները վեց հատ են, 4-ը երկար, երկուսը՝ կարճ։ Առէչների մէջ տեղում գտնվում է վարսանդը՝ բաղկացած երկարաւուն սերմնարանից, կարճ սոնակից և գնդաձև սպիկից։ Բողկի ծաղիկը փոշուաւում է միջաների, գլխաւորապէս մեղուների միջոցով։

Փուլը։ — Փոշուաւումից յետոյ ծաղիկը թառամում է, մնում է միայն սերմնարանը, որ շուտով աճում, զարգանում է և փոխարկւում պտղի։ Վերջինս գլանաձև փոճոկ է, որի մէջ տեղով, երկայնութեամբ անցնում է միջնապատ։ Միջնապատի երկու երեսի վրայ կպած են սերմեր։ Երբ հասունանում են սերմերը, փոճոկը ճեղբւում է, պատեանները հեռանում են միջնապատից, որից յետոյ սերմերը պոկւում են և ցրւում զանազան կողմեր։

Խաչծաղիկների ընտանիքին են պատկանում բանջարանոցային բոյսերից՝ կաղամբը, մանանեխը, շաղգամը, խրէնը, ծաղիկներից՝ շահպրակը և այլն։ Նրանց մեծ մասն երկամեայ է։ Առաջին տարին տալիս են փոքր ցօղուն և նիւթեր են ամբարում կամ արմատի մէջ, ինչպէս բողկը և կամ ցօղունի մէջ, ինչպէս կաղամբը։

## ԽԱՂՈՂԻ ՈՐԹ

Բունն ու նիւղերը։ — Որթի բունն ու ճիւղերը շատ թոյլ են։ Նրանք չեն կարողանում իրենց դիրքը պահպանել. դրա համար էլ մարդիկ տնկում են սրանց մօտ յենարաններ, Որթն այդ յենարաններին կպչում է իր թելիկներով։ Այս թելիկները կամ, ինչպէս ասում են, խիղբերը, երկճիւղ են և շարունակ ուղղւում են դէպի այն կողմը, որտեղ գտնւում է յենարանը։ Փամացոյցի սլաքի պէս թելիկները շրջաններ ծրելով՝ որոնում են այդ յենա-

բանը՝ և գտնելուց յետոյ, սկսում են փաթաթւել նրան։ Նոյն ձևով թելիկները փաթաթւում են նաև այլ ծառերի ճիւղերին կամ բներին և ամրանում։ Փաթաթւելուց յետոյ, թելիկի այն մասը, որ գտնելում է յենարանի և որթի ճիւղի միջի, սկսում է ողորւել. սրա հետևանքը լինում է այն, որ ճիւղը հետզհետէ մօտենում է յենարանին։ Ոլորւած մասը զսպանակի ձևով կարող է երկարել և կարանալ։ Այդ այն նշանակութիւնն ունի, որ քամու ժամանակ ձգւելով՝ թոյլ չի տալիս նա, որ ճիւղը պոկլի յենարանից։ Յետազայում թելիկը հետզհետէ հաստանում, փայտանում է և ստանում ուղղակի երկաթէ թելի ամրութիւն։ Թելիկներից նրանք, որ յենարանի չեն հանդիպում, չորանում, թափւում են։

Տերեւը։—Տերեւը կոթաւոր է և մի քանի խորը զնացող կտրւածքներով բաժանում է 3—5 անհաւասար բլթակների։ Եզրերն ունեն մեծ ու փոքր և խիզբերով։ ատամներ։ Մատաղ տերեւի ստորին հրեսը ծածկւած է մազմզուկներով։

Ծաղիկը։—Որթի ծաղիկները փոքր են. նրանք կազմում են ծաղկեփնջեր (նշանակութիւնը)։ Ծաղկեփնջի մէջ գլխաւոր ծաղկակոթունն արձակում է զանազան կողմերի վրայ երկրորդական ծաղկակոթեր, որոնք իրենց հերթին նոյնպէս ճիւղաւորուում են և ապա վերջանում ծաղիկներով։ Այդպիսի ծաղկեփունջը կոչւում է բարդ ողկոյզ կամ յուրան։ Ծաղիկը բաղկացած է հինգ բաժակատերւիկներից, հինգ պսակաթերթիկներից, հինգ առէչներից և մի փարսանդից։ Պսակաթերթիկները միացած են մի-



միանց հետ և մի տեսակ խփիկ են կազմում բաժակի վրայ։ Խփածե պսակի տակ գտնւում են առէչներն ու ու վարսանդը, որոնք այստեղ պաշտպանւում են զանազան վտանգներից։ Երբ ժամանակը գալիս է, խփիկը հիմքից կտրւելով՝ հետզհետէ բարձրանում է և ապա ընկնում. դրանից յետոյ բացւում են առէչներն ու վարսանդը։ Որթի ծաղիկները արտաքուստ այնքան էլ աչքի չեն ընկնում. միջատներին գրաւում են նրանք իրենց անուշ բուրմունքով։ Որթի ծաղիկը միջատներին հիւրասիրում է առատ մեղրով։

Պտուղը։—Որթի պտուղը լինում է դեղին, կանաչ կարմիր և կապտաւուն գոյների. նա պատած է մոմանը-ման նիւթի մի բարակ շերտով, որով պաշտպանւում է խոնաւութիւնից։ Որթի պտուղը կոչւում խաղող։

Սերմի տարածումը։—Որթի սերմերը տարածում են կենդանիները. մարդիկ խաղողն ուտելու ժամանակ շատ անգամ սերմերը ջարդում փչացնում են, սակայն, թըռչունները, օրինակ, ճնճղուկները, տարմահաւերն ու կեռնեխները կուլ են տալիս սերմերն առանց ջարդելու։ Եւ որովհետեւ այդ սերմերը պատած են քարի պէս ամուր մաշկով, այդ պատճառով չեն մարսուումնրանց ստամոքսներում և անվաս վիճակում գուրս են գալիս արտաթութիւններին հետ։ Ընկնելով յարմարաւոր տեղեր՝ նրանք ծլում են և առաջ բերում նոր որթեր։ Խաղողի համեղ նիւթը հէնց այդ թոչուններին գրաւելու համար է։ Հասած խաղողը ստանում է այս կամ այն գոյնը թոչուններին նկատելի դառնալու համար։ Զհասած խաղողը կանաչ է լինում և թթու, որպէսզի թոչունները նրանց այդ ժամանակ նախորժեն և ապա չախորժեն ուտել։

Խաղողի գործածութիւնը։—Խաղողը բաւականին համեղ և մննդարար պտուղ է։ Նրանից պատրաստում են գինի։ Դրա համար խաղողը ճմրթում են և ստանում քաղցր մի-

հիւթ, որ մի քանի ժամից յետոյ սկսում է թթւել կամ խմորւել: Այդ խմորումն առաջ են բերում մաշկի վրայ գոնսած մանրիկ սունկերը: Խմորումից հեղուկը սկսում է պղտորւել: Պղտորւած հեղուկն այնուհետև հետզհետէ պարզում և վերջը գինու փոխարկւում: Կարմիր գինի պատրաստելու ժամանակ սև կամ կապտաւուն գոյնի խաղողի մաշկն ևս գցում են խմորւող հեղուկի մէջ: Գինին քիչ չափով օգտակար է հիւանդների համար, իսկ մեծ չափով, որպէս սպիրտ պարունակող հեղուկ, վնասակար է և քայլայում է մարդու առողջութիւնը: Ուժեղ ազդեցութիւն ունի գինին, մամաւանդ երեխաների վըրայ: Խաղողից պատրաստում են նաև չամիչ, որա համար խաղողը չորացնում են արեի տակ:

## Լ Ո Բ Ի

Յօղութը: — Լոբու մի քանի տեսակներ ունեն կարճ ու ամուր ցողուն և կարողանում են իրենց դիրքը պահպանել, միւսները, սակայն, կարիք ունեն յենարանների: Այս վերջին տեսակի լորու ցողունը սկզբում բարձրանում է ուղիղ վեր, ապա զագաթը ծուռում է և սկսում ժամացոյցի սլաքի պէս պառյաներ գործել: Այդ ժամանակ, եթէ հանդիպում է որևէ է ամուր իրի, կանգ է առնում և իր ծայրով սկսում փաթաթւել նրան: Այնուհետև կրկին վեր է բարձրանում և դարձեալ նոյն ձևով փաթաթւում յենարանին: Այդպիսի լոբու ցողունը պատած է կորճ ու ամուր մազերով, որոնցով յաջող կերպով կպչում է նա յենարանին: Պտոյաներ գործող զագաթի տերեները շատ փոքր են, որպէսզի շարժումների ժամանակ չխանգարեն ցողունին:

Տերեւը: — Լոբու արձակած առաջին տերեները հասարակ են, միւսները բարդ, բաղկացած երեք հատ ձւա-

ձեւ տերեկիներից: Ցերեկն այդ տերեները հորիզոնական դիրք են ունենում, գիշերը՝ թեք: Գլխաւոր տերեկակոթն այդ ժամանակ ծուռում է վեր, իսկ տերեկիներն, ընդհակառակը, կախում են ցած: Գիշերը, այսպէս ասած, տերերը քնում է: Պատճմուը: Ցայտնի է, որ բոյսն իր տերեներով շարունակ ջուր է գոլորշիացնում և գոլորշիացած ջրի փոխարէն արժատները հողից կրկիննոր ջուր են ծծում, որի մէջ լուծած դրութեամբ գրանցում են սննդարար ազեր: Կնշանակէ, եթէ գոլորշիացումը կանգ առնէր, բոյսն այլ ևս հողից նոր սնունդ չէր վերցնի: Գիշերը տերեները ծածկւում են ցողով. սա փակում է անց քերը և խանգարում գոլորշիացման գործողութիւնը: Իսկ երբ տերեկը կախում է, ցողի կաթիներն այլ ևս չեն մընում տերեի վրայ: Նըրանը սահում թափւում են ցած, որի պատճմանով անցը տերեները բացւում են և գոլորշիացումը շարունակւում է: Զափազանց տաք օրերին տերեները կախում են էլ աւելի ուժեղ կերպով: Եւ այդ հասկանակի է: Հորիզոնական ողղութիւն ունեցող տերեներն արեից առատ ջերմութիւն ստանալով աւելի

լ ո բ ի.  
ա) ձիւղը տերեներով և ծաղիկներով  
բ) Մերմը:

են և գոլորշիացումը շարունակւում է: Զափազանց տաք օրերին տերեները կախում են էլ աւելի ուժեղ կերպով: Եւ այդ հասկանակի է: Հորիզոնական ողղութիւն ունեցող տերեներն արեից առատ ջերմութիւն ստանալով աւելի

շատ են գոլորշիացնում, քան արմատը կարող է հողից ծծել, և հետևանքը լինում է այն, որ բոյսը թառամում է: Սակայն, երբ տերևները կախում են, այդ տեղի չի ունենում, որովհետև արեփ ճառագայթները տերեփի վրայ ընկնում են թեք ուղղութեամբ և դրա համար էլ քիչ են տաքացնում նրան:

**Ծաղիկը:**—Լորու ծաղիկն անկանոն է: Նա նման է թռչող թիթեռնիկի, դրա համար էլ կոչւում է թիթեռնա ծաղիկ: Բաժակը, որ իսկապէս բաժակի նմանութիւն ունի, բաղկացած է հինգ հատ բաժակատերեկներից, որոնք



Լորու տերեկ զիշերը:

Լորու տերեկ ցերեկը:

ներքեւում միացած են միմիանց հետ: Պատկը, որ անկանոն է, բաղկացած է հինգ թերթիկներից: Վերեկն ամենամեծն է. սա մինչև ծաղկի բացւելը ծածկում է ծաղիկը և թոյլ չի տալիս, որ անձրևաջուրը մըտնի ծաղկի ներսը: Այդ թերթիկը կոչւում է առագաս: Սրա ներքեւում գտնւում են երկու հատ աւելի փոքր և միմիանց բոլորովին նման թերթիկները: Արանք էլ կոչւում են թեւեր կամ թիակներ: Վերջիններիս տակ զըտնուում են միւս երկու թերթիկները, որոնք ներքեւում միացած են միմիանց հետ և կազմում են մի նաւակ: Այդ մասն էլ կոչւում է նաւակ: Սրա մէջ գտնւում են 10 հատ

առէչներ, որոնցից 9 հատն իրանց թելիկներով միանալով միմեանց հետ՝ կազմում են մի խողովակ, որի երկայնութեամբ վերևից անցնում է մի ճեղքւածք: Այդ ճեղքւածքն էլ ծածկւում է տամներորդ ազատ առէչով: Վարսանդն անցնում է առէչներից կազմւած այդ խողովակի միջով: Նա բաղկացած է երկարաւուն սերմնաբանից և կոր սոնակից, որ վերջանում է սպիռվ: Սոնակի վերին մասի ներքեկի երեսը ծածկւած է մազիկներով և կոչւում է խոզանակ: Վարսանդի հիմքի մօտ գտնւում են մեղրաբեր գեղձեր: Լորու ծաղիկը փոշտուում է միջատների, պլիսաւորապէս մեղուների և իշամեղուների միջոցով: Նրա կազմութիւնն այնպէս է, որ միջատների այցելութեան ժամանակ պէտք է անպատճառ փոշտուի: Նրա փոշանօթներն աւելի վաղ են հասունանում, քան սպին: Մինչև ծաղկի կատարելապէս բացւելը փոշանօթները փոշին թափում են իրենց տակ գտնւող սպիքի և խոզանակի վրայ: Սպին այդ փոշուց չի օգտառում, որովհետև դեռ ևս հասունացած չէ: Եւ ահա երբ մեղուները կամ իշամեղուներն նստում են ծաղկի թևերի վրայ, նըրանց ծանրութեան տակ ճնշւում են թիակները և ապա նաւակը: Վերջինս այդ ճնշման տակ՝ փոքր ինչ ցած է գնում, և որովհետև վարսանդը մնում է իր տեղը, դրա համար էլ նրա սուսակը զուրս է ցցւում և իր սպիռվ քաւում միջատի փորին: Այնուհետև միջատի փորը քըսւում է խոզանակին, որ ծածկւած է ծաղկափոշով: Եթէ միջատը գալիս է ուրիշ ծաղկից և իր փորի վրայ ծաղկափոշի ունի, ապա քսւելով սպին՝ փոշոտում է նրան: Այդպիսով մի ուրիշ ծաղիկ, միջատը արդէն այդ ծաղիկից է ծաղկափոշի տանում նրան: Այդպիսով կատարում է խաչաձև փոշոտումն:

**Լորու ծաղիկը** փոշոտում են միայն մեր միջատները, որովհետև միայն դրանք կարող են իրենց ծանրութեամբ

Ճնշումն գործ դնել նաւակի վրայ: Փոքրերը փոշոտումն առաջ չեն բերում: Նրանք չեն օգտառում և ծաղկի մեղրահիւթից, որովհետև սա գտնուում է առէջներից կազմը-ւած խողովակի ներքեմ մասում: Մեղրահիւթին հասնելու համար նրանք պէտք է ցածրացնեն նաւակը, իսկ այդ անել նրանք չեն կարող: Ասել է, լորու ծաղիկն իզուր՝ տեղն իր մեղրահիւթը չի շռայլում: Մեղրահիւթ տալիս է նա միայն այն միջատներին, որոնք նրան կարող են փոշուել:

ՊՏՈՒՂՅ: — Ծաղկից առաջանում է պտուղը. սա մէր երկար պատիճ է, որի մէջ շարւած են սերմերը: Հասունանալուց յետոյ պատիճը ճեղքուում է և սերմերը միջից թափւելով՝ տարածուում են գետնի վրայ: Մարդիկ գործ են ածում լորու թէ խակ պտուղը և թէ հասած սերմերը:

Թիթեռնածաղիկների ընտանիքին են պատկանում նաև ոսպը, սիսեռը, բակլան, առւոյտը, ակացիան և այլն:

### Տ Խ Լ Ի

Տիրին գարնան: — Վաղ գարնան տիվլու վրայ նրկատուում են բացի պտուկներից նաև երկար կատիկներ: Ցուրտ եղանակներին զրանք ամուր են լինում և ճիւղի մի կողմը ծռած, իսկ տաք օրերին՝ երկարում են, առաձգական դառնում և կախւում ցած:

Կատիկը բաղկացած է կոթունից և նրա վրայ նրստած բաղմաթիւ թեփուկներից: Իւրաքանչիւր թեփուկի տակ գտնուում են երկու ուրիշ թեփուկներ, որոնց տակն էլ գտնուում են 8 հատ առէջներ: Վերջիններս արական գործարաններ են, ուրեմն, կատիկներն արական ծաղիկներ են: Իւրաքանչիւր կատիկ բաղկացած է այնքան ծաղիկներից, որքան նրա մէջ թեփուկներ կան: Կնշանակէ, կատիկը ծաղկեփունջ է:

Բացի կատիկներից, տիվլու վրայ նկատում են նաև


պտուկների նման ծաղիկներ: Սրանք էլ ունեն միայն վարսանդներ, որոնք վերջանում են կարմիր թելերի նըմանող սպիներով: Վարսանդը ծաղկի իգական գործարան է: Կնշանակէ, պտուկի նմանող ծաղիկն էլ բոյսի իգական ծաղիկն է: Արական և իգական գործարանները տիվլու վրայ գտնուում են առանձին-առանձին ծաղիկների մէջ, բայց որովհետև այդ ծաղիկները գտնուում են միենոյն թփի վրայ, այդ պատճառով՝ էլ տիվլին կոչւում է միատուն բոյս:

ՓՈԵՏՈՒՄԲ: — Տըխ-

լու ծաղիկները փոշուում են քամու միջոցով: Եթէ մենք արեսու մի օր, երբ օդի մէջ մեղմիկ քամի է զգացւում, դիտենք տիվլու թուփը, կնկատենք, որ նրա առաձգական ճիւղերն, իրենց վըրայ գտնուած կատիկների հետ միասին, նոյն իսկ թեթև քամիների ժամանակ շատ հեշտութեամբ շարժւում են: Շարժումների ժամանակ պարզ

կերպով կուեսնենք, Ա. ճիւղն արական և իգական ծաղիկներով 1) իգասոր կատիկներից կան ծաղիկը, 2) կատիկը: Բ. ճիւղը տերեներով և պառզներով:

Քարձրանում են գեղին փոշու ամպեր, որոնք բամուց տարւում են զանազան կողմեր և վերջը թափւում ցած: Այդ ծաղկափոշին է, որ այնուհետև հեշտութեամբ ընկնում է



### Տ Խ Լ Ի

նաև իգական ծաղիկների սպիների վրայ և նրանց փոշութում:

Տխլու ծաղիկներն ոչ վառ գոյներ ունեն, ոչ բուրմունք և ոչ էլ մեղք: Եւ այդ շատ հասկանալի է. չէ որ այդ բոլորը միջատների համար է, իսկ տխլին միջատների կարիքը չի զգում. նա փոշութում է քամու միջոցով: Սակայն, քամու միջոցով փոշութելու համար նա ունի այլ յարմարութիւններ: Նրա կատուկները գտնւում են մատաղ ճիւղերի ծայրերին, որպէսզի քամուց հեշտութեամբ ճօճւեն, ապա այդ կատուկներն առածգական են դառնում այն ժամանակ, երբ պէտք է իգական ծաղիկը փոշութի: Առածգական դարձած ժամանակ նրանք կախւում են ուղիղ դէպի ցած, և այդ նրա համար, որ ծաղկափոշին թափւի ոչ թէ գետին, այլ ներքեւում գտնւող թեփուկների վրայ և այգտեղից այնուհետև բամու միջոցով տարւի զանազան կողմեր: Տխլին ծաղկում է այն ժամանակ, երբ տերևները դեռ բացւած չեն, ուրեմն, ծաղկափոշին կարող է անարգել կերպով տարւել այս ու կողմը, ապա ծաղկափոշին չոր է, թեթև և փոքր, որպէսզի հեշտութեամբ շարժւի օդի մէջ: Վերջապէս կատուկներն ունեն շատ առատ ծաղկափոշի, սրա մեծ մասը եթէ անհպատակ թափւում է այս ու այն կողմը, մի մասը միշտ ընկնում է սպիների վրայ: Սպիներն էլ, որպէսզի հեշտութեամբ ընդունեն ծաղկափոշին իրենց վրայ, ոչ միայն մեծ են, այլ և ծածկւած են մազմզուկներով: Չոր ու փոքրիկ ծաղկափոշին ընկնելով սպիների վրայ՝ չնորհիւ մազմզուկների՝ մնում են այնտեղ, նոյն իսկ քամիների ժամանակ:

Տերեւը:—Տխլին ծաղկելուց յետոյ մի քանի շաբաթանց, սկսում է տերևել: Նրա տերևը մօտաւորապէս սըրտաձեւ է և ունի ատամնաւոր եղբեր: Իւրաքանչիւր առամ իր հերթին նոյնպէս ատամնաւոր կտրտւածքներ

ունի, բայց աւելի մանրիկ: Տխլին բանում է անտառներում, մեծ ծառերի արանքում, զբա համար էլ ունի մեծ ու քնքոյշ տերևներ, որպէսզի առատ լոյս ստանայ և կարողանայ մեծ չափով ջուր գոլորշիացնել:

Պտուղը:—Տխլու պտուղն ունի հաստ փայտային կեղեկ, որ պաշտպանում է միջուկը զանազան վտանգներից: Պտուղը գտնւում է մի բաժակի մէջ: Այս բաժակն առաջանում է սերմնարանը շրջապատող թեփուկներից: Բաժակ ունենալու պատճառով տխլին կոչւում է բաժակաբեր բոյս:

Սերմի տարածումը:—Տխլու սերմը տարածւում է կենդանիների, գլխաւորապէս սկիւռների ու ճայերի միջոցով: Սրանք պոկելով պտուղը կամ գտնելով թեփերի տակը, տեղն ու տեղը չեն ուտում, այլ տանում են մի անվտանգ տեղ հանգիստ կերպով ուտելու համար: Այդ գէպքում յաճախ անզգուշութիւնից պտուղները թափում հն նրանք այս ու այն կողմը: Բացի զբանից, սկիւռներն իրենց համար ձմեռւայ պաշար են ամբարում զանազան տեղերում, սակայն, պատահում է երեմն, որ նրանք մոռանում են իրենց պահած պտուղների տեղը և այգպիսով սերմը տարածւում է: Սերմի տարածման գործում մեծ դեր է կատարում մարդու: Զհասած պտուղների բաժակները շատ թթու են լինում, որպէսզի կենդանիները նըրանց ձեռք չտան:

Պտուկները:—Պտուղները հասնելուց յետոյ, տերևները գեղնում կամ կարմրում են և ապա թափւում: Յուլիսին տերևների անութներում սկսում են առաջանալ պըտուկներ և արական ու իգական ծաղիկներ: Իգական ծաղիկները պաշտպանւելու համար ծածկւած են զրսից թեփուկներով, իսկ արական ծաղիկները կամ կատուկների թեփուկները գարձեալ նոյն նպատակով նստած են շատ խիտ կերպով իրար վրայ և ծածկւած մազմզուկներով:

Բաժակաբերների ընտանիքին պատկանում են նաև կաղնին, հաճարենին, կեճին, շագանակենին, ընկուզենին և այլն:

## Խ Տ Ո Ւ Տ Ի Կ

Խտուտիկը շատ տարածւած բոյս է. բանում է դաշտերում, մարգագետիներում, նաև ճանապարհի եղերքին և պատերի ճեղքւածքներում, եթէ սրանք լցւած են լինում հողով:

Արմատը:—Խտուտիկը բազմամեայ բոյս է. ունի մեծ, հաստ և խորը գնացող արմատ: Այդ արմատով նա խոնաւութիւն է ծծում հողի խորը շերտերից, դրա համար էլ աճում է նաև այնպիսի չոր տեղերում, ուր ուրիշ բոյսեր աճել չեն կարող:

Ցողունը եւ տերեւները:—Ցողունը շատ կարճ է և թաղւած հողի մէջ. այդ է պատճառը, որ տերեւները կարծես թէ դուրս են գալիս անմիջապէս արմատից: Զմեռն այդ ցողունը արմատի հետ միասին մնում է հողում և գարնան արձակում տերեւներ ու ծաղիկներ: Այդպիսի ցողուն ունենալու պատճառով կենդանիները տերեւներն ու ծաղիկները ուտելու ժամանակ ցողունին չեն վնասում: Անվնաս մնալով ցողունը՝ իրենից կրկին նոր տերեւներ ու ծաղիկներ է արձակում: Ենշանակէ, կարճ և հողում թաղւած ցողունը նրան հնարաւորութիւն է տալիս իր գոյութիւնը պահպանելու: Տերեւները մեծ են և շրջանաձև փռւած գետնի վրայ: Դրանք այդ ձեռվ ծածկում են հողը և պաշտպանում նրան չորանալուց: Բացի դրանից, տերեւների եղբերը փոքր ինչ վեր են բարձրացած, դրա համար համար էլ անձրկի ջուրը սահելով տերեւների վրայով՝ գընում է ուղղակի դէպի արմատը: Տերեւների այդպիսի դասաւորութեան ու ձեփ շնորհիւ խտուտիկը ծածկում է

մօաը բսած քնքոյշ բոյսերին և զրկելով լոյսից՝ խեղդում է նրանց ու ինքը միայնակ օգտառում հողի սննդից:

Լաւ շըրազւած զամբիւղ



Խ Տ Ո Ւ Տ Ի Կ

Դաշտերում և մարզագետիններում, սակայն, ուր խիստուսականութիւն է լինում, խտուտիկն այդպէս վարւել չի կարող. այստեղ նա, ընդհակառակը, տերևները ուղղում է վեր, դէպի լուսը:

Ծաղիկները:—Խտուտիկի ծաղիկները նստած են երկար և սնամէջ կոթունների վրայ: Առաջին հայեացքից մեզ թւում է, թէ իւրաքանչիւր կոթունի վրայ նստած է մի հատիկ ծաղիկ: Սակայն, ուշադիր կերպով դիտելով նկատում ենք, որ նա մի հատիկ ծաղիկ չէ, այլ մի ամբողջ ծաղկեփունջ և նման լինելով զամբիւղի, կոչւում է զամբիւղ: Դրսից զամբիւղը պատած է երկու շարք կանաչ տերևներով: Այս տերևները կազմում են զամբիւղի ծածկոյթը: Մինչեւ զամբիւղի բացւելը, ծածկոյթը ծածկում է նրան և պաշտպանում չբացւած ծաղիկները ցըրտից և այլ վտանգներից: Ցերեկը զամբիւղը բացւում է լայն կերպով, իսկ կէսօրից յետոյ սկսում է փակւել զիշերը, նոյնպէս և վատ եղանակներին ծածկոյթը խիտ կերպով ծածկում է զամբիւղը: Կնշանակէ, ծածկոյթը պաշտպանում է նրան և բացւելուց յետոյ՝ ցողից ու անձերից:

Եթէ պոկենք զամբիւղից մի հատիկ ծաղիկ և գիտենք, կնկատենք, որ նրա ներքեսում գտնւում է փոքրիկ սպիտակ սերմարանը և սրա վրայ սոնակը: Վերջինիս ներքեսում, համարեա սերմարանի վրայ շարւած են շրջանաձև մի շարք մաղիկներ. սրանք կազմում են ծաղկի բաժանում: Բաժակից վերև գտնւում է պսակը՝ բաղկացած միմեանց հետ միացած հինգ հատ թերթիկներից: Պսակը ներքեսում կազմում է մի խողովակ, որ շըջապատում է սոնակը, իսկ վերեսում լայնանալով ծուռում մի կողմը և լեզւակի ձեռվ երկարում: Ծաղիկ մէջ կան հինգ հատ առէջներ. սրանք ունեն երկար փոշանօթներ, որոնք միացած են միմեանց հետ և կազմում են մի խողովակ, որի

միջով անցնում է սոնակը: Սոնակը վերջանում է երկճղի սպիտով: Զամբիւղի ծաղիկները բացւում են ոչ թէ միանգամից, այլ աստիճանաբար՝ եղբերից սկսած: Փոշոտումը կատարւում է միջատների միջոցով: ծաղիկները դրանց հիւրասիրում են առատ մեղրահիւթով, որ գտնւում է պսակի խողովակի մէջ:

ՊՏՈՒՅՐ:—Փոշոտումից յետոյ ծաղկի պսակը, առէջներն ու սոնակը թափամում, թափւում են. մնում են միայն սերմարանը և մաղիկներից բաղկացած բաժակը: Այնուհետեւ զամբիւղը փակւում է և պտուղներն այնտեղ սկսում են զարգանալ: Սոնակի այն մասը, որ գտնւում է սերմարանի և բաժակի միջն աճում երկարում է, աճում են նաև բաժակի մաղիկները: Բաժակից վերջը առաջանում է մի փամփլիկ փետրիկ: Երբ պտուղները հասունանում են, ծածկոյթի տերւիկները ծուռում են դէպիցած, ծաղկակալը ուռուցիկ ձև է ընդունում, և ստացւում է ամենքին յայտնի խտուտիկի փետրագնդակը: Սերմիկները, որոնք հարթ ծաղկակալի վրայ հազիւ են պահւում, ամենաթեթև քամուց անդամ պոկւում են և շնորհիւ իրենց փետրիկի՝ տարւում զանազան կողմեր:

Խտուտիկը՝ զամբիւղի նման ծաղկեփունջ ունենալու պատճառով պատկանում է զամբիւղաւուների ընտանիքին: Այդ ընտանիքին են պատկանում նաև արևածաղիկը, կանկարը, տերեփուկը (վասileք), երիցուկը (ромашկա) կուտուկը, տատասկափուշը, գէորգինը և այլն:

## Կ Ա Ր Տ Օ Ֆ Ի Լ

Պալարները:—Կարտօֆիլն ամենատարածւած բոյսերից է: Շատ երկրներում նա հացաբոյսերի տեղ է ծառայում: Նրա այն մասը, որ գործ ենք ածում իրեւ կերակուր, աճում է գետնի տակ և կոչւում է պալար: Սա թւում

է, թէ բանում է կարտօֆիլի արմատների վրայ. բայց ի-  
րօք այդպէս չէ: Եթէ ամառայ սկզբին հանենք գետնից  
կարտօֆիլի թուփը, կտեսնենք, որ նրա ցողունի ստորեր-  
կրեայ մասի վրայ կան բարակ անգոյն և երկար ընձիւղ-



Կարտօֆիլ

ներ: Այս ընձիւղներն իրենց վրայ այս ու այն տեղ ու-  
նեն փոքրիկ թեփուկներ, այսինքն ձևափոխւած տե-  
րեներ: Յայտնի է, որ արմատի վրայ երբէք տերեներ  
չեն դուրս գալիս. Եթէ ընձիւղների վրայ կան թեփուկա-

նման տերեներ, այդ նշան է արդէն, որ նրանք ստորեր-  
կրեայ ձևափոխւած ցողուններ են: Ամառայ վերջերին  
գետնից հանած կարտօֆիլի թփի վրայ կտեսնենք, որ ըն-  
ձիւղների ծայրերը հաստացել, մեծացել են և փոխարկ-  
ւել պալարների: Ուրեմն, պալարները դուրս են գալիս  
ոչ թէ արմատների, այլ ստորերկրեայ ցողունների վրայ  
և ոչ այլ ինչ են, բայց եթէ այդ ցողունների հաստացած  
ծայրերը: Ինչըան մեծ է ստորերկրեայ ցողունն, այնքան  
շատ են լինում նրա վրայ և պալարները: Այդ է պատ-  
ճառը, որ մարդիկ կարտօֆիլի ցողունի ներքենի մասը հո-  
ղով ծածկում են:

Ի՞նչով է լցւած կարտօֆիլի պալարը: Եթէ կտրենք  
պալարը և ածենք նրա վրայ մի կաթիլ իոդ, կնկատենք,  
որ կաթիլի ընկած տեղը իսկոյն մուգ կապոյտ գոյն է ստա-  
նում: Այդ նշան է արդէն, որ պալարի մէջ կայ օպայ:  
Եւ իրօք, պալարն ամբողջովին լցւած է օպայով:

Պալարի վրայ տեղ-տեղ կան փոսեր, ուր գտնւում են  
բողբոջիկներ՝ ծածկւած թեփուկներով. դրանք կոչւում  
են աչիեր Գարնանը մառանում եղած պալարների այդ-  
աչերից դուրս են գալիս բարակ ցողուններ, որոնք լոյ-  
սի պակասութեան պատճառով գեղնաւուն գոյն են ունե-  
նում: Հողում դրւած պալարներից ես նոյն տեղերից  
դուրս են գալիս ցողուններ: Խւրաքանչիւր աչքից դուրս  
է գալիս մի ցողուն, դրա համար էլ պալարը կարելի է  
բաժանել այնքան մասերի, որքան նրա վրայ աչքեր կան  
և իւրաքանչիւր մասից դուրս կգայ մի առանձին թուփ:  
Սկզբում ցողունն իր մնունդը վերցնում է պալարից: Այդ  
է պատճառը, որ վերջինս ցողունի աճման հետ զուգըն-  
թաց փափկում, կուչկչատում է և վերջը, երբ զրկվում  
է իր բոլոր մննդաբար նիւթերից՝ փթում է: Նրա տեղ,  
սակայն, նոր ցողունի վրայ առաջանում են նոր պալար-  
ներ: Սրանք ձմեռը մնալով հողի մէջ՝ գարնանը կարտօ-

Քիլի նոր թփեր են առաջ բերում: Ուրեմն, պալարների միջոցով կարտօֆիլը բազմանում է:

Յօլումը եւ տերեւները:—Կարտօֆիլի ցողունը հիւթալի է, անկիւնաւոր և ծածկւած մանրիկ մազիկներով: Տերեւները մեծ են և անզոյդ փետրաձև: Սրանց բոլոր տերեւները նոյն մեծութիւնը չունեն. խոշոր տերեւիկների արանքում տեղաւորւած են համեմատաբար փոքրերը: Թէ ցողունն և թէ տերեւներն իրենցից անդուրեկան հոտ են արձակում և թունաւոր են: Այդ է պատճառը, որ կենդանիները նրանց չեն ուտում: Թունաւոր նիւթ են պարունակում նաև արևի ճառագայթների տակ կանաչած պալարները:

Ծաղիկները:—Ծաղիկները նստած են կարճ կոթունների վրայ՝ ցողունի գագաթին: Ծաղկի բաժակը բազկացած է 5 տերեւներից, որոնք միացած են միմեանց հետ և միայն վերևում ունեն հինգ ատամիկներ: Պատկի ևս բաղկացած է միմեանց հետ միացած հինգ թերթիկներից. որանք լինում են կամ ապիտակ և կամ բաց մանիշակագյուն: Առէջները հինգ հատ են, ունեն կարճ թերթիկներ և երկարաւուն փոշանօթներ: Փոշանօթները դասաւորւած են այնպէս, որ կազմում են մի խողովակ, որի միջով դուրս է գալիս վարսանդի սոնակը:

Կարտօֆիլի ծաղիկները մեզը չունեն և միջատները նրանց շատ քիչ են այցելում: Այդ է պատճառը, որ նըրանք մեծ մասամբ իրենք իրենց են փոշոտում: Փոշոտման ժամանակ ծաղիկը ծուռւմ է դէպի ցած, դրա համար էլ ծաղկափոշին թափւած ժամանակ ընկնում է ուղղակի սպիթի վրայ և փոշոտում նրան: Ինքնափոշոտումից առաջանում են թոյլ սերմեր, բայց այդ կարտօֆիլի համար նշանակութիւն չունի, որովհետեւ նա բազմանում է մեծ մասամբ պալարների միջոցով: Կարտօֆիլի միքանի տեսակներ նոյն խակ պտուղներ ու սերմեր չեն տալիս.

Պրանց ծաղիկները չեն փոշոտում և բացւելուց յետոյ քիչ անցած՝ թառամում, թափւում են:

ՊՏՈՒՂԸ:—Պտուղը փոքր է և կանաչ գոյնի. նա նոյն պէս ցողունի և տերեւների նման թունաւոր է: Մարդու համար այդ պտուղը ոչ մի նշանակութիւն չունի:

ՀԱՅԵՆԻՖՐ:—Կարտօֆիլի հայրենիքը Հարաւային Ամերիկայի տաք երկրներն են: Եւրոպա բերուել է նա 16-րդ դարում: Երկար ժամանակ ժողովուրդը գործ չէր ածում այդ, բայց յետոյ ստիպւած եղաւ սովի պատճառով գործ տծել իրեն կերակուր: Այժմ կարտօֆիլը տարածւած է աշխարհիս բոլոր մասերում: Կարտօֆիլը պատկանում է մորմազգիների ընտանիքին: Այդ ընտանիքին են պատկանում նաև մորմը, պոմիդորը, ծխախոտը և այլն:

## Ս Ո Խ

ԿՈՆԴԵՂՋ:—Սոխի այն մասը, որ գործ ենք ածում կերակրի մէջ, ածում է զետնի տակ և կոչւում է կոնդեղ: Եթէ երկարութեամբ կտրենք կոճղէզը, սերքենում կնկատենք մի մսոտ մաս, որ յատակ է կոչւում: Դա սոխի կարճացած և դրա համար տափակած ցողունն է: Սրա վրայ նստում են մի շարք թեփուկանման տերեւներ, դրսիները՝ չոր, կոտրտող և կարմրաւուն գոյնի, սերսիները՝ փափուկ, մսոտ, հիւթալից և սպիտակաւուն: Ասել է, կոճղէզը ճիշտ նոյն կազմութիւնն ունի, ինչ որ բողբոշը. այդ պատճառով էլ կարող է համարւել ստորերկրեայ բողբոշ: Բայց որովհետեւ սա ինքն է իր մնունդը հայթայթում, դրա համար էլ յատակի ներքեւ մասից գուրս են գալիս մի շարք թելանման արմատիկներ:

ԿՈՆԴԵՂՋԻ նշանակութիւնը:—Մառանում կոճղէզը յաճախ ծլում է և արձակում խողովակածն տերեւներ. Եթէ տեղը լոյս է, այդ տերեւները կանաչ են լինում,

իսկ եթէ մութ՝ դեղնաւուն։ Հողի մէջ գրւած կոճղէզն  
և ծլում է և տերեներ արձակում։ Տերեների համար  
անհրաժեշտ մնունդն այդ ժամանակ վեցցւում է կոճղէզի  
թեփուկներից։ Այդ է պատճառը, որ այդ թեփուկները  
հետզհետէ բարակում ու կուչկչատում են և վերջն  
էլ փշանում։ Դրա փոխարէն ամենաներսի թեփուկ-  
ների անկիւններում գտնւող պտուկներից կամ բող-  
բոշներից մէկը կամ մի քանիսը սկսում են աճել, մե-  
ծանալ և նոր կոճղէզներ առաջ բերել։ Այս նոր կոճղէզ-  
ներն իրենց մէջ պաշար են ամբարում հետեւալ տարւայ  
բոյսի համար։ Դրսի չոր տերեները պաշտպանում եւ  
կոճղէզը չօրանալուց, իսկ հողի տակ՝ զանազան որդերիցը


Տերեւը: — Սոխի տերեւը խողովակածէ է. նրա ջղերը  
գնում են իւսար կողքով, համարեա զուգահեռաբար, ասել  
է, նա զուգահեռաջիղ տերեւ է: Այդպիսի ջղեր ունեն  
միաշաքիլները: Ուրեմն, սոխը միաշաքիլ է. և իսկապէս,  
նրա սերմը բաղկացած է մի շաքիլից և ոչ լոբու նման՝  
երկու շաքիլից:

Ծաղիկները: - Սոխի ծաղիկները փոքր են, ունեն  
կանաչաւուն սպիտակ գոյն և խողովակաձև ծաղկակո-  
թունի ծայրին կազմում են գնդաձև հովանոցաւոր ծաղ-  
կեփունջ:

Սոխի ընտանիքին են պատկանում նաև սխտորը, ծնեբեկը և գեղեցիկ ծաղիկներ ունեցող յակինթը, հովտաշուշանը, շուշանը և այլն։ Այս ընտանիքին պատկանողները շուշանի անունով կոչվում են Շուշանազգիներ։

80967

Յորենը մեզ մօտ ամենատարածւած հացաբոյսն է.  
Նրա հատիկներից հաց ենք պատրաստում, իսկ ցօղունից  
յարդ, որով կերակրում են ձմեռը ընտանի կենդանի-  
ներին:



Արմատը:—Յորենի հատիկը ծլելիս արձակում է, ինչպէս տեսանք, ոչ թէ զլիաւոր արմատ, այլ մի շարք համարեա նոյն երկարութիւնն ունեցող թելանման արմատներ: Այդպիսի արմատները կոչւում են փնջաձեւ: Այդ թելանման արմատների ընդհանուր երկարութիւնը կէս վերստից աւելի է, իսկ արմատների վրայ գտնւած մազմզուկների ընդհանուր երկարութիւնը հասնում է մօտ 20 վերստի: Այս բոլոր արմատները տարածւում են մի փոքրիկ տեղում, դրա համար էլ հողի մասնիկները պատում են այնպիսի խիտ ցանցով, որ ոչ մի կաթիլ չուրիզուր չի անցնում:

Յօղունն ու Տերեները:—Յորենի ցողունը կոչւում է ծղօս. սա երեմն երկու արշինից աւելի բարձրութիւն է ունենում, բայց լինում է շատ բարակ: Զնայած իր այս բարակութեան, նա բաւական ամուր է և ոչ միայն տանում է տերեների ու հասկի ծանրութիւնը, այլ և դիմազրում է ուժեղ քամիներին: Դրա պատճառն այն է, որ նա մնամէջ է, այսինքն ունի խողովակի ճեւ և միջնապատերով բաժանւած է մի քանի մասերի: Յօղունի ներքեմի մասում այդ միջնապատերն իրար աւելի մօտ են, քան վերեւում: Եւ այդ շատ հասկանալի է. ներքեմի մասի վրայ աւելի ծանրութիւն կայ, հետևապէս այդ մասն աւելի ամուր պէտք է լինի, քան վերեինը: Միջնապատերի գտնւած տեղերում ցողունը զգալի կերպով հաստանում է. այդ մասերը կոչւում են հանգոյցներ:

Տերեր բաղկացած է երկու մասից՝ սկսուաելից և պատեանից, որ ներքեսում պատում է ցողունը: Այս երկուսի միացման տեղում գտնւում է վեր ցցւած մի յաւելած, որ կոչւում է լեզվակ: Վերջինս ամուր կերպով յենւած է ցողունին, դրա համար էլ թոյլ չի տալիս, որ տերեկի սկուտեղով հոսող ջուրը մասի պատեանից կազմւած խողովակի մէջ: Եթէ կտրենք ցորենի մատաղ ցո-

ղունը. կտեսնենք, որ տերեկի խողովակածև պատեանի մէջ գտնւում են ցօղունը, մատաղ տերեները և հասկը, որոնք այնտեղ հրաշալի կերպով պաշտպանւում են զանազան վըտանզներից: Տերեկի սկսուակը բարակ ժապաւէնի ձևուում է ամեն կողմի վրայ և այդպիսով պաշտպանում բոյսն ուժեղ քամիներից:

Ծաղիկները:—Յորենի ծաղիկները ցողունի գագաթին կազմում են ծաղկեփունչ: Գլխաւոր ծաղկակոթունի վրայ նատում են մի շարք ծաղիկների խմբեր, առանց կոթունների. այդպիսի ծաղկեփունչը կոչւում է հասկ: Սակայն, նրա ծաղիկների իւրաքանչիւր խումբն իր հերթին նոյնպէս մի հասկիկ է, որովհետեւ այդտեղ ես ծաղկակոթի վրայ ծաղիկները նստած են առանց կոթերի: Կնշանակէ, ցորենի ծաղկեփունչը բարդ հասկ է: Հասկիկներից իւրաքանչիւրը շրջապատւած է երկու թեփուկով, որոնց տակ նստած են երեք, երեմն էլ աւելի ծաղիկներ: Սրանք զուրկ են բաժակից և պսակից, բայց իւրաքանչիւրն ունի երկու թեփուկ, որոնք կոչւում են ծաղկի թեփուկներ: Սրանցից արտաքինն երեմն վերջուում է մի երկար և սուր ծայրով, որ կոչւում է իմաստ: Յորենի մի քանի տեսակներ քիստ չունեն: Ծաղկի թեփուկների ներսում գտնւում են երկու այլ թեփուկներ: Սրանցից յետոյ գալիս են արդէն առէջները. սրանք երեք հատ են և ունեն երկար և մեծ փոշանօթներ: Առէջների թելիկները բարակ են, այդ պատճառով էլ մեծ փոշանօթները շարունակ ճօճւում են: Ծաղկին ունի միայն մի վարսանդ, որի սերմարանի մէջ կայ մի սերմարուզ: Սերմարանի վրայ նստած են երկու հատ փետրաւոր սպիներ: Ծաղկիը փոշուում է քամու միջոցով: Այդ է պատճառը, որ նա չունի ոչ վառ գոյներ, ոչ բուրմունք և ոչ էլ մեղրահիւթ, բայց ունի առատ չոր ու մասրիկ

ծաղկափոշի, որ քամուց հեշտութեամբ աարւում է զանազան կողմեր և մեծ փետրաւոր սպիներ, որոնց վրայ ծաղկափոշին հեշտութեամբ կարող է նստել:

ՊՏՈՒԼՐ:—Փոշոտումից յետոյ ծաղկի թեփուկները ծածկում են. նրանց պաշտպանութեան տակ զարգանում ու հասունանում է ցորենի սերմը կամ հատիկը: Երբ վերջինս հասունանում է, թեփուկները չորանում, բացւում են և հատիկն ընկնում է հողի վրայ:

ՑՈՐԵՆԸ պատկանում է խոտազգիների ընտանիքին: Այդ ընտանիքին են պատկանում նաև մեր բոլոր հացաբոյսերը՝ գարին, վարսակը, հանարը, կորեկը, եղիպտացորենը, ապա մեր դաշտերը ծածկող խոտերի մեծ մասը և տաք տեղերում բնող բրինձն ու շաքարեղիզը:

### Շ Ա Մ Ի

Շամին տարածւած բոյս է. շատ տեղերում կազմում է նա մեծ անտառներ:


ԱՐՄԱՏՐ:—Շամին ունի գլխաւոր արմատ, որ երկարում, խորանում է հողի մէջ և ծծում խոր շերտերում եղած ջուրը: Այդպիսի արմատով նա լաւ ամրանում է նոյն իսկ փխրուն աւազային հողում և դիմանում ամենաուժեղ քամիներին անգամ: Գլխաւոր արմատից դէպի ամեն կողմ դուրս են գալիս բաղմաթիւ ճիւղեր, ուսոնքիրենց հերթին դարձեալ ճիւղաւորւում են: Շնորհիւ յդպիսի արմատների կարողանում է նա բաւարար չափով ջուր ու սննդարար նիւթեր ծծել նոյնիսկ անբերը և չոր հողից: Այդ է պատճառը, որ նա բանում է այնպիսի տեղերում, ուր ուրիշ ծառեր երբէք չէին կարող աճել:

ԲՈՒՆՆ ՈՒ ճիւղերը:—Մատաղ բունն ու ճիւղերը ծածկւած են կարմրաւուն կեղեռվ, որ յետազայում հետզհետէ դորշաւուն գոյն է ընդունում և ճեղքճեղքում: Թէ

բունը և թէ ճիւղերն ունեն իրենց մէջ առատ ճիւթ. ճէնց որ ըորեւ մաս այս կամ այն պատճառով մխաւում

3

3



### Շ Ա Մ Ի

- 1) ճիւղն իգական ծաղիկներով.
- 2) ճիւղն արական ծաղիկնչերով.
- 3) Հասունացած կոնը.
- 4) Կոնը բացւած թեփուկներով.
- 5) Թեփուկը երկու սերմնաբոզբոջներով.
- 6) Թեփուկը ներսից՝ երկու սերմներով.
- 7) Նոյնը՝ դրսից.
- 8) Ոերմի թերը.
- 9) Սերմն առանց թերի.
- 10) Թերի ներքեւի մասը.
- 11) Արական ծաղկեցունչը.
- 12) Ծաղկափոշու հատիկը.
- 13) Նրանից քիչ վերև, իգական կոնը.
- 14) Ետմու ծիլը.
- 15) Ասեղնաձեռ տեղեները, ձախ կողմում՝ միջակտութը.

է, այդ ձիւթը դուրս է գալիս և ծածկում վնասւած տեղն՝ այդպիսով վերքը փակում է և սունկերը չեն կարողանում մտնել նրա մէջ և փոռմն առաջ բերել:

Բաց տեղում աճող շամին շատ չի բարձրանում և հէնց ներքեկց արձակում է երկար ճիւղեր, իսկ անտառում, ուրիշ ծառերի արանքում, ընդհակառակը, բարձրանում է շատ բարձր, լինում է բարակ և բոլորովին զուրկ ճիւղերից, միայն վերևում կազմում է մի փոքրիկ ճիւղաւոր գագաթ: Պատճառը հասկանալի է. բաց տեղում ճիւղերն ամեն կողմից լոյս են ստանում, դրա համար էլ ազատ կերպով զարգանում են, մինչդեռ անտառում լոյս ստացում է միայն վերևից և նա ձգտում վեր, դեպի այդ լոյսը, կազմելով այնտեղ իր ճիւղաւոր գագաթը: Վերջինս այնքան խիտ է լինում, որ լոյսը չի թափանցում ներքեւ. այդ է պատճառը, որ ներքեռում եղած ճիւղերը մնալով առանց լոյսի՝ չորանում, թափում են:

Տերեւերը:—Շամու տերեւներն ասեղի նմանութիւնունեն, դրա համար էլ կոչւում են ասեղնածեւ: Նրանք նստած են ճիւղերի վրայ զորդ-զորդ: Ունեն փոքր սակերկոյթ և ծածկած են հաստ ու կոշտ պատեանով: Շնորհիւ տերեւների այդ յատկութիւնների՝ շամին շատ քիչ չուր է գոլորշիացնում, որով և կարողանում է աճել նոյն իսկ չոր աւազային տեղերում: Շամու տերեւներն ապրում են 2—3 տարի. նրանք թափում են մաս-մաս, դրա համար էլ տարւայ ամբողջ ընթացքում շամին մնում է կանաչ և կոչւում է մեսականաչ:

Ծաղիկները:—Շամին երկու տեսակ ծաղիկներ է տալիս՝ առէշաւոր և վարսանդաւոր: Մրանք գտնուում են մինոյն ծառի վրայ, դրա համար էլ շամին համարւում է միատեսքոյս: Առէշաւոր ծաղիկները կազմում են ծաղկեփնջեր: Իւրաքանչիւր ծաղկեփնջ բաղկացած է զլխաւոր ծաղկակութունից և նրա վրայ նստած բազմաթիւ դեղին գոյ-

նի առէշներից: Առէշները վերջանում են երկուական փոշանօթներով. սրանք հասունացած ժամանակ պատռուում են և ցրւում ծաղկափոշին, որ մանր, չոր և չափազանց թեթև լինելու պատճառով քամուց հեշտութեամբ տարւում է զանազան կողմեր:

Վարսանդաւոր ծաղկեփնջերը կազմում են փոքրիկ կարմրաւուն գոյնի կոներ, որոնք նստած են լինում մատաղ ընձիւղների ծայրերին. կոները բաղկացած են կարմ ծաղկակութունից և նրա վրայ նստած կարմիր մսալից թեփուկներից: Իւրաքանչիւր թեփուկի յետեւում, հիմքի մոտ գտնւում է երկու հատ մերկ սերմնաբողբոջ: Մրանք սերմնարանի մէջ չեն գտնւում: Այդպիսի սերմնաբողբոջներ ունենալու պատճառով՝ շամին կոչւում է մերկաւերմ բոյս, մինչդեռ միւս բոյսերը, որոնց սերմնաբողբոջները գտնւում են սերմնարանի մէջ, կոչւում են ծածկաւերմ: Փոշոտման ժամանակ կոնի թեփուկները բացւում են և օդի մէջ այս ու այն կողմը տարւող ծաղկեփոշին նստելով սերմնաբողբոջների վրայ՝ փոշոտում է նրանց: Շամին, ասել է, փոշոտաւում է քամու միջոցով: Որպէսզի այդ փոշոտումն ապահովէի, շամին տալիս է ահագին քանակութեամբ ծաղկափոշի:

Կոնը եւ սերմերը:—Փոշոտումից յետոյ կոների թեփուկները փակւում են և նրանց ծայրերը ծածկւում են խէժով, այնպէս որ այլևս ոչ մի բաց տեղ չի մնում: Այդ թեփուկների տակ այնուհետեւ սկսում են զարգանալ սերմերը. սրանք զարդանում են շատ դանդաղ և հասունանում են միայն տարի ու կէսից յետոյ: Այդ ժամանակաւայ ընթացքում կոներն աճում, մեծանում են, փայտանում և շատ ամրանում: Սերմերը համնելուց յետոյ, կոների թեփուկները կրկին բացւում են և նրանց արանքից սերմերը դուրս գալով թափւում են: Այդ սերմերն ու-

Նեն բարակ թևիկներ, դրա համար էլ քամին քշում տանում է նրանց հեռաւոր տեղեր:

Շամին պատկանում է ասեղնաւերեւների ընտանիքին: Այդ ընտանիքին են պատկանում նաև եղենին, սոճին, զրտենին և այլն:

### ՍՊՈՐԱՏԻԿ ԲՈՅԱՐ


Մեր անցած բոլոր բոյսերը պատկանում էին ծաղկաբեր բոյսերի կարգին. Նրանք տալիս էին ծաղիկներ, ապա սերմեր և բազմանում էին այդ սերմերով: Ծանօթանանք այժմ այն բոյսերի հետ, որոնք չեն ծաղկում, սերմեր չեն տալիս և բազմանում են առանձին տեսակի փոքրիկ հատիկների կամ, ինչպէս առում են, սպօրների միջոցով և կոչւում են անծաղիկ, կամ սպօրատու բոյսեր:

m s t c

Պատերը բանում է խոնաւ ու ստւերոտ տեղերում, մեծ մասամբ անտառներում:

Կոնդարմատը: — Պտերի ցօղունը գտնուում է հողի տակ  
և կոչւում է կոնդարմատ: Նա ծածկած է մեռած տե-  
րեների մասցորդներով, սևագորշ թեփուկներով և բազ-  
մաթիւ թելանման արմատներով: Կոճարմատը յետեից  
շարունակ մեռնում, փտում է, իսկ առջեկից՝ աճում, տա-  
լով ամեն տարի տերեների նոր փնջեր:

**Տերեւները:** — Պաերի տերևները զասաւորւում են այնպէս, որ ստացւում է մի ձագար։ Այս է պատճառը, որ ծառերի տերևների արանքով անցնող ճառագայթները լուսաւորում են նրա բոլոր տերևները հաւասար չափում։



Q s b r

Պաերի տերեւները մեծ են ու քնքոյշ։ Եւ այդ շատ հասկանալի է։ Պաերն աճում է ստերոտ ու խոնաւ տեղերում։ Սակայն, մեծ ու քնքոյշ տերեւները քամուց հեշտութեամբ կարող էին կոտրւել, պատուել։ Դրա դէմ տերեւները պաշտպանում են մի յարմարութեամբ։ Իւրաքանչիւր տերեւ բաժանւած է բազմաթիւ տերեւիկների։ Արանք իրենց հերթին նոյնպէս բաժանւում են աւելի մանրիկ տերեւների կամ մասերի։ Քամին անցնում է այդ մասերի արանքով և տերեւնն ոչ մի վնաս չի պատճառում։ Պաերի մատաղ տերեւն ոլորւած է լինում միշտ խխունջի խեցիի նման։ Այդ գրութեան մէջ հեշտութեամբ է կարողանում հողը ծակել և դուրս գալ լոյս աշխարհ, ապա նա շատ քիչ ջուր է գոլորշիացնում, ինչպէս որ թաց փալասը ծալւած վիճակում։ Մատաղ տերեւն ծածկւած է շագանակագոյն թեփուկներով։ Սրանք նոյնպէս պաշտպանում են տերեւ չորանալուց և արտաքին զանազան վտանգներից։

Սպօրանօրը.—Պաերի տերեւների ներքեկի երեսների վրայ ամառայ կէսերին նկատում են բազմաթիւ բծեր։ Սրանք սկզբում լինում են բաց կանաչաւուն, բայց յետագայում հետզհետէ սևանում են։ Այդ բծերը դասաւորւում են երկու շարքով՝ իւրաքանչիւր տերեւամասի միջին ջղի աջ և ձախ կողմերում։

Դիտելով այդ բծերը մանրագիտակով տեսնում ենք, որ նրանցից իւրաքանչիւրն ոչ այլ ինչ է, բայց եթէ առանձին ձողիկների վրայ նստած քսակների մի ամբողջ կոյտ։ Դրսից քսակների այդ կոյտը ծածկւած է մի թիթեղով, որ կոչւում է ծածկոյր։ Քսակները լցւած են բազմաթիւ մանրիկ հատիկներով, որոնք կոչւում են սպօրներ, գրա համար քսակներն էլ կոչւում են սպօրապարկեր, իսկ բծերը՝ սպօրանօրներ։

Պաերը բազմանում է սպօրների միջոցով։ Ամառայ

վերջերին, երբ սպօրանօթները հասունանում են, սպօրապարկները պատռուում են և սպօրները դուրս են թափւում։ Սպօրները փրքը են և թեթև, այդ պատճառով էլ քամուց հեշտութեամբ տարածւում են զանազան կողմեր։

Սպօրանօթները գտնւում են տերեւի ներքեկի երեսի վրա։ Այդտեղ նրանք պաշտպանուում են անձրեկից։ Կնշանակէ, նրանք էլ ծաղկի նման պաշտպանուում են զանազան վտանգներից։ Եւ այդ շատ հասկանալի է։ թէ ծաղկիկները և թէ սպօրանօթները նոյն նպատակին են ծառայում, երկուսն էլ առաջ են բերում նոր բոյսեր։

Նախածիլ։—Անտառի հողով լցւած ծաղկամանում ցանած սպօրները մի քանի օրից յետոյ սկսում են ծլել։ Նրանք առաջ են բերում սրտաձեւ տերեւիկների նման բոյսեր, որոնք ամրանում են հողի մէջ թելանման արմատներով։ Տերեւիկների նմանող այդ բոյսերը կոչւում են պտերի նախածիլ։ Նախածիլն արտաքինով բոլորովին նման չէ պտերին։ Իսկական պտերն առաջանում է յետոյ։ Եւ այդ ահա թէ ինչպէս։ Նախածիլի ներքեկի երեսի վրայ կան երկու տեսակի գործարաններ՝ սուր ծայրի մօտ գմբէթաձեւ, լայն ծայրի մօտ՝ շշաձեւ։ Գմբէթաձեւ գործարանը կատարում է ծաղկի առէների դերը, շշաձերը՝ վարսանդի։ Երբ հասունանում է գմբէթաձեւ գործարանը, նրանից դուրս են գալիս առանձին մարմնիկներ, որոնք նախածիլի ներքեսը պատող ջրի կաթիլիկների միջով լողալով գնում են դէպի շշաձեւ գործարանը։ Վերջինիս մէջ գտնւում է մի առանձին մեծ բջիջ, որ կոչւում է ձւարջի։ Երբ հասունանում է այս բջիջը, շշաձեւ գործարանի բերանը բացւում է և գմբէթաձեւ գործարանից եկող մարմնիկը մտնելով նրա մէջ՝ միանում է ձւարջին հետ։ Կատարում է, ուրեմն, ճիշտ նոյն գործողութիւնը, ինչ որ ծաղկի բեղմնաւորման ժամանակ։ Այդ միացումը կատարելուց յետոյ, նախածիլից սկսում է ա-

ռաջանալ իսկական պտերը: Սկզբում իսկական պտերը անուռում է նախածլի մէջ եղած նիւթերով, բայց յետոյ առաջ է բերում կոճղարմատ, արձակում է արմատիկներ, բացում է իր առաջին տերեխիլը և սկսում է ապրել ինքնուրոյն կերպով, իսկ նախածիլն, որ արդէն իր գերելատարել վերջացրել է, չորանում, մեռնում է:

Մեր անտառներում բնող պտերը փոքր բոյս է, բայց տաք երկրներում կան 5—6 սաժէն բարձրութիւն ունեցող պտերներ. սրանք թէպէտ ծառինմանութիւն ունին, բայց չնայած դրան, բազմանում են դարձեալ սպօրներով:

### ՄԱՄՈՒՄ

Մամուռը շատ տարածւած բոյս է: Բնում է դաշտերում, անտառներում, լեռների զագաթներին, ճահիճներում, ծառերի կեղենների և թէ հին տների պատերի ու տանիքների վրայ: Նա յաջողութեամբ դիմանում է թէ ամառւայ երկարատև երաշտներին և թէ ձմեռւայ սարսափելի ցըտերին: Այդ է պատճառը, որ ապրում է թէ տաք և թէ ցուրտ երկրներում: Հիւսիսային ցուրտ երկրները մամուռի իսկական հայրենիքն են կազմում:

Մամուռի բազմաթիւ տեսակներից ամենատարածւածը ցանցամամուն է:

Ցանցամամունի ցողունն ու սերենիերը: — Ցողունն ունի 1—4 վերշոկ բարձրութիւն և ծածկւած է մուգ կանաչաւուն նեղիկ տերեններով: Ներքեում ցողունն շագանակագոյն է և զուրկ տերեններից. այդտեղ տերենները հետզհետէ մեռնում, թափւում են, իսկ նրանց փոխարէն աճում են փոքրիկ բարակ թելիկներ, որոնք ցանցամամուռի համար արմատի գեր են կատարում: Եւ այդ հասկանալի է. ինչպէս միւս բոլոր մամուռներն, այնպէս էլ

ցանցամամուռը զուրկ է իսկական արմատներից: Ցանցամամուռի ցողունը վերկից աճում է, ներքեկից մեռնում:

Ցանցամամուռի տերեխիկները խոնաւ տեղերում սովորաբար ցողունից հեռացած են լինում, իսկ չոր տեղերում խիտ կերպով նրա վրայ նստած. վերջին ձեռվ նրանք քիչ ջուր են գոլրշիցնում: Երբ ընդհանուր թփից պոկում ենք մի հատիկ ցողուն, քիչ անցած նկատում ենք, որ նրա տերեները նստում են ցողունի վրայ, իսկ երբ նրա ծայրը մտցնում ենք ջրի մէջ, տերենները կրկին իրենց առաջւայ դիմանում: Ցանցամամուռը դիմանում է երկարատև ու ուժեղ երաշտների: Երբեմն չորանում է այնքան, որ հեշտութեամբ կարող է փըշըւել, փոշի դառնալ, բայց նոյն իսկ այդ վիճակում, երբ նրա վրայ ջուր ենք սրսկում, նա կրկին կեանք է ըստանում: Չմեռը նրա տերենները չեն թափւում, Նա մշտականաչ բազմամեայ բոյս է:

Բազմացումը: — Ցանցամամուռը բազմանում է սպօրներով: Ամառայ կիսերին ցանցամամուռի վրայ երեսում են բարակ կարմրաւուն թելիկներ, որոնք վերջանում են փոքրիկ տուփերով՝ ծածկ ծածկւած դեղին մազմզուտ ծածկոցներով: Հեռացներով այս ծածկոցները՝ տակը տեսնում ենք կափարիչներով ծածկւած տուփեր՝ լցւած մանրիկ սպօրներով: Նշանակում է, այդ տուփերը ցան-




Ցանցամամուռ.


ցամամուռի սպօրանօթներն են: Երբ սպօրները հասնում  
են, ընկնում են տուփերի ծածկոցները, ապա կափարիչ-  
ները և սպօրները քամու միջոցով  
տարւում են զանազան կողմեր.  
Ընկնելով խոնաւ հողի վրայ՝ սը-  
պօրները ծլում են և առաջ բե-  
րում նախածլեր: Սրանք նման են  
են կանաչ թելերի և տարածւելով  
գետնի վրայ՝ մի տեսակ ցանց են  
կազմում, որի համար էլ մամու-  
ռի այդ տեսակը կոչւում է ցան-  
ցամամուռ: Թելիկների ներքեի ե-  
րեսից դուրս են զալիս փոքրիկ  
բարակ մազեր, որոնցով նրանք  
ամրանում են հողում. իսկ վերևի  
երեսի վրայ տեղատեղ դուրս են  
գալիս բողբոջների նմանող ու-  
ռոյցներ, որոնք շուտով զարգա-  
նում են և առաջ բերում ցանցա-  
մամուռի ցօղուններ:

1) Տուփեկը ծածկոցով. 2) Տու-  
փեկը կափարիչով. 3) Տուփեկը  
առանց կափարիչի. Սպօրները  
ցրւում են:

Մամուռների նօանակուրիւ-  
նը:—Մամուռը, ինչպէս տե-  
սանք, աճում է ամեն տեղ: Ճահճում ապրող մամու-  
ռի ցօղունների ներքեի մասերը մեռնելով կտրւում են և  
կնում դէպի ցած, ճահճի յատակը: Այդաեղ շերտերով  
դարսում են նրանք իրար վրայ, խառնում աղմի հետ և  
առաջ բերում մի նիւթ, որ կոչւում է օրֆ: Վերջինիս  
մէջ երեմն պարզ կերպով երեսում են մամուռի հետքե-  
րը: Տորփը շատ լաւ այրւում է, այդ պատճառով էլ գործ  
է ածւում որպէս վառելանիւթ:



1.




2.

Տուփեկը.

1) Տուփեկը ծածկոցով. 2) Տու-  
փեկը կափարիչով. 3) Տուփեկը  
առանց կափարիչի. Սպօրները  
ցրւում են:

Մամուռն աճում է նաև մերկ ժայռերի վրայ. այդ-  
տեղ նա յաճախ ծածկւում է  
ահազին տարածութիւններ:  
Մեռնելով և փուելով այդ  
ժայռերի վրայ առաջ է բե-  
րում փափուկ հողի մի բա-  
րակ շերտ, որ գնալով հե-  
տզհետէ հաստանում է: Հո-  
ղային շերտի հաստանալուն  
օգնում է նաև այն հանգա-  
մանքը, որ քամու բերած  
փոշու մամնիկները ընկնելով  
մամուռի տերեթիկների արան-  
քը՝ մնում են այնտեղ և այլ  
ևս չեն հեռանում: Այսպիսով  
ժայռերը ծածկւում են հողի  
մի այնպիսի շերտով, որի վրայ այնուհետև աճում է նաև  
այլ բոյսեր: Կնշանակէ, մամուռի շնորհիւ մերկ ժայռերը  
ծածկւում են բուսականութեամբ:




Յանցամամուռի նախածիլը.

ա) Սպօրը, որից առաջացել է նախա-  
ծիլը. բ) գ) Բողբոջները, որոնցից  
առաջանալում են ցանցամամուռի ցո-  
ղունները:

## Զ Ր Ի Մ Ո Ւ Ռ Ն Ե Ր

Կազմութիւնը:—Գետերում, ճահճներում, լճերում  
և ծովերում ապրում են կանաչ թելերի նմանող մի տե-  
սակ բոյսեր, որոնք կամ աղատ կերպով լողում են ջրի  
մէջ և կամ իրենց մի ծայրով կպած են լինում որևէ է  
ամուր մարմնի՝ քարի, փայտի և այլն: Այդ բոյսերը կոչ-  
ւում են ջրիմուներ: Սրանք չափազանց նուրբ կազմու-  
թիւն ունեն: Ջրից հանած ժամանակ նրանք իրենց գիրքը  
չեն կարողանում պահպանել, սակայն այդ նրանց համար  
ոչ մի նշանակութիւն չունի, որովհետև նրանք ջրում են  
ապրում և ջուրը պահպանում է նրանց դիրքը: Դիտելով

մանրադիտակով ջրիմուռը՝ նկատում ենք, որ նա զուրկէ է արմատից, ցողունից և տերևներից և բաղկացած է մի-



Զ ր ի մ ու ռ

Ա) Ջրիմուռը. Բ) Նրա մի փոքրիկ մասը (մեծացրած). ա) Բջիջը.  
շ) Բջիջն առանձին. 1 և 2) Միկրոկը. 3) Օոլոյի հատիկը. 4) Քլորօ-  
ֆիլի հատիկ. դ) Բջիջի կենուկը. ե) Սպորը.

այն իրար յետեկից շարւած բջիջներից. Կան ջրիմուռներ,

որոնց ամբողջ մարմինը բաղկացած է միայն մի հատիկ բջիջից. Դրանք, ի հարկէ, չափազանց փոքր են լինում. բայց կան և այնպիսիները, որոնք բաղկացած են անթիւ բջիջներից և իրենց մեծութեամբ յետ չեն մնում ցամաքային նոյն խոկ ամենամեծ բոյսերից։ Այս վերջին տեսակի ջրիմուռներն ապրում են մեծ ծովերում ու ովկիանոսներում։

Բազմացումը։—Ջրիմուռը բազմանում է սպորներով և կիսւելով։ Սպորներն առաջանում են թելերի ծայրերին գտնուող բջիջներում։ Նրանք ունեն երկու հատ բարակ թելիկներ, որոնց միջոցով շարժւում են ջրի մէջ և որոշ ժամանակից յետոյ կանդ առնելով՝ առաջ են բերում առանձին-առանձին ջրիմուռներ։ Ջրիմուռը բազմանում է նաև կիսւելով. դրա համար բջիջի երկու կողմերում առաջանում են փոսեր, որոնք հետզհետէ խորանալով՝ վերջը բջիջը բաժանում են երկու մասի. սրանցից իւրաքանչիւրն այնուհետև աճում, մեծանում է և իր հերթին կըրկին բաժանում։

Ջրիմուռների նեանակութիւնը։—Կենդանիներն իւրեաց գոյութիւնը պահպանում են կենդանական և բուսական նիւթերով։ Այն կենդանիները, որ կեր են գառնում ուրիշ կենդանիների, մնում են միայն բոյսերով, ուրեմն, վերջ ի վերջոյ բոլոր կենդանիներն իրենց կեանքը հիմնում են բոյսերի վրայ։ Ջրիմուռները ջրային բոյսերի մէջ առաջին տեղն են բռնում. կնշանակէ, նրանք ջրային կենդանիների կեանքի դիմաւոր աղբիւրն են կազմում։

Եթէ ջրով լիքն ամանի մէջ զցենք մի քանի ջրիմուռ և դնենք արևի տակ, կտեսնենք, որ նրանցից բարձրանում են փոքրիկ պղպջակներ։ Այս պղպջակներով հեռացող գաղը, եթէ հաւաքենք և մէջը մտցնենք մի այրւող փայտիկ, վերջինս խոկոյն կբոցավառի։ Առ արդէն նշան

է, որ ջրիմուռներից բարձրացող գաղը թթւածին է: Աւ-  
րեմ, ջրիմուռները տալիս են ջրային կենդանիներին  
թթւածին, որ անհրաժեշտ է նրանց շնչառութեան հո-  
մար:

Մի այլ փոքր ևս: Եթէ այդ անօթի մէջ, որտեղ գը-  
տնուում են ջրիմուռները, զցենք մի քիչ նեխուող կենդա-  
նական նիւթ, որոշ ժամանակից յետոյ կտեսնենք, որ այդ  
նիւթը անհետանում է և ջրից այլես հոտ չի գալիս: Պարզ  
է, որ ջրիմուռներն այդ նիւթը գործադրում են իրենց հա-  
մար իրեւ սունդ: Զրում ամեն օր ահագին թւով կեն-  
դանիներ են մեռնում, և եթէ զրանց մարմինների նե-  
խումից ջրերը չեն ապականուում, պատճառը ջրիմուռներն  
են, որոնք շարունակ մաքրում են ջուրը: Առանց ջրի-  
մուռների՝ ծովերում ու ովկիանուուներում կենդանական  
կեանք չեր կարող լինել:

## ՇԱՄՊԻՆՈՆ

Շամպինիոնը գուրս է գալիս գետնից ամառը կամ  
աշնանը մարգագետիններում և գաշտերում, զլխաւորապէս  
ճանապարհների մօտերքը: Նա նման է հովանոցի և բաղ-  
կացած է կոթից ու զլխագրից: Գլխագրի ներքեփ երեսի  
վրայ կամ բազմաթիւ թիթեղիկներ, որոնք գուրս են գա-  
լիս կոթի մօտից և զնում են դէպի զլխագրի եղբերը:  
Սրանք սկզբում վարդագոյն են լինում, բայց յետոյ մը-  
գում են և վերջն էլ սևանում: Այդ գոյնով շամպինիոնը գա-  
նազանուում է միւս սունկերից:

Գետնից գուրս եկող շամպինիոնը նման է լինում  
փոքրիկ գնդի, բայց յետոյ, երբ մեծանում է, նրա վրայ  
հետզետէ նկատելի են դառնում կոթն ու զլխագրիը:  
Թիթեղիկները զլխագրի տակ դեռ չեն երևում. նրանք  
ծածկւած են մի թաղանթով, որ մի եզրով կպած է կո-

թին, մէւսով՝ զլխագրի ծայրին: Այդ թաղանթի տակ թի-  
թեղիկները պաշտպանուում են զանազան վտանգներից: Երբ  
շամպինիոնը հասնուած է, թաղանթը պատռուում է և թի-  
թեղիները բացւում են:

Եթէ զիտենք մանրագիտակով թիթեղիկները, կտես-  
նենք նրանց վրայ բազմաթիւ թեղիկներ, որոնցից իւրա-  
7



Շամպինոնի զարգացումը:

Հողի մէջ գանուում են թելերը. 1—3 և 7) Շամպինիոնը զրսից. 4—6) Շամ-  
պինիոնը երկայնութեամբ կտրւած:


Քանչիւրն ունի իր վրայ երկու հատ սպօր: Երբ հասնում  
են այդ սպօրները, պոկւում են թելիկներից և քամու  
միջոցով տարւում զանազան կողմեր: Քամին, իհարկէ,  
շատ անգամ սպօրներն ածում է այնպիսի տեղեր, ուր  
նրանք երբէք աճել չեն կարող: Հէնց այդ է պատճառը,  
որ շամպինիոնը վերցնում է անթիւ անհամար թւով ու-

պօրներ: Եթէ գլխազըի ներքեսի երեսը հարթ լինէր, այդքան շատ սպօրներ իր վրայ չէր կարող տեղաւորել. դրա համար էլ առաջացել են թիթեղիկները, որոնք չափից դուրս մեծացնում են նրա մակերևոյթը: Բամուց կարող են տարւել միայն չոր սպօրները և այս պատճառը, որ նրանք գտնում են գլխազըի ներքեսի երեսի վրայ, որտեղ նրանք պաշտպանւած են անձրեից:

Եթէ քանդենք շամպինիոնի տակի հողը, կաեմնենք այնտեղ սպիտակ թելեր, որոնք այս ու այն կողմը տարածւելով՝ մի ամբողջ ցանց են կազմում: Շամպինիոնը կպած է այդ թելերին: Շամպինիոնն ու այդ թելերը նոյն բոյսի տարբեր մասերն են: Երբ հողի տակ գտնուզ այդ թելերը համառում են որոշ մեծութեան, նրանց վրայ դուրս են գալիս սունկեր, որոնք սպօրներ տալով՝ մեռնում են, բայց շուտով դուրս են գալիս նորերը և այդպէս շարունակ: Հողի տակ գտնուած թելերն, ուրեմն, նրաման են պաղատու ծառերին, իսկ «սունկերը» նրանց պառուղներին: Կնշանակէ, իսկական բոյսը հէնց այդ թելերն են, իսկ այն, ինչ մենք սունկ ենք ասում, նրա սպօրանօթն է, որ սպօրները ցրելու համար դուրս է գալիս գետնի երեսը:

Շամպինիոնի թէ թելերը և թէ սպօրանօթը զուրկ են քլորօֆիլի հատիկներից. դրա համար էլ օդի և հողի մէջ գտնուած նիւթերից նրանք ինքնուրոյն կերպով սընունդ չեն կարող պատրաստել: Նրանք սնուռում են միայն պատրաստի նիւթերով: Այդ է պատճառը, որ նրանք առաւմ են միայն այնպիսի տեղերում, ուր կան վառող զանազան մարմիններ: Շամպինիոնը մարդիկ գործ են ածում կերակրի մէջ: Գործածական են նաև մի շարք այլ սունկեր ևս: Սակայն, կան բազմաթիւ թունաւոր սունկեր, որոնց գործածութիւնը կարող է ոչ միայն ծանր հիւանդութիւններ, այլ և նոյն իսկ մահ առաջ բերել:

Բորբու:—Մութ, խոնաւ, տաք և թարմ օդից զուրկ տեղում փափուկ հացը, քաղցրաւենիրը և այլն ծածկւում են մի բարակ սպիտակ խաւով կամ, ինչպէս ասում են, բորբոսնում են: Բորբոսում առաջանում է բորբու կոչւող բոյսից: Սա նոյնպէս սունկ է: Մանրազիտակի տակի տակ դիտելով բորբոսը՝ նկատում ենք, որ նա ևս շամպինիոնի նման ունի ճիւղաւորւած թելեր: Այդ թելերի վրայ տեղադրեած բարձրանում են գլխիկներով վերջացող ձողիկներ: Գըլիկիները լցւած են ձւաձն սպօրներով, ուրեմն, զըլրանը բորբոսի սպօրանօթը՝ 1) թելեկների ցանցըն սպօրանօթները. 2) Տպօրանօթը՝ սպօրներով (մեծացրած) ներն են: Երբ վերջիններս հասունանում են, պատռում են և ցրւում սպօրները: Սպօրները փոքր են, թիթե և չոր, դրա համար էլ քամուց տարւում են զանազան կողմեր: Օդը լիքն է այդպիսի սպօրներով: Այդ է պատճառը որ մութ ու խոնաւ տեղում դրած մթերքները շուտով ծածկւում են բորբոսով:



## ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ

Մեծութիւնն ու ձեւը:—Բակտերիաներն աշխարհիս վրայ ամենափոքրիկ էակներն են. նրանց կարելի է տեսնել միմիայն մանրազիտակով, այն ևս մի քանի հարիւր, երբեմն նոյն իսկ մի քանի հազար անգամ մեծացնելուց յիտոյ: Եթէ 50,070 հատ բակտերեաներ, իրենց երկայնութեամբ շարենք մէկը միւսի յետեկոց հազիւ թէ մի



վերշոկ տեղ բռնեն։ Նրանք ունեն շատ հասարակ կազմութիւն։ Իւրաքանչիւր բակտերիա պրոտոպլազմայի մի փոքրիկ մասնիկ է՝ քջապատւած բարակ թաղանթով։ ուրեմն, բակտերիայի մարմինը բաղկացած է մի հատիկ բջիջից։ Բակտերիաներն ունեն տարբեր ձևեր։ Նրանց մի մասն ունի գնդի ձև, միւսը՝ ձողիկի, երրորդն էլ՝ ոլորուն թելիկի ձև և այլն։

Բազմացումը։—Բակտերիաները բազմանում են բաժանման միջոցով։ Երբ հասնում են նրանք իրենց կատարեալ մեծութեան, մէջտեղից կիսւում են և դառնում երկուսը։ Արանք մեծանալով, իրենց հերթին դարձեալ կիսւում են և այդպէս շարունակ։ Նպաստաւոր պայմաններում, այսինքն երբ կայ սնունդ, տարբութիւն և խոնաւութիւն, բակտերիաները բազմանում են շատ արագ կերպով։ Այդպիսի պայմաններում մի օրւայ մէջ մի հատ բակտերիայից կարող են առաջանալ հազարաւորներ, իսկ երբ պայմաններն աննպաստ են, այսինքն երբ ոչ տաքութիւն կայ, ոչ խոնաւութիւն և ոչ էլ սնունդ նրանց համար, այս ժամանակ նրանք ոչ միայն այլևս չեն բազմանում, այլ և ծածկում են ամուր թաղանթով և առանց որևէ էկեանքի նշան ցոյց տալու մնաւմ են ամբողջ տարիներ։ Այս վիճակի մէջ գտնուող բակտերիաներն ընկնելով յարմար տեղեր կը կին կեանք են ստանում և սկսում բազմանալ

Բակտերիաները դուրկ են քլորօֆիլից, դրա համար էլ մնաւմ են սունկերի նման պատրաստի սննդաբար նիւթերով։

Նեխումն առաջ բերող բակտերիաներ։—Բոլոր գործարանական մարմինների նեխումը կամ վատումն առաջ են բերում բակտերիաները։ Արանք մանելով մեռած կենդանիների և բոյսերի մարմինների մէջ՝ արագ կերպով բազմանում են և սնւելով նրանց մէջ գտնուած նիւթերով

բայցայում են այդ նիւթերը և այդպիսով առաջ բերում նեխումն։ Որ նեխումն իսկապէս բակտերիաներն են առաջացնում, հաստատում է հետևեալ փորձով։ Վերցնենք երկու անօթ, լըցնենք ջրով և երկուսի մէջ էլ զըցենք մսի կտորներ։ Այնուհետև մէկը թողնենք այնպէս, ինչպէս եղել է, միւսը՝ լաւ եփ տանք և իսկոյն բերանը 1) Քայախի բակտերիաներ,  
Փակենք։ Մի քա-  
2) Կաթի բակտերիաներ.



Նի օր անցած՝ կտեսնենք, որ առաջինի մէջ ջուրը հոտել է, իսկ միւսի մէջ մնացել է նոյնը, ինչպէս փորձի սկզբում եղել է։ Լաւ եփ տալով և անօթների մէջ անմիջապէս փակելով՝ փտող նիւթերը կարելի է պահել նոյն իսկ տարիներ։ Պատճառը հասկանալի է։ Եփ տալով մենք սպանում ենք նիւթի մէջ եղած բակտերիաները, իսկ փակելով՝ թոյլ չենք տալիս, որ դրսից նորերը մտնեն ներս։ Բաց անօթի մէջ, սակայն, բակտերիաներն արագ կերպով բազմանում են և առաջ բերում նեխումն։ Եթէ չինէին բակտերիաները, կնշանակէ, բնութեան մէջ տեղի չէր ունենայ նեխումն։ Սրա հետևանքը կլինէր այն, որ մեռած կենդանիների ու բոյսերի մարմինները կմնային անփոփոխ վիճակի մէջ և կարճ ժամանակի ընթացքում աշխարհս կցւէր կենդանիների և բոյսերի զիակ ներով։ Շարժումն այդ ժամանակ աշխարհում անհնարին կդառնար։ Բայց այդ դեռ բոլորը չեն։ Նեխելով մարմինները՝ նրանք քայլայում են նիւթերը և փոխարկում աւելի պարզ նիւթերի, այն է՝ օդի, ջրի և հողի, այսինքն այն։

պիսի նիւթերի, որոնցից յետոյ բոյսերը՝ կարող են սնունդ ստանալ: Ուրեմն, նեխման միջոցով բնութեան մէջ կատարում է նիւթերի շրջանառութիւն, որով և պահպան ւում է կեանքը:

Կատարենք և մի այլ փորձ: Վերցնենք երկու շիշ, երկուսն էլ լցնենք գինով, մէկը թողնենք բաց, իսկ միւսն եփ տանք և բերանը պինդ փակենք: Որոշ ժամանակից յետոյ բաց շշի գինին կսկսի թթւել, քացախել, մինչզեռ միւսի մէջ՝ կմայ անփոփոխ նոյնիսկ տարիների ընթացքում: Պատճառը դարձեալ բակտերիաներն են: Բակտերիաների միջոցով են թթւում կաթը, վարունգը, կաղամբը և այլն, կնշանակէ, բակտերիաներն ոչ միայն նեխումն են առաջ բերում, այլ և թթւումն կամ խմորումն:

Մակարոյծ բակտերիաներ: — Կան բակտերիաներ, որ ապրում են կեանք ունեցող մարմինների մէջ, այդպիսի ները կոչւում են մակարոյծ բակտերիաներ: Սրանք մըտ նելով կենդանիների կամ մարդու մարմինը՝ արագ կերպով բազմանում են և առաջ բերում բազմազան հիւանդութիւններ: Թոքախտը, որից իւրաքանչիւր տարի ահազին թւով մարդիկ են մեռնում, առաջանում է ծողիկի ձև ունեցող մի տեսակ բակտերիայից. Երեխաների շրջանում տարածւած գիֆտերիտն ևս ծողիկի ձև ունեցող բակտերիայի մի տեսակի զործ է, որ նոյնպէս ծողիկի ձև ունի, բայց երկու անգամ աւելի հաստ է, քան թոքախտինը: Բակտերիաներն են առաջ բերում և խոլերան, չուման ու սրանց նման սարսափելի հիւանդութիւնները, որոնք մէկ մէկ երևալով՝ ահազին թւով մարդկային զոհեր են տանում: Կենդանիների մէջ տարածւած վարակիչ հիւանդութիւններն ևս բակտերիաներն են առաջ բերում:



3985

3p

2013

«Ազգային գրադարան



NL0070109

